

Հրատարակութիւն թիֆլիզի ընկ. Հայ. Գրք. Հրատ.

№ 50

Ժ Ո Ղ Ո Վ Ր Գ Ը Գ Ի Ը Կ Ը Ն Ն Ի Ի Թ Ե Ր

Գ Լ Բ Գ Ե.

Ս Ա Ս Մ Ա Յ Ծ Ռ Ե Ր

Ս Ա Ս ՈՒՆՅԻ Գ Ը Ի Ի Թ

Ճողովորդական վեպի նրկոս նոր վարիանտներ

(Աբարանի և Մոկաց բարբառներով)

Գրի առաւ

Գ Ը Բ Ե Գ Ի Ն Ս Ը Բ Կ Ը Ի Ը Գ


Թ Ի Փ Լ Ի Ս

Տպարան Մ. Շարանկի. | Тип. М. Шарадзе.

1892

Углы
738

Дозволено ценз. Тифлисъ, 2-го Мая 1892 г.
Типографія М. Шарадзе, Николаевская ул., 21.



Յ Ե Ռ Ը Ջ Ե Բ Ը Ն

Ներդրական ազգերի գրականութեան մէջ ժողովրդական բանասիրութիւնը նշանաւոր տեղ է բռնում. նորա՝ իբրև քաղաքակրթութեան աւելի բարձր աստիճանի ազգեր՝ շուտ կարողացան բմբռնել ժողովրդական բանասիրութեան արժէքը, ուստի և ոչ մի ջանք չհնայեցին կատարելագէտ ուսումնասիրելու այդ առարկան և օգտաւէտ գիտութիւնների շարքը դասելու:

Անցեալ դարու վերջերից արդէն ժողովրդական բանասիրութիւնը գիտնական աշխարհի զբաղման և հետաքրքրութեան նիւթ դարձաւ. ոչ միայն անհատներ, այլ և ընկերութիւններ անգամ կազմուեցան ժողովրդական կեանքի և մասնաւորապէս անդիր բանասիրութեան ուսումնասիրութեամբ զբաղուելու համար: Գրիմ եղբայրների և նոցա հետևողների ջանքերով ժողովրդական բանասիրութիւնը արհամարհանքի աստիճանից լուրջ գիտութիւնների կարգը բարձրացաւ:

Ժողովրդական բանասիրութիւնը ¹⁾ գրականութեան մի ճիւղն է, երկուսն էլ մարդկային մտքի, զարգացման և երևակայութեան արդիւնք. միայն մէկը անհատի, միւսը բաղմութեան ստեղծագործութիւն է. մէկի մէջ երևում է բանաստեղծի անձնաւորութիւնը, միւսի մէջ ժողովրդի հոգեկան դրոշմը:

Ժողովրդական կեանքի և գաղափարների բնական արտացոլումն է բանասիրութիւնը, որ իւր պարզ և անպաճոյճ ձևերով, ներքին և արտաքին ներդաշնակութեամբ, բարձր գաղափարներով և ազնիւ զգացումներով նշանաւոր տեղ է բռնում գեղարուես-

¹⁾ Բանասիրութիւնն գործ ենք ամուսնացնել ժողովրդական անդիր գրականութեան նշանակութեամբ:

տական գրականութեան մէջ: Թողովրդական բանահիւսութիւնը ժողովրդի կենդանի ոգու արտագրութիւնն է: Ինչ զգացել է ժողովուրդը, ինչ լեւադրել է նորա առողջ բանականութիւնը, այն էլ գրոջմուած է նորա բանահիւսութեան մէջ ճիշտ այնպէս, ինչպէս լուսանկար մեքենայի ապակու վերայ դրոջմուած է պատկերը: Կեղծիքը անհատի գործ է. բաղմութեան մի երկ, որ անցել է ժողովրդի հոգւոյ ամենամանր խորշերից, ստութիւն, կեղծիք բովանդակել չի կարող. կարդալով ժողովրդական որևէ երկ, ընթերցողը խեղճ ըմբռնում է նորա հայեացքը նկարագրուած իրողութեան կամ անձնաւորութեան մասին: Թողովրդական բանահիւսութեան մէջ ստութիւնը, անարդարութիւնը երբէք ծածկուած չենք անսնում, այլ միշտ ընկճուած կամ հակակրութեամբ դատապարտուած ¹⁾:

Թողովրդական բանահիւսութիւնը հարուստ է և իւր վսեմ գաղափարներով: Բանահիւսութեան մէջ են արտայայտուած ժողովրդի գերակայ գաղափարները և շատ անգամ զուտ գեղարուեստական ձևով: Անձնազօհութեան, բարոյականութեան, մարուր սիրոյ, ամուսնական հաւատարմութեան, ազնուութեան, քաջութեան և այլ այսպիսի բարձր ու վսեմ գաղափարների ընթերցողը ամեն քայլափոխում պատահում է բանահիւսութեան մէջ: Այսպիսի գաղափարներ և զգացումներ՝ մարմնացած ժողովրդական հերոսների անձնաւորութեամբ՝ ժողովրդական բանահիւսութեան ակնյայտնի առաւելութիւններն են կազմում:

Բանահիւսութիւնը իւր զաղափարական կողմերով, գեղարուեստական և անպաճոյճ ձևերով, պարզ բովանդակութեամբ միանգամայն հասկանալի է ժողովրդին, ուստի և թանկագին նորահամար. բանահիւսութեամբ է նա կազմակերպում իւր մտաւոր և բարոյական էութիւնը, բանահիւսութեամբ է առաջնորդուում դէպք գաղափարական և գեղասիրական աշխարհը: Անհատը՝ իւր սիրած ժողովրդական երգը երգելով, առած կամ առակ ասելով՝ արտա-

¹⁾ Թ. Буслевъ-ի Историческіе Очерки Русской Народной Словесности и Искусства.

յայտում է իւր սեպհական հայեացքներն ու համոզումները, իւր սեպհական հոգւոյ վիճակը, որովհետեւ ժողովրդական ստեղծագործութիւնը և՛ անհատի և՛ բաղձութեան ներքին աշխարհի յայտարարն է: Ժողովուրդը բանահիւսութեան մէջ պատրաստ նիւթ և ձև է գտնում իւր ներքինը արտայայտելու և հոգեկան պիտոյքներին գոհացում տալու¹⁾: Մենք ականատես ենք եղել թէ ինչ տպաւորութիւն է թողնում ժողովրդական վէպը ունկնդիրների վերայ և ինչպիսի ոգևորութեամբ է պատմում պատմողը. հանձարեղ բարոյիչն անգամ հազիւ կարողանայ այն քաղցր տպաւորութիւնը թողնել այն հանդիստ խորհրդածութիւնները առաջացնել ունկնդիրների մէջ, ինչպէս ժողովրդական վէպի լաւ պատմողը: Ժողովրդական վէպը վառում է ունկնդիրների ազգասիրական զգացումները, ոգևորում է նոցա առաքինութեան յաղթանակներով զարթեցնում է նոցա մէջ բոլոր այն բարձր կողմերը, որ պատկերացրած է հերոսների անձնաւորութիւնների մէջ: Այժմ հասկանալի պիտի լինի, թէ ինչու Հոմերոսի ստեղծագործութիւնները այնքան յարգի էին հին Յոյների մէջ: Ելիականը Յոյնի համար և պատմութիւն էր և դիցարանութիւն և բարոյական սկզբունքների աղբիւր. իսկ Ելիականը ոչ այլ ինչ էր, եթէ ոչ Յոյն ժողովրդի անզիր ըսնահիստութեան մի գեղեցիկ արձան, որի մէջ այնքան հրաշալի կերպով մարմնացած էին Յոյնի կատարելութիւնները: Ռուստեմը, Զոհրաբը հին Պարսկի հոգեկան մրցման ներկայացուցիչներն են, հին Պարսկի վսեմ ձգտումների և կրօնական հայեացքների մարմնացումը: Ռոլանդը աւպետ Փրանսիացու ազնուութեան, հայրենասիրութեան, հաւատարմութեան և քաջութեան կատարելատիպն է. Խանդուկ Խաթունն ու Մարգարիտը Հայ կնոջ հաւատարմութեան և ընտանեկան կեանքի մարբութեան նշանարաններն են:

Ոչ սակաւ նշանակութիւն ունին ժողովրդի համար և աւանդութիւնները. դորա նորա սրբութիւններն են, որ սերունդէ սե-

¹⁾ Буслаевъ-ի Истор. Очерки.

րունդ պահպանում է իւր յիշողութեան մէջ դորա անցեալ կեանքի փշրանքներն են՝ կապուած այս կամ այն եղելութեան հետ: Աւանդութիւնները զարթեցնում են ժողովրդի մէջ կրօնական, հայրենասիրական և այլ վեհ զգացմունքներ, որովհետև կազմուած են այնպիսի անձնաւորութիւնների և կամ վայրերի մասին, որ սրբացած են ժողովրդի համար: Իրաւամբ, ուրեմն, աւանդութեան վերայ կարելի է նայել իբրև ազգայնութեան որոշիչ մի տարրի վերայ:

Գրականութեան պատմութեան ուսումնասիրութիւնը պարզում է բանահիւստութեան մեծ նշանակութիւնը նաև գրականութեան համար, որի տեսակները ժողովրդական բանահիւստութիւնից են առել իրենց ծագումը: Յունաց մատենագրութեան ուսումնասիրութիւնը անհրաժեշտ է փաստ է տալիս դորա համար. գրամայի, քնարերգութեան, վիպասանութեան սաղմերը ժողովրդական վիպից են հետզհետէ զարգացել և ինքնուրոյնութիւն ստացել¹⁾: Գրականութեան պատմութեան և գեղասիրական տեսութիւնների ուսումնասիրութիւնը մեծ կապ ունի ժողովրդական բանահիւստութեան հետ. տեսութիւնը գեղարուեստական երկերից պէտք է հանել իսկ Իլիականը, Նիբելունգների երգը, Փրանսիական Chansons de Roland-ը, սերբիական գիւցաղնական երգերը ժողովրդական վիպական բանահիւստութեան յաւանական կոթողներն են: Նշանաւոր բանաստեղծներ օգտուել են ժողովրդական նիւթերից իրենց երկերը ստեղծելու համար. Շեկսպիրն իւր գլուխ-գործոց Համլետը զանիական աւանդութիւններից ստեղծեց:

Ե. յայէս տեսնում ենք, որ բանահիւստութիւնն էլ՝ իբրև մարդկային մարի, զարգացման և երևակայութեան արդիւնք, իբրև գեղարուեստական ստեղծագործութիւն, արժանի է ուշագրութեան:

Բացի սորանից՝ բանահիւստութիւնը իբրև պատկեր ժողովրդական կեանքի, պատմութեան ուսումնասիրութեան աղբիւրներից մէկն է համարուում. իրաւամբ Վեսելովսկին, խօսելով ժողովրդական բանահիւստութեան մասին, յայտնում է այն միտքը թէ՛

¹⁾ Корнѣ І.

ժողովրդական բանաստեղծական գրականութեամբ կարելի է պատմութիւն գրել¹⁾: Բանասիրութիւնը ժողովրդական կեանքի հայելին է, որի մէջ անդրադարձել է ժողովրդական կեանքը իւր էութեամբ: Նշանաւոր է այդ կողմից մանաւանդ ժողովրդական վէպը, որ թէ անցեալի և թէ ներկայի պատմութեան աղբիւր է: Վէպը դարերի ընթացքում թէև փոփոխուած է, բայց և պահպանուած է անցեալ դարերի դրոշմը, ուստի և գտնուած են շատ անգամ հրնութեան հետքեր, որոնց ուսումնասիրութիւնը լուսարանուած է պատմական այս կամ այն հարցը: Ժողովրդական վէպի թեթև ուսուցանասիրութիւնն իսկ մեզ տանուած է պատմութեան միջին և աւելի հեռու շրջանները: Վէպի մէջ երևում է պատմական կեանքի զարգացման աստիճանները, ժողովրդի առօրեայ զբաղմունքները, հաւատալիքները, սնտախաղաղութիւնը: Վէպի մէջ ենք սենում անհատի կեանքի փոփոխութիւնները՝ ծննդեան օրերից մինչև գերեզման իջնելը: Վէպով կամ այլ ստեղծագործութիւններով կարելի է չափել ժողովրդի հոգեկան զարգացման աստիճանը, որովհետև այնտեղ են ամփոփուած նորա պատմութեան, բարոյականութեան, կեանքի փոփոխությունն սաղմերն ու եզրակացութիւնները:

Պատմական երևոյթների այս կամ այն ուղղութիւն ստանալը մեծ կախումն ունի ժողովրդական տարրից, ուրեմն երևոյթը հասկանալու համար ուսումնասիրութեան առարկայ պիտի դարձնենք և հասարակ ժողովուրդը: Պատմութիւնը ազգի քաղաքակրթութեան աստիճանարար զարգացումն է նկարագրում, իսկ առանց ժողովրդի ծանօթութեան անկարող ենք իմանալ, թէ ի՞նչ յառաջադիմութիւն է արել քաղաքակրթութիւնը ամբողջութեան մէջ, որի հիմքը հասարակ ժողովուրդն է: Ծանօթանալով ժողովրդի առօրեայ կեանքի, նիստ ու կացի, սովորութիւնների, կրօնական-բարոյական գաղափարների և այլ հայեացքների հետ՝ ընդունակ կրիինքնորոշելու ժողովրդի հոգեկան զարգացման աստիճանը:

¹⁾ Изъ Исторіи романа и повѣсти—Сборникъ отдѣленія русск. языка и словесн. Имп. Акад. Наукъ.

Բանահիւսութիւնը պատմութեան ազբիւր է ոչ միայն իւր բովանդակութեամբ, այլ և լեզուի կողմից. շատ անգամ բարբառներում պատահում են այնպիսի բառեր և դարձուածներ, որ խորին հնութեան հետքեր են բովանդակում իրենց մէջ: Մեր Երկրի բնական և քաղաքական հանգամանքները բազմաթիւ բարբառներ են ստեղծել, որոնք, մի ընդհանուր ծագում ունենալով հանդերձ, ունին և այնպիսի առանձնութիւններ, որ ուսումնասիրութեան անհրաժեշտ նիւթ պիտի լինին: Այստեղեան և Պատկանեան ցոյց են տուել բարբառների հնութիւնն ու անկախութիւնը գրաբարից և նոյն իսկ նոցա ազդեցութիւնը գրաբարի վերայ, բայց բարբառների իսկական արժէքը այն է, որ դժբա ազբիւր են նոր լեզուն հարստացնելու և կանոնաւորելու համար. բարբառների բազմազանութիւնը լեզուի ապագայ զարգացման գրաւականն է, իսկ գրական լեզուի զարգացումը ազգայնութեան մտաւոր և բարոյական յառաջագիւտութեան խթանները: Օտար ազդեցութիւնների ստրուկ լեզուն, օտար դարձուածներով և բառերով սլլանդակուած լեզուն անկարող է ծառայել իւր բարձր կոչմանը, — միութեան կապ և քաղաքակրթութեան արդիւնքների մատակարար դառնալ բազմաբարբառ ժողովրդի անդամների մէջ: Հպոց լեզուն կամայականութիւնից, խալտարղէտ ազդեցութիւններից բարբառների լուրջ ուսումնասիրութեամբ կարելի է ազատել. հեղինակը կամ թարգմանիչը փոխանակ լեզուն օտարարանութիւններով սլլանդակելու, հայրենի բարբառից հանած կենդանի ոճերով ու բառերով կըճուխացնէ:

Ընդհանուր ազգային նշանակութիւն ունեցող բանաստեղծի հանդէս գալը կապուած է լեզուի մշակութեան գործի հետ. եթէ լեզուն անընդունակ է բարձր մտքեր ու նուրբ գաղափարներ արտայայտելու, աներեւակայելի է և նշանաւոր բանաստեղծի գոյութիւնը, որովհետեւ աղքատ և անմշակ լեզուով չի կարող արդիւնաւորուել տաղանդը: Մորանով չենք ուզում հերքել, որ բաղաստեղծը իւր տաղանդով կարող է ճանապարհ հարթել, բայց և չենք կամենում մոռանալ այն հանգամանքը, թէ առանց ազբիւրի

Նշանաւոր տաղանդն անգամ անկարող է մեծ արդիւնք տալ լեզուի մշակութեան գործում: Ժողովրդական բարբառները անսպառ աղբիւր են բանաստեղծի համար լեզուն հարստացնելու, նա ոչ միայն բառեր, դարձուածներ կ'առնի իւր լեզուն ձօնացնելու համար, այլ և խորասուզուելով կենդանի բարբառի մէջ՝ նորա ոգու համաձայն ինքն էլ կրստեղծէ նոր-նոր բառեր ու դարձուածներ, նորա գրչի տակ լեզուն կըստանայ իւր ճկունութիւնն ու սահունութիւնը¹⁾: Բայց լեզուն իւր զարգացման ճանապարհին թռիչքներ չէ սիրում, նա աստիճանաբար որոշ օրէնքների հիման վերայ է զարգանում, ուրեմն և պէտք է հոգալ այն հանգամանքների մասին, որոնք լեզուի զարգացման պայմաններն են կազմում: Ըստ ջին և հիմնաւոր պայմանը ժողովրդական բարբառների ուսումնասիրութիւնն է. ժողովրդական բառերի և դարձուածների բառարանը մեր լեզուի զարգացման էական պահանջներից մէկն է:

Վեզուն զարգանում է և մի այլ ճանապարհով՝ լեզուարանական գիտութեամբ: Բարբառների ուսումնասիրութիւնը լեզուարանական տեսակէտից մեծ նշանակութիւն ունի գրական լեզուի քերականութիւնը կանոնաորելու համար. բարբառները իրենց քերականական ձևերով և կանոններով աւելի հաստատուն են և միջոց են ըմբռնելու գրական լեզուի ոգին: Վերջապէս համեմատական լեզուարանութեամբ պարագոյր պստեղ առատնիւթ կարող է գտնել համեմատութեան համար, աւելի ակներև փաստեր լեզուի փոփոխութեան օրէնքները բացատրելու համար, ճշտիւ որոշելու հոյոց լեզուի արժէքը Հընդ-Եւրոպական լեզուների մէջ:

Չմոռանանք յիշել բանահիւսութեան նշանակութիւնը և տաղաչափութեան համար. ուսումնասիրելով մեր ժողովրդական երգերի տաղաչափութիւնը, գուցէ կը յաջողուի պարզել մեր տաղաչափութեան կանոնները: Տաղաչափութիւնը մի շրջանակ է, որի մէջ անփոփ և անփոփոխ են մնում ժողովրդական բերդուածները, ուրեմն և ժողովելով զանազան գաւառների վիպական, կրօնական և

¹⁾ Паткановъ-ի Изслѣд. о діалект. арм. яз. և Коршъ I.

այլ բովանդակութեամբ երգեր, համեմատելով նոցա տաղաչափութիւնը մեր հին, ժողովրդական վէպերի ֆնացորդների կամ նոյն իսկ շարականների տաղաչափութեան հետ, գուցէ, ասում ենք, յաջողութի պարզել հին տաղաչափութիւնը: Եւ յգ կողմից բնահայտութեան նշանակութիւնը մեծ է, քանի որ մեր տաղաչափութեան կանոնները ենթադրութեան սահմաններից չեն դուրս եկել դեռ ևս:

Եւելորդ չենք համարում մի քանի ծանօթութիւն տալ Սասնայ Ծռերի ժողովրդական վէպի վարիանտների մասին: Մինչև այժմ այդ ժողովրդական վէպի (էպոս) երկու վարիանտն էր յայտնի, մէկը՝ Մշոյ վարիանտը, որ գրի է առել հ. Սրուանձտեանը Սասունցի Գաւիթ կամ Մհերի դուռ վերնագրով («գրոց-բրոց»), իսկ միւսը՝ Մոկաց վարիանտը, որ գրի է առել պ. Մ. Երեզեանը «Գաւիթ և Մհեր» վերնագրով: Բայց երևում է, որ կայ մի երրորդ վարիանտ ևս Սասունում: Սասունը մեր դիւցազնական վէպի բուն հայրենիքն է, բայց մինչև այժմ ոչորի չէ յաջողուել այդ բարբառով գրի առնել: Մենք Սասունում երկար տարիներ ապրող մի մարդուց իմացանք Սասունի վէպի գոյութիւնը, բայց ամսոս անկախ պատճառներով չկարողացանք ամբողջութեամբ գրի առնել: Սասունի բերդը «Մհերի տապան» է կոչուում այդ Սասունի վարիանտի մէջ: Եւ յգ վարիանտը իւր կազմութեամբ տարբեր է Մշոյ և Մոկաց վարիանտներից: Եւ յդ յայտնի վարիանտներին են պատկանում նաև մեր գրած երկու վարիանտները, Եւբարանի բարբառով՝ Մշոյ վարիանտին (Սրուանձտեանի), իսկ Մոկաց բարբառովը Մոկաց վարիանտին (Երեզեանի): Եւ յսպիտով տեսնում ենք, որ սոյն ժողովրդական վէպը մեր մէջ երեք գլխաւոր վարիանտ է կազմել՝ Մշոյ, Մոկաց և Սասունի, որոնցից իւրաքանչիւրը ունի իւր տարբեր վարիանտները:

Մեր վարիանտներից մէկը գրած ենք Եւբարանի Չամբրլո գիւղում, պատմել է մեզ նոյն գիւղի ժամհար Մուրադը. այդ վարիանտի հետ համեմատել ենք և երկու ուրիշ վարիանտ (Եւր Ալինայ և Բւր Ազգանֆար գիւղում ենք գրել), նշանակելով միայն

այն մասերը, որ Չամբուլի վարիանտում չկան, կամ տարրեր են պատմուած: Այսպիսով տեսնուած ենք, որ ընդունուած կարծիքի հակառակ՝ գաղթական Ռուսահայոց մէջ ևս կան ժողովրդական բանահիւսութեան նշանաւոր մնացորդներ:

Երբարանի բարբառը Մշոյ բարբառի մի ստորաբաժինն է, ընդհանուր բարբառների մէջ արևմտեան բարբառների շարքում պիտի դասել իւր հնչման և քերականական կազմութեան պատճառով: Աւշադրութեան արժանի է այս բարբառի մեծ նմանութիւնը գրաբարի հետ. մեր հին լեզուի ծագումը բոլորովին պարզուած չէ. եթէ Երբարտեան և Մշոյ բարբառները համեմատենք գրաբարի հետ, աւելի սերտութիւն գէպի վերջինն ենք նկատուած:

Մոկաց բարբառով մեր գրած վարիանտները, երգերը, աւանդութիւնները¹⁾ գրի ենք առել պանդուխտ Մոկացիներից. թէև լեզուի մաքրութեան մասին մեր ընթերցողներին երաշխաւորել չենք կարող, բայց ճշտիւ արձանագրելու համար արել ենք այն, ինչ որ կարող էինք: Երգերի լեզուն իհարկէ անհամեմատ աւելի մաքուր է, նախ՝ իբրև ոտանաւոր՝ աւելի անփոփոխ է մնացած, երկրորդ՝ որ երգեր ասող Մոկացու լեզուն համեմատութեամբ աւելի ազատ էր մնացած ազդեցութիւնից:

Մի քանի խօսք ևս վէպի «Սասմայ Ծոռեր» կոչման մասին: «Սասունցի Դաւիթ կամ Մհերի Դուռ» և «Դաւիթ և Մհեր» վերնագիրն ամբողջապէս չի արտայայտում վէպի բովանդակութիւնը, որովհետև բացի Դաւիթից և Մհերից վէպի մէջ կան և ուրիշ գործող գլխաւոր հերոսներ (Սանասար, Ասլիմելիք և ուրիշները): Այդ ինկատի ունենալով՝ մենք աւելի յարմար ենք գտնում այդ վէպը մի ընդհանուր վերնագրով անուանել «Սասմայ Ծոռեր», որ նշանակում է «Սասունի Գժեր»: Այդ կոչումը գեղեցիկ ու արտայայտիչ և միանգամայն ժողովրդական է, որովհետև Սասմայ

¹⁾ Երգերը, աւանդութիւնները, հեքիաթները և բառարանը կը կազմեն մի առանձին հատոր:

Ծուռն է վեպի մէջ գործող իւրաքանչիւր հերոսը, և մինչև այսօր
 էլ ժողովրդի բերանում գործածական է Սասմայ Ծուռն կոչումը
 վեպի ամեն մի հերոսի համար, և ժողովուրդն այդ վեպը Սաս-
 մայ Ծուռն է անուանում: Սասմայ Ծուռն կոչումը վեպի հերոս-
 ների համար կայ և հ. Արուանձտեանի վարիանտում:

Գ. Ս.



Ս Ա Ս Մ Ա Յ Ծ Ռ Ե Ր

(Արարանի բարբառով)

Ե.

Ս Ա Ն Ա Ս Ա Ր Ե Ի Ա Ս Լ Ի Մ Ե Լ Ի Ք

Ժամանակով մէկ թագաւոր կ'էզնի, անուն Սննեքերիմ: Սննեքերիմին էրկու տղայ կ'էզնի, մէկի անուն Սանասար, մէկին Ասլիմէլիք: Սննեքերիմ ինք կռապաշտ էր, տղեկներ աստուածապաշտ:

Խոշուն էրեց ու գնաց Երուսաղամայ վրէն կռիւ:

Եօթ տարի քաղքի բոլոր խոշուն չափրոնեց նստաւ:

Թանգուտեն ընկաւ քաղքի մէջ. թագաւորն, ուր¹⁾ վազիր գաւրէշ խլըղի էղան ու ընկան քաղքի մէջ էրկու²⁾ պառուռոստ էկան, տեսան, որ իրարու հետ կռիւ կ'էնին. հարցուցին թէ՛—
Յո՞րի կըկուտիք:

Մէկ պառու վերցուց թէ՛—Դաւրէշ Բարա, թանգուտեն ընկեր ա էրկիր, հացներս ի խլըսեր ա. ընձի տղէ՛մ ունէնք, բերեցի մորթինք, կերանք. մկայ էնի ուր տղէն շ'բերա, մորթինք, ուտինք:

Վերցուց թագաւոր ուր վաղերին ըսեց.—Մեր թագաւորուտեն իսկի մէկ թագաւորուտեն ի չէ:

—Ըբա, ³⁾ ըսեց, ինչ էնինք, վազիր:

¹⁾ Այս բարբառում իւր երկբարբառը ուր—ի է փոխուում, օր. ուր, սուն, ձուն, առուծ, էրկուղ, ալուր, ախպուր, արուն:

²⁾ Բառի սկզբում ե միշտ է է դառնում. օր. էրկու, էրկիր էրգիկ, էրկէն, էկեղեցի, էրեխայ, էրկանք, Երուսաղէմ, էզ, էրես:

³⁾ Ա ձայնաւորը երբեմն ը-ի է փոխուում. օր. ըբա (ապա), ըհա, ըղուրդ (ուրիշ բարբառներում աղուրդ), ըմեն, ըընց, ըբբ (յար, մինչև):

— Ետ դառնանք, նստինք մեր թախտի վրէն:

Աւ սկսեցին խեր ու խերիաթ էնել ու պատարագ էնել պատարագն որ էրեցին պրծան, հրեշտակներ սրով, թրով իջան Աննեբերիթի ասքարի մէջ. ու ջարդեցին, ու սպանեցին, ու կոտորեցին:

Մնաց Աննեբերիթ մինակ. ու հեծաւ մեծ Գււէն ու փախաւ. փախաւ ու ճամբախ ըսեց. — Այ ջոջ կուռք, Ասլիմէլիք բրդի մատաղ:

Աւ էկաւ, իջաւ, ուր թախտին նստաւ:

Աւ խանչեց ուր ժողովուրդ, առաւ էկաւ ու ըսեց. — Բերէք մէկ-մէկ տղայ ջոջ կոքին մատաղ էնինք:

Վաղիր, վաքիլ, սինոդներ ըսեցին. — Ըսօր մըր¹⁾ օր չէ, ըբ մըր՝ շարաթ օր է, պղի շարաթ օր մատաղ էնինք:

Մնաց չուրի գիշեր. մնաց չուրի գիշեր՝ մեր Սանասարն ու Ասլիմէլիք խանչեց, տարաւ ուր կուշտ. ըսեց, — Մ'րտի. ձրդի մէկ խուրջին ոսկի վերցէք ու փախէք. ձրդի մատաղ կ'էնայ, փախէք:

Առան ու փախան. փախան չուրի լուսցաւ. լուսն²⁾ օր բացուաւ, գացին Էրուսաղէմ:

Գացին Էրուսաղէմայ թագաւորին գլոխ իջուցին. թամանդայ էղան ու կայնան առէչ:

Աւ թագաւոր հարցուց ըղոնց թէ՜ — Ի՞նչ պղի ձրդի:

Գարձան տղեկներն, ըսեցին. — Թագաւոր, վերի դէն Աստուած խաստ էնք էրի, ներքի դէն բրդի, մրդի պահիս, պահպանիս, եգե³⁾ անցրման Աստուած իրարուց չամչրցու:

¹⁾ Եւ ձայնաւորը շատ բառերում ը կ գառնում, օր. մըր, ձըր, վըր (վոյ), կըրտտեւ, չենք (չենք), ըղուց:

²⁾ Բ) երկրորդաւ բառի մէջ միշտ ու է գառնում. օր. լուս, քուր, ճիւղ, անուշ, բուն (բոյն):

³⁾ Նախադրութիւնները շատ անգամ գրարարի նման են գըրուում. օր. եղև անցման, կիգան յառէչ ձրդի, Աստուած խըտ բըղի էղլի, տղն գնաց մըչ բաղքին ժուռ գալու, վըր իմ գլխուն, վըր իմ էրեսին և այլն:

Վերցուց թէ՛—Գուք վեր տղեկներն իք:

Ըսեց.—Մենք Սենեքերիմ թագաւորի տղեկներն ինք:

—Օր հմալ է, ըսեց, մենք չ'ընք կրնայ ձրզի պահէ, գացէք:

Էդ տեղէն ետ դարձան, գացին ճամբիսու վրէն կայանն ու միտք էրին թէ՛ դո՛ր էրթանք:

Ըսեց.—Էրթանք Մուշ՝ Մուշեղ թագաւորի կուշա:

Ու գացին, հասան էդ քաղաք:

Գացին, գացին թագաւորի առէշ¹⁾ կայանն, գլխս իջուցին եօթ տեղով՝ թամանդայ էղան:

Ըսեց.—Ի՞նչ պակասուտեն ունիք, որտի:

Ըսեց.—Պակասուտեն չունինք. ըսեց՝ վերի դէն Եստուածն ենք ապաւինի, ներքին դէն քրդի, որ մըզի պահիս ու պահպանիս, քու աչք հովայի մըզի վըս էղնի. Եստուած իրարուց չ'ամչըցու:

Ըսեց.—Ո՛րտիք, վեր տղեկներն իք:

Թէ՛—Սենեքերիմ թագաւորի տղեկներն ինք:

Ըսեց.—Մենք չընք իշխընայ պահի, էնի զօրնգեղ թագաւոր ա, կիգայ մեր ար ու հետիւր կ'տանայ: Ետ դարձէք գացէք, չընք կեարնայ պահէ:

Ընկան ճամբան ու գացին. ջրի 'մ²⁾ աաստ էկան, տեսան, օր մէկ բարակ առւ սարից կիգայ, կ'կտրի էն ահագին գետ, կ'ընցնի ու կ'խառուի հետ, կ'երթայ:

Էդ էրկու օխպէր մէկ-մէկու հարցուցին.—Իգա բարակ առուի զօրուտեն ինչ ա, օր կիգայ, կ'կտրի, կ'ընցնի, կ'խառուի հետ, կ'երթայ:

Մանասար վերուց, Եսլիմէլիքին ըսեց թէ՛—Որն օր իգոր սկան ջուր խմէ, հմալ կտրի՞՞ կ'էղնի:

¹⁾ Ա-ի է փոխուելը սովորական երևոյթներից մէկն է այս բարբառում. օր, յառէշ, էւեղ (աւելի), էնեղ, կէր.

²⁾ Ա. (Եփնայ) վարիանտի մէջ այդ գետը որոշուած է, Մուրադ գետի մէջ է թափուում բարակ առուն:

Աւ բռնեցին առուն ու գացին. գացին գլոխ առան, ու բերեցին բերդի հիմ թաւլին, պրծան:

Էդ տեղէն էլան ու գացին:

Ճամբախ մաշվարաթ էրին թէ՛—Արի մենք էդ շան անուն չխտանք, քեանի՛) օր մենք էդոր անուն տանք, մըղի պահող չկայ:

Գացին Խլաթայ էրկիր՝ Խլաթայ քաղաք:

Էդ Խլաթայ թագաւորի անուն լէ Մեւքոն՝) թագաւոր ա. գացին թագաւորի առէչ կայնան, գլոխ իջուցին եօթ տեղով՝ թամանդայ էղան, ութ դիանդայ ձեռ կապին, կայնան:

Աւ թագաւոր հարցուց թէ՛—Ո՞րտի, ի՞նչ պղի ձըղի:

Աւ տղեկներ ըսին թէ՛—Թագաւոր, վրի դէն Աստուած ենք խաստ էրի, ներքին դէն քըղի. մըղի պահիս ու պահպանիս, քու աչք հովպի վրայ մըղի էղնի, ետե անցըման Աստուած իրարուց չ'ատչըցու:

Աւ թագաւոր հարցուց էդ տղեկներուն. —Վ.իր տղեկներն իբ: Տղեկներ ըսեցին թէ՛—Մենք ըլեր ինք՝ ոչ հէր՝) ինք տեսի, ոչ մեր ինք տեսի, մըղի հմլայ բուդալայ տղայ ինք տեսի:

Թագաւոր ըսեց թէ՛—Տարէք էդ տղեկներ, գրէք մէկ օթաւ իր մէջ: Տարան, գրին մէկ օթաւի մէջ:

Աւ էգոնց գանէց դան հաց կ'տանէն՝):

Տարի մի թամամ պահին: Տարին օր թըմաւ, վազիր թագա-

1) Ա ձայնաւորը երբեմն փափկանում է և լիւ երկրորդառին մօտենում. օր. քեանի, կեարնամ:

2) Ա վարիանտով Ասլիմէլէք, Սանասար ապաստանարան են գտնում Միսիթար թագաւորի մօտ՝ վարիանտի մէջ յայտնի չէ, թէ Միսիթարը ո՞ր երկրի թագաւորն է:

3) Այ երկրորդառը բառի մէջ և բառի վերջը, եթէ դիմորոշ յօդ ունի, է է դառնում, օր. հէր, մէր, ախպէր, սէլ, փէտ, ձէն, վէրու (վայրենի)—վրէն, տղէն, էրեխէն, փեսէն:

4) Անցեալ անկատարի մէջ ի ձայնաւորը ղեղջուած է բոլոր գէմբերում:

ւորին ըսեց թէ՛— Թագաւոր, բէհդին յօրի քու հաց կ'կերցուս
ըդոնց:

Ըսեց.— Ըբա ի՞նչ էնինք, վաղիբ:

Ըսեց.— Օր մի բերիս մէկ փորձիս ըդոնց, տեսնաս մէջ հու-
նար կա՞յ, թէ չկայ:

Թագաւոր լէ ըսեց.— Եղէկ կ'ըսիս:

Ու խանչեցին տղեկներ, բերին թագաւորին դիւան:

Ու թագաւոր ըդոնց ըսեց թէ՛— Արտի, լուսուն պղի կոխ
էրթանք:

Էդ տեղէն տղեկներ էլան ու գացին նստան ուրանց օթախի մէջ:

Մանցին յարի լուսցաւ:

Լուսուն բերեցին ամէկին մէկ-մէկ ձի տուին, մէկ-մէկ ձեռք
սիւս:

Չիանք հեծան ու գացին մէյդան:

Թագաւոր լէ ուր խոշունով էկաւ:

Թագաւոր վերցուց թէ՛— Սանասար, ըսեց, խոշուն առ դու
մէկ դէն կայնի. ես, Ասլիմը ու վաղիր մէկ դէն կայնինք:

Սանասար վերցուց թէ՛— Էդմալ չէ, թագաւոր:

Ըսեց.— Ըբա ի՞մալ ա:

Ըսեց.— Ես իմ ախպէր մէկ դէն կ'կայնինք, դու խոշուն մէկ
դէն:


Ըսեց թէ՛— Քու խօսքն էզնի:

Ու էկան առան իրար կոխ:

Թագաւոր իշկեց տեսաւ, օր¹⁾ էլ խոշուն չ'կայ, ըմեն ջար-
տած էն: Թագաւոր վերցուց թէ՛— Վաղիր, քու տուն աւիրի, իմալ
օր դու իմ տուն աւիրիր. Ասաուած քու տուն աւիրա, ըսեց, չուր
մկայ էդոնք գինէն մեր մէջ որց մարդ կայ, մկայ իդոնք մարդ ին,
մնք կնիկ ինք:

¹⁾ Բառի սկզբում ուն միշտ է օ է դասուամ. օր (որ), օսկի,
օա, օխչար, օղորմուտեն:

Երկու
738



Վաղեր վերուց թէ՛—Օր հմալ է, քաղքից դուս էրա, թըղ էրթան:

Ընդոց ընկեր տղեկներուց մէկ գնաց, ըսեց.—Թագաւոր ձեր վրէն հերսոտեր ա, ձըղի քաղքից դուս կ'էնայ:

Ընդոնք լէ ուրանց տեղից էլան ու էկան թագաւորի կուշտ ու գլուխ իջուցին եօթ տեղով, ութ դիանդայ կայնան առէչ, ըսին.

—Թագաւոր, մեր մեխքն ի՞նչ ա, օր դու մըղի քաղքից դուս կ'էնիս:

Ըսեց.—Ո՛րտի, խօսք է բերնէս ի գացիր ա, ձըղի պղի դուս էնիմ. յուցկայ գացէք ձեր օթախ ու միտք էրէք, տեսնանք ո՞ր կողմ կ'ուզէք՝ տամ ձըղի, գացէք, հոնի նստէք ¹⁾:

Տղեկներ լէ միտք էրեցին թէ՛—Երթանք էնդեղ, օր նշան-գահ թալեր ինք, էրթանք էնդեղ շինիք:

Մանցին յարի լուսցաւ. լուսն օր բացուաւ, էկան թագաւորի առէչ կայնան:

Ու թագաւոր ըսեց.—Ո՛րտի, ո՞ր կողմ ուզեցիք, օր նստէք:

Ըսեցին թէ՛—Թագաւոր, ֆլան տեղ, ֆլան տերրի կուշտ հիմ էնք թալի, կ'ինդրինք օր տաս մըղի, մէկ քառսուն իցցուն տուն լէ տուր խըտ մըղի, էրթանք տընըւորուինք:

Թագաւոր վաղերին ճամբեց քաղքի մէջ. իցցուն տուն տուեց քօշեր:

Ու տղեկներ լէ հետ ուրենց քօշին ու գացին:

Գացին էնդեղ հասան:

Քօշեր ուրանց տուն շինին նստան. տղեկներ լէ ուրանց բերդ կ'շինէն:

Տղեկներ օրէն մէկի տուն հաց կ'ուտէն. վիր տուն օր հաց կ'ուտէն, ընդոր տաշտ ու մաղ կ'կատէն:

Տարին թմաւ, բերդն էկաւ գլխի:

¹⁾ Ա. վարիանտով երկու եղբայրները իրանք են թագաւորին առաջարկում գնալու համար:

Սանասար վերուց Ասլիմեւիքին ըսեց.—Վերթաս Մեւքոն
թագաւորի կուշտ, քաղքի միջէն մէկ ախշիկ աւնէ գայ ու տէր-
տէր մի լէ հեա վերցու գայ, ու բերէ ախշիկ պսակէ իմ վռէն:

Ախշիկ մէկ տեղէն վերցուցին ու եկան:

Սանասար ըսեց.—Մեւքոն թագաւոր, մեր բերդի անուն գիր,
նոր մտի բերդի մէջ:

Վերուց թագաւոր թէ՛—Չեր բերդի անուն սուն վըր սան—
Սասուն:

Ու էն բերդի անուն մնաց Սասուն:

Ախշիկ լէ պսակեց Սանասարի վռէն:

Էդ տեղէն ետ դարձաւ Մեւքոն թագաւոր ու գնաց ուր
տուն:

Սանասարն օր պսակուաւ, Ասլիմեւիք ջոկաւ, ջոկ քնաւ. յար
էդ օր էրկու ախպէր մէկ տեղ կ'ընէն:

Ասլիմեւիք քնուկ էր. մէկ լէ տեսաւ ջոջ կուռք էղաւ մէկ
իծու օրինակ, էկաւ գլխու վերեւ ու մկմկաց, յարի լուս չ'թողեց
քնէր:

Մէկ ամիս թամամ էդմալ կ'էնէր:

Ամիսն օր թըմաւ, գեղնուտեն թափաւ Ասլիմեւիքի վռէն, հի-
ւընդցաւ:

Սանասար հարցուց թէ՛—Յո՞րի իս հիւընդցէ:

Ասլիմեւիք լէ վերուց թէ՛—Էդ մէկ ամիս ջոջ կուռք չ'թո-
ղի ետ գիշեր քնիմ. կ'էղնի իծու պէս, գիշեր կիգայ իմ գլխու վերեւ
կ'մկմկայ, չ'թողի ետ քնիմ: Ես կ'երթամ. ետ իմ հէր ընծի պղի
մատաղ էնէ ջոջ կուռքին, ետ ետ իմ հօր:

Էլաւ, ընկաւ ճամբախ:

Գնաց, հասաւ ուր հօր քաղաք. օր գնաց հասաւ ի քաղաք¹⁾

¹⁾ Նախդիրների գործածութիւնը գրաբարի նման՝ սովորական
է այս բարբառում, օր. գնաց հասաւ ի քաղաք, նախիբ բլեց ի սար,
գացին ի Ղարս. մինչև իսկ պահպանուել է նախդրի փոփոխութեան

ու ջուար տարան հօր թէ՛ Ասլիմէլիքն էկաւ, էն լէ մարդ ճամբեց առէչ ու առաւ, գնաց:

Տարան հօր դիւան. հէր բոռաց ու ըսեց.— Բերեք մէկ-մէկ տղայ ջոջ կոբին մատաղ էնինք:

Բերին մէկ-մէկ տղայ ջոջ կոբին մատաղ:

Աւ Ասլիմէլիքին ըսեց.— Դո՞ր գացիր, դու չ'գիցա՞ր, օր դոր էրթէր, ջոջ կուռք բըզի կ'բերէր: Դէ արի, ըսեց, ջոջ կոբին էրկըրպագուտեն տուր, օր քըզի մատաղ էնիմ:

Առաւ ու գնաց կոբի տուն:

Ասլիմէլիքն ըսեց.— Թագաւոր, ես էգոր էրկըրպագուտեն չըմ տուի, չըմ գինայ. դու արի էրկըրպագուտեն տու, տեսնամ ի՞մալ կիտաս, ես լէ քըզնէ սովոխմ ու տամ:

Թագաւոր կլաւ ու էրկըրպագուտեն տուեց թէ՛— Իդա թաւուր տուր:

Ասլիմէլիք լէ քաշեց թուր, զարկեց գլոխ կտրեց. գլոխ կտրեց ու թալեց դուս. ու մտաւ կոբերու մէջ ու ջարդեց:

Ջարդեց էլաւ գուս, ըսեց.— Արն օր իմ Աստուած կ'պաշտայ՝ թըղ գայ իմ թրի տկով ընցնի:

Քաղաք բաղբով թափան ու էկան. էկան ըսեցին թէ՛— Դու ո՞ր Աստուածն օր կ'պաշտիս, մե՛ք լէ էն Աստուած կ'պաշտինք:

Բերեցին Ասլիմէլիք գրին թագաւոր. նստաւ թախտի վրէն:

Էդի մնաց էդ տեղ, ես դառնանք, էրթանք Սանասարի կուշտ:

Բ.

ԱՌՈՒԺ ԱՉԵՒ ՄՆԵՐ

Սանասարին էղաւ մէկ տղայ, անուն գրին Մհեր¹⁾: Մհեր օրը կանոնը, օր զէդ խօսքն ըսեց, զթագաւորի ախշիկ կուզիմ իմ տղին, զիմ տէր կ'սաղցում:

¹⁾ Ա. վարիանտով Մհերը Ասլիմէլիքի որդին է և ոչ Սանասարի. հօրը սպանողն էլ Սանասարն է:

ղաւուր ջոջըցաւ, էղաւ տըսնուհինգ տարեկան տղայ. ուրեն ձի'մ սարքեց ու կ'երթէր ավըզուշ էնելու:

Յերեկ կ'երթէր ավըզուշ էնելու, գիշեր կիգէր ուր տեղ կ'քնէր:

էղաւ օր մէկ առուձ փայդա էղաւ ճամբըներու վըէն. էրթըցող, գալացող բիրադի կտրեց, մարդ չըր կեարնայ ճամբու հետ էրթէր:

Սանասար, ուր իշխաններ նստած միտք էրեցին թէ'—Ի՞մալ պղի մենք ապրինք, թանգուտեն ընկաւ Սասունայ մէջ:

Մհեր հարցուց ուր հօր թէ'—Յո՞րի թանգուտեն կ'ընկնի: Հէր լէ ըսեց թէ'—Առուձ մի փայդա էղի ճամբու վըէն, ճամբորդ կտրեց, էրթցող գալացող չ'կայ:

Ըսեց.—Ի՞մալ առուձ. առուձն ի՞նչ ա, ըսեց:

Ըսեց.—Ջանաւար է, մարդ կ'ուտէ:

Ըսեց.—Հեռուանց մարդ կ'ուտէ, չէ՞ մօտանաս՝ նոր:

Հէր լէ վերցուց.—Չէ, օր մօտեցար, կ'ուտէ:

Ըսեց.—Հմալ է, ես լուսուն կ'երթամ, ընձի թող էնի ջարտէ:

Հէրն ըսեց.—Ո՞րտի, մ'էրթա, բըղի կ'ջարտէ:

Անկաջ չ'էրեց ու գնաց:

Գնաց ու մօտեցաւ առուձին:

Առուձ լէ տեսաւ, օր մարդ մի էկաւ. էլաւ, էկաւ ընդուր առէջ:

Էրկու մարդ լէ տղի հետ գացած էն. էն էրկու մարդ հետու կայնան, տղէն մինակ գնաց:

Գնաց, ու առան իրար:

Մհեր առուձին սպանեց, քաշեց էրկու կտոր էրեց, մէկ դրեց ճամբու էն խրաղ, մէկ էն խրաղ:

էն էրկու մարդն օր հետ գացած էն, էկան կայնան Մհերի կուշա:

Մէկ մարդ ջուար բերեց Սասուն Մհերի հօր թէ'—Քու աչք լուս էղնի, քու տղէն առուձին սպանեց:

Ձուր մկայ Մհեր էր, մկանէ ետ էղաւ Առուսանու Մհեր:
Էն մէկ մարդ լէ Մհերի հետ գացին Ասլիփեւլիքի կուշտ. Աս-
լիմէլիք բեռներ կապեց, ճամբեց Սասուն:

Մհեր մնաց հոնի. որբուէրի կնիկ մի կէր հոն, էդ կնիկ սի-
րեց. էղաւ մէկ տղայ էդ կնկաց, անուն դրին Մարամէլիք:

Էդ տեղէն Մհեր էլաւ, էկաւ Սասուն, ուր հօր կուշտ:

Սանասար, ուր իշխաններ բոման ու նստան. Սանասարին ը-
սին. — Բու տղէն յո՞րի չըս կարգի:

Մնաց լուսուն, լուսուն էլաւ Սանասար ու գնաց Մելքոն
Թագաւորի կուշտ.

Սանասար ըսեց. — Թագաւոր, մէկ տեսիկ քաղքից էղնի, գեղ-
րանուց էղնի, գտնիս, տանինք պսակինք Մհերի վրէն:

Մելքոն Թագաւորն ու վաղիրն ու Սանասար ամէկ մէկ ձի
հեծան ու ընկան ճամբան ու գացին. գացին Մանձկերտու բերդ:

Մանձկերտու բերդ Թեւա-Թորոս կայ, գացին Թեւա-Թորոսի
կուշտ, հարցուցին թէ՛ — Թեւա-Թորոս տո՞ւն ա:

Ըսեցին. — Թեւա-Թորոս գացեր ա Վան:

Ըզոտա գահ գացին Վան, հարցին թէ՛ — Թեւա-Թորոս յո՞գ է:

Ընդոնք լէ ըսին. — Չէ, բերդի հիմ թալեց, ազոտա կերաւ ու
գնաց Արզրում:

Գացին կէսաւուր Արզրում ու էնդեղ հարցուցին. — Թեւա-
Թորոս յո՞գ է:

Ըսեցին. — Բերդի հիմ թալեց, կէսօր կերաւ ու գնաց Ղարս:

Ու գացին ի Ղարս:

Հարցուցին թէ՛ — Թեւա-Թորոս յո՞գ է:

Ըսեցին. — Բերդի հիմ թալեց, հրամէն կերաւ ու գնաց Մանձ-
կերտու բերդ:

Էկան. էկան, հասան Մանձկերտու բերդ:

Ջուար տարան թէ՛ — Մելքոն Թագաւոր, վաղիրն ու Սանա-
սար էկան քրդի կոնախ:

Էն լէ մարդ ճամբեց առէշ ուրանց, առաւ ու գնաց:
Թագաւորի տեղ ջոկ սարբեց, վաղիրին ջոկ ու Սանասարին ջոկ:
Բերեցին չայ իցկին ու բերին խմին. չայ խմին պրծաւ, հաց
տուեցին. հաց լէ կերան պրծան, հաց վերցուցին:

Աւ Թեւ-Թորոս հարցուց Մելքոն թագաւորին թէ՛—Յո՞րի
իբ էկի:

Ըսեց.— Էկեր ինք, օր բարեկամուտն էնինք իրարու հետ
— Ի՞նչ բարեկամուտն, ըսեց:

Ըսեց.— Քու ախչիկ պզի տաս մեր տղին, Մհերին:

Ըսեց.— Մհեր ո՞րիդ ի տղէն է:

Ըսեց.— Սանասարի տղէն է:

Ըսեց.— Մելքոն թագաւոր, եբ որ էկեր իս, ախչիկ մի փէշ-
քէշ էրի ձրղի:

Աւ բերեցին զինի արաղ դրեցին, խմեցին. ուրախուտն էրին.
ուրախուտն օր էրին, էլան պառկան, քնան:

Մնաց լուսցաւ:

Լուսուն բերին ախչիկ հեծուցին ձին ու կայնան:

Ըսեցին թէ՛— Ո՞ր գնենք հետ հարսնախպեր:

Ըսեցին թէ՛— Քեռի-Թորոսիկ¹⁾ բերէք գնենք հետ հարսնախ-
պեր.

Շնորհակալուտն առան, ընկան ճամբախ:

Աւ էկան. էկան, հասան Սասուն:

Աւ բերին պսակեցին Մհերի վրէն. պսակեցին պրծան, Մել-
քոն թագաւոր, վաղիր ետ դարձան, գացին ուրանց տեղ:

Մհերին էլաւ իրեք տղայ. մէկի անուն դրեցին Յոան-Վեգոյ,
մէկի անուն՝ Փորթիկ-Ճնճիկ²⁾, պզտիկ տղի անուն լէ դրեցին Դա-
ւիթ:

¹⁾ Ա. վարիանտով Քեռի-Թորոսն է հարսնախպերը, բայց
յայտնի չէ, թէ ո՞ւմ որդին է:

²⁾ Ա. վարիանտով Մհերի երրորդ որդին Չինով-Յովանն է,
իսկ Բ. վարիանտով Չինով-Յովանը Դաւիթի քեռին և Խլաթայ տէրն է:

Սանասար մեռաւ:

Բերեցին Մհեր դրեցին բարանց մեծ¹⁾:

Տղեկներ էղան եօթ ութ տարեկան:

Մհերին բեասիրուտեն փակեց. էլաւ իրէք տղէն վերցուց ու գնաց ի Մըսր:

Չուր մկայ Մըսր Ասլիմէլիքն էր նստուկ. Մհերի խորթ տղէն էլաւ Ասլիմէլիքին. սպանեց ու նստաւ Մըսր, էղաւ Մարայ մէլիք:

Մհեր առաւ ուր իրէք տղէն ու գնաց Մսրամէլիքի կուշտ:

Ջուար տարան Մսրամէլիքին թէ՛—Մհերն էկաւ:

Մսրամէլիք լէ էլաւ մէկ թոփ կտաւ զարկեց զոլթուղ ու թուր լէ թալեց վիզ ու գնաց Մհերի առէշ:

Ըսեց.—Մհեր, իմ քաղքին դագմիշ մ'էղնի. իդա իմ թուր, իդա իմ վիզ. զարկ, ըսեց, իդա թոփ կտաւ լէ փաթու. ընծի:

Մհեր ըսեց.—Չէ, քու քաղքին դագմիշ չըմ էղնի, ես էդ չաշուին չըմ էկեր ի:

—Ըբա ինչ չաշուին ես էկի:

—Էկեր իմ, ըսեց, իմ իրէք տղէն տամ բըզի պահիս, պահսպանիս:

Մսրամէլիք լէ ըսեց.—Ճապաղջուրն ու ֆողէն²⁾ տուր, քու իրիք տղէն պահիմ:

Ըսեց.—Տուեցի:

Մսրամէլիք տղեկներ իրէք լէ առաւ, գնաց:

¹⁾ Ա. վարիանտով Մհեր որսորդութեամբ և աշխարհակալութեամբ էր պարապում. Վեր օր ջոջաւ (Մհեր), ափուխուշ կ'էնէր, կ'ըրէր Սասունցոց վրէն կ'ցըրէր. եօթ տարի պահեց:

Մհեր գնում է Ծովասարն ու ճապրղջուկ—ֆողէն նուաճում և ժողովըրդից չարի է առնում:

²⁾ Ա. վարիանտով Մսրամէլիքը պահելու վարձ Ծովասարն ու ճապաղջուկ-ֆողէն է ուզում:



Գ Ե Ի Ի Թ

Մհեր զարձաւ, գնաց ուր տուն:

Կսկրժւորաւ. կսկուծ տուեց ուր սիրտ ու էնդեղ մեռաւ¹⁾:

Սասունցիք Բեռի-Թորոսկին բերեցին զրեցին ուրանց մեծ:

Եօթ տարի սուգ կապեցին Մհերի յեաւ:

Բեռի-Թորոսկին լէ էղաւ էրկու տղայ, մէկի անուն Խոր-Մանուկ, մէկի անուն Չինսօլ-Օվան:

Սասունայ իշխաններ ու տէրտէր քոման ու էկան Բեռի-Թորոսի կուշտ. էկան սեղան պատրաստին ու նստան:

Բերեցին զինի զրեցին, տէրտըրոջ ըսեցին.— Տէրտէր, Մհերին մէկ «Նոգոց» ըսէ:

Նոգոցն օր ըսեց պրծաւ ու զինին սկսեցին ըլնալ ու տուեցին Բեռի-Թորոսկին.— Դէ՛ խմէ:

Ու Բեռի-Թորոսիկ առաւ սպքան ձեռ ու միտք էրեց՝ Իմ է-

¹⁾ Ա. վարիանտով Մհեր մեռնելուց առաջ «Տարաւ ուր ձեռնով թուր զարկեց կտրէ կարսի մէջ թէ՛— Իմ գեանդի բաղանի տղէք կ'էղնին, ուրանց պէտք կ'իգայ: Գեատեր լէ զրին սնդկի մէջ, ու մեռաւ»:

Բ. վարիանտի մէջ Մհերի մահուան մասին այլ տեսակ է պատմուում. Մհեր էրկու որդի ունէր՝ Մարամելիք՝ կռապաշտ և Դաւիթ խաչապաշտ կնոջից. մահուան բոպէին Մհեր ամեն ինչ կտակում է Մարամելիքին կռապաշտ կնոջ ազգեցում թեամբ: Դաւիթի մայրը, իմանալով այդ բանը, վազում է մեռնող ամուսնու մօտ և աղաչում է իւր որդուն էլ մի բան տալ.

«Քուսկիկ-Ջալալին

Խաչ պատարագին,

Թուրն ի կէծակին,

Խուղէն անդարին

Չանրիկ գուրդին,

Էն էլ փէշքէշ պարոն Դաւիթին.— ասում է

Մհեր և աւանդում Նոգին:

Թըմներ չուրի չ'երթամ բերեմ, իդա բաժակ իմ բերան չ'առնիմ:
Խոր-Մանուկ ըսեց.— Քեռի-Թորոսիկ, խմի՛ս խմէ, չըս խմի,
իզին տու թըզ մարդիկ էրթան:

Քեռի-Թորոսիկ լէ ըսեց.— Հացն ու գինին, Տէր կենդանին,
չուրի ես իմ Տէրմըմներ չըբերիմ, ես բաժակ իմ բերան չ'առնիմ:
Իզին էրեց, մարդիկ էլան գացին:

Մնաց յարի լուսցաւ:

Աւ Քեռի-Թորոսիկ էլաւ, ընկաւ ճամբան ու գնաց Մորա-
մեւիբի կուշտ, ըսեց.— Մորամեւիբ, տուր իմ տղեկներ տանիմ, ինչ
օր պահեցիր բօլ է:

Ըսեց.— Քեռի-Թորոսիկ, ըսեց, քու տղեկներ գան իմ թրի
տկով ընցնին, ան, գնա՛:

Քեռի-Թորոսիկ լէ ըսեց.— Թըզ գան ընցնին:

Մորամեւիբ թուր քաշեց կայնաւ դուռ. տղեկներ լէ էկան, օր
պղի ընցնէն. մեծ տղան Յոան-Վէգոն է, եօթ գըմշու զուաթ ու-
նի, էկաւ խառ ընցաւ. Փոքրիկ-Ճնճղիկ¹⁾ եօթ գըմշու զուաթ ու-
նի, էն լէ վազաւ, ընցաւ:

Նորաթն էկաւ Դաւթին:

Քեռի-Թորոսիկն ըսեց.— Դաւթի, արի, ընցի Մորամեւիբի թրի
տկով:

Ըսեց.— Չըմ ընցընի:

Քեռի-Թորոսիկ հարցուց.— Յորի չըս ընցընի:

Ըսեց.— Էղաւ օր ժամանակ ընցաւ, ես ու էդիկ հոդ ու ջրի
չիրիգ ինք, մեր մէջ վէճ բացուաւ ու կռիւ էրեցինք, էդ ընձի
թրով զարկեց, ըրա ես չ'զարկիմ: Ըսեց՝ չըմ ընցընի ես ըդօր թրի
տկով:

Քեռի-Թորոսիկ քաշեց, օր զուտով տանէր, ընցուցէր:

Աւ թոթուեց Քեռի-Թորոսիկն. Քեռի-Թորոսիկ գնաց դէն ըն-
կաւ ու Դաւթի ըզուսդ առաւ քարին ու կրակ տուեց:

¹⁾ Ա. վարիանտում միշտ Ճնճղիկ-Փոքրիկ:

Մտրամելիք կրակն օր տեսաւ, վախեցաւ, ըսեց.— Ա՛ռ էդ խա-
ղալուն, ընձնէ հետըցի:

Առաւ իրեք տղէն, էկաւ:

Բերեցին վիճակ թաւին թէ՛—Ո՞ր մէկ թագաւոր դնինք:

Վիճակ ընկաւ Յոանն-Վէգոյի վրէն, ու Յոանն-Վէգոն բերին
դրին թագաւոր¹⁾:

Դաւթին լէ բերին էրին նախըջի:

Դաւիթ գնաց մէշէն, ուրան կոպալ մի փրցուց ու դրեց վըր
փիջին, էկաւ նախրի առէշ կայնաւ ու քշեց նախիր հանեց ի սար:

Օրն էջաւ կէսօր, նախիր ժողվեց, բերեց, լցեց քաղքի մէջ:

Քեռի-Թորոսիկ լարեց յեղև. փախաւ մտաւ տէրտըրոջ տուն,
սաղմոց վերուց, սաղմոց կ'ըսէր:

Մնաց յարի լուսուն. լուսուն էլի էկաւ կայնաւ նախրի ա-
ռէշ. նախիր քոմեց ու քշեց ի սար:

Մէկ լէ տեսաւ, օր նախիր մի մէկ ուրիշ գեղեց էկաւ էդ
սար:

Գնաց էն նախրի տաւար ըմն քոմեց, բերեց խառնեց ուր
տաւրի հետ:

Նախըջին էկաւ, ըսեց.— Դաւիթ, էն տաւար իմն էր, յո՞րի
քոմեցիր, բերիր խառնեցիր քու նախրին:

Ըսեց.— Չէ, էդ իմ էրեկուայ տաւրից ա մանցի էդ տեղ:

Ըսեց.— Չէ, Դաւիթ ջան, իմ տաւարն է, քու տաւար չէ:

Էրկուս էղան ախպէր:

¹⁾ Ա. վարիանտով ոչ թէ վիճակով է Յոանն-Վէգոն թագա-
ւոր դառնում, այլ Սասուն գալուն պէս շուտ էլաւ (Յոանն-Վէ-
գոն) բերդի գլոխ—երևի, անդրանկութեան իրաւունքով—Ճնճղեկ-
Փոքրիկ էղաւ գեարգաւանջի, Չինով-Յովան լէ Պաց տուն: Իսկ
Դաւիթ սկզբում տէրտէրի մօտ կարգում էր, յետոյ նախըջի է
դառնում:

— Արի, ըսեց, Գաւիթ, հոյ մի շինեմ՝ դու քնի, ես ըմէն օր
չուր իրկուն բու տաւար կ'պահիմ:

Հոյ մի շինեց ու Գաւիթ մտաւ մէջ, քնաւ:

Պահեց չուր յիրկուն. իրկուն տաւար ջոկեց տուեց Գաւ-
թին, բերեց քաղաք:

Քեռի-Թորոսիկն էկաւ թէ՛—Գաւիթ, որտի, յըմէն, օր իդա
վախտի բի:

— Թ'աղէկ կ'էղնի. ըմէն օր իդա վախտ կ'բերիմ:

Ու Գաւիթ գնաց տէրաբրոջ տուն ու էլի սաղմոց սկսեց:

Մնաց չուրի լուսուն. լուսուն էլի նախիր տուեց առէջ, քը-
շեց ի սար:

Ուր անպէր լէ էն դէն բերեց ու խառնեց իրար:

Նախըջին ըսեց.— Ախպէր, ըսօր մեր գեղ պատարագ է, գնա
մեր գեղ հրիսայ կի, առ ընձի հրիսայ, արի:

Գաւիթ էլաւ գնաց գեղ. էն վախտ գնաց, օր ժամուց դուս
էն էլած ու էկած էն նստած:

Տէրաբներ ու տիրացուք հլա չէն էկած:

Ըսեց.— Հրիսայ լցէք ես ուտիմ, առնիմ իմ անպօրն ու էր-
թամ:

Մարդու մէկն ըսեց.— Սարր ըրէ, չուրի տէրաբներ ու տի-
րացուէք իդան, նստին, հաց քաշին ու հաց օրհնին, դու լէ ուտիս
ու քու քառսուն պապ լէ, չ'խլըսի:

Եդ էլ ինադ էրեց, կոպալ իցկեց պղնձի կանթ ու թալեց
շալակ ու տարաւ սար:

Եկաւ, տեսաւ, օր անպէր ընկեր ա բիթ ու բերնի վընն ու
կ'իլայ:

Ըսեց.— Ախպէր, յորի կ'իլաս, ըռըկեր իս, օր աղն ու եղ
չըմ բերի: Ըսեց՝ արի հրիսէն կի, իրկուն աղն ու եղ վրէն կի:

Ըսեց.— Ախպէր, ինչ էնիմ հրիսէն, դու օր իդա տեղէն դա-
ցիր մեր գեղ, քառսուն դե էկան, քառսուն կոպ իմ նախրի միջէն
ջոկեցին ու տարան. տարան, շըջին սարի էն դէն:

—Գէ, ախպէր, ըսեց, էլ՞ Տրիսայ կի, ես կ'երթամ:

Ախպէրն էլաւ նստաւ. եղի կոպալ դրեց թևին ու ճամբախ տուեց առէշ, շրջաւ սարի էն յերևս: Գուեր տեսան, օր Գաւիթն էկաւ, փախան մտան յերի մէջ ու ջաղչի քար տուին դէմ ուրանց:

Գաւիթ գնաց տեսաւ, օր քառսուն կով լէ մօրթած էն, լըցած էն քառսուն կանթնէ պղնձի մէջ ու օջախ շինած էն, գրած օջիս վրէն, բլբլան կ'էփի:

Գաւիթ վերցուց քառսուն կանթնէ պղնձ շրջեց կրակի վրէն, քառսուն կաշին լէ ժողվեց լցեց մըշ պղնձին ու գնաց, կայնաւ էրի դուռ, քար քաշեց, թալեց մէկգէն ու.—Գուեր, ըսեց, մէկ-մէկ դուս արէք:

Գուեր մէկ-մէկ դուս էկան, մէկ-մէկ կոպալ զարկեց ու շըրջեց: Քառսուն լէ սպանեց ու մտաւ մըշ էրին. գնաց, տեսաւ, օր ըրոնց գոմ քառսուն հատ ձի էր կապուկ. որ մէկի քամկի վրէն ձեռ կ'ճխտէր, կ'ողզէր ձեռաց տակ:

Գնաց վերև, մէկ բուռակ մ'էր կապուկ, իրեք մինադ, ձեռ ճխտեց, ձեռաց հետ բանձրցաւ¹⁾:—Ըհա, ըսեց, իդա իմ ձին է:

Էկաւ, տեսաւ, օր ուրանց նստուածք դուննիի մալ խաղինէն բերած էն լըցած. դարձաւ ու դուս էլաւ, ջաղչի քար տուեց դուան դէմ ու դարձաւ:

Էկաւ, կոպալն իցկեց պղնձի կանթ ու թալեց փիջի վրէն ու առաւ, էկաւ էն գեղն, օր Տրիսայ էր տարի. էկաւ, օր հացկերուտեն էրած էն պրծած, տէրտրներ հաց կ'օրհնէն:

Ըսեց.—Ձէն մ'էնէք, ձըզի մէկ բան կ'ըսիմ:

Կաշիք հանեց, թափեց, ամէկ էկաւ, ուր տաւրի կաշին ձանսրցաւ:

¹⁾ Ա. վարիանտում Գաւիթ ինքն իրան խօսում է. «Քեռի-Թորոս, բիրտղի քրդի, Գուռկէ-Ջալաթին տաս ընձի»:

—Գէ, ըսեց, իդա պղինձ լէ տարէք ծախէք, բաժին էրէք ձեր տաւրի մտի տեղ. վայ է էկի ձեր գլխուն, ըսեց, օր ճանգ մի կորեկ իմ ախպօր հախից կտրիք, ձեր գեղ կ'էնիմ Գաւթի աւիրած:

Ըսին.—Ջանըմ, առ քու խաղէն մըղնէ հեռըցի, մենք քու ախպօր հախ չընք կտրի:

Էկաւ, հասաւ ախպօր կուշտ. էկաւ, տեսաւ հըլա ախպէր կ'իլայ:

Ըսեց.—Ախպէր, յըր եր իլաս. դարդ կ'էնիս թէ աղն ու եղ չըմ բերի, էլի հրիտէն կի, իրկուն գնա աղն ու եղ լէ վրէն կի:

Ըսեց.—Ախպէր, ի՞նչ էնիմ, իմ նախրի միջէն քառսուն կով է տարած, ես չ'իլամ՝ ո՞ր պղի լայ:

Ըսեց.—Տարեր իմ, կովերու կաշին տէրբատէր էրեր իմ: Ըսեց, թամբի իմ էրի՝ մէկ ճանգ կորեկ քու հախից պղի չ'կտրին. օր կտրին՝ ընձի ըսէ, կ'երթամ գեղ կ'էնիմ Գաւթի աւիրած:

Ըսեց.—Էլի իմ տաւար ջոկէ, ես էրթամ:

Ըսեց.—Գըռ կէս օր ա, ես վախտ դո՞ր կ'տանիս նախիր:

Ըսեց.—Չէ, պղի իմ նախիր ջոկիս, ես էրթամ:

Ջոկեց, նախիր տուեց առէչ:

Քչեց նախիր, լցեց Սասունայ մէջ:

Քեռի-Թորոսիկն էկաւ առէչ թէ՛.—Շուն շան օրտի, պլէճկերի աղայ, իդա նախրի վախտ ա, օր դու բերեր իս:

Գաւթի լէ վերցուց թէ՛.—Քեռի-Թորոսիկ, մունամ կ'էնիմ՝ ընձի նախրուտենից ազատ էնիս. էրթանք քըզի դունեալըզի մալ խաղինէն տամ, ընձի ազատ էրա¹⁾:

Քեռի-Թորոսիկ ըսեց.—Գէ քէլէ, տեսնիմ:

Առ Գաւթի ընկաւ առէչ, Քեռի-Թորոսիկ լէ յեղև. գացին էլան սար, հասան դեերու յէրին, մտան յէրի մէջ. քառսուն

¹⁾ Ա. վարիանտում Գաւթի շարունակ Քեռի-Թորոսի հետ խօսելիս միայն այս խօսքերն է կրկնում. «Քեռի-Թորոս, բիրազի քըզի, Քուռկէ-Ջալլամին տաս ընձի», իսկ Քեռի-Թորոսը ոչինչ չէ հասկանում և միայն քուռակը տեսնելուց յետոյ գլխի է ընկնում:

ձի կար հոնի, ու ձիան դուս քաշեցին, երսուն ու ին բարձան:

Ու Դաւիթ Բեռի-Թորոսկին ըսեց.— Եղա մէկ ձին կ'իտասս ընձի:
Չիու անուն լէ Բուռկէ-Ջալին:

Երսուն ու ին ձին բարձան, Դաւիթ հեծաւ Բուռկէ-Ջա-
լին, ընկան ճամբախ:

Էկան հասան Սասուն, ու բերեցին լցեցին թագաւորի խա-
ղինէն:

Ու Դաւիթ գնաց տէրտրոջ տուն, սաղմոց առաւ ձեռ, սաղ-
մոց ըսեց:

Մնաց յարի լուսուն, ուրին համար մէկ բաղայ բանեց, Բուռ-
կէ-Ջալին դուս քաշեց ու հեծաւ, ու գնաց ավողուչ էնելու:

Գնաց արտ մի կորկի աասս էկաւ ու բաղէն թողեց մըչ
կորկին ու բաւականի լոր բանեց, առաւ լորեր ու ետ դարձաւ,
էկաւ տէրտրոջ տուն, լորեր խտրկեցին էփին ու կերան:

Մնաց յարի լուսուն, ու Բուռկէ-Ջալին դուս քաշեց, հե-
ծաւ ու գնաց կորկի արան ուժէ:

Կորեկ պառուուն էր պառաւ ըսեց.— Էրթամ իմ կորեկ տես-
նիմ լաւ էղեր ա:

Էկաւ, տեսաւ, օր իրեք կորին տրորած, էրած գետին:

Ըսեց.— Ըստծու մէկիկ բարով կորկի տրորող ընձի աասս կէր:

Դաւիթ գնաց ձիով:

Տեսաւ, օր էն դէն Դաւիթն էկաւ, ըսեց.— Գրողս բըղի
տանի, Դաւիթ, դու յո՞րի իրեք կորին տրորեցիր, էրիր գետին.
Եթ ջան էնք, եթ կորի կորեկ էր ցանուկ: Ըսեց, օր խոշաղ
իս, յո՞րի չըս էրթայ բու հօր ճապաղջուրն ու Բողէն չըս աւիրի:

Ըսեց.— Վէր ձեռն ա իմ հօր ճապաղջուրն ու Բողէն:

Ըսեց.— Մտրամելիքի ձեռն ա:

Ձեռ տարաւ ջէր, մէկ ձանգ օսկի տուեց պառուուն, ըսեց.
— Տար, բու էրեխէք պահաւ, ընձի չ'անիծիս:

Պառաւ օրչնեց ու գնաց:

Գաւիթ ձին քշեց, գնաց Քոզէն. գնաց էլաղասու դուռն
իջաւ:

Էլաղասին խանչեց ուր ժողովուրդ ու առաւ, էկաւ էդ տեղ:
Աւ ժողովողին ըսեց թէ— Իդա մեր չին աղի տղէն ա, էկեր
ա, ըսեց, ամէկդ ի ձեր կարողութենի գորայ փէշքէշ բերէք մեր
չին աղի տղին:

Ըմէկ ուր կարողութենի գորայ փէշքէշ բերեցին Գաւթին:
Գաւթ չարցուց թէ— Էդ ինչ է կ'իտաք ընձի:

Էլաղասին ըսեց թէ— Գու մէր չին աղի տղէն իս, էկեր իս,
քրղի փէշքէշ կ'իտանք:

Ըսեց.— Ես էկեր իմ եօթ տարուան խարջ ու խարաջ կ'ուզեմ:
Օր եօթ տարուան խարջ ու խարաջ ուղեց, ալաշղղի փէտեր
քաշին ու զարկին Գաւթին:

Աւ Գաւթիմ չեծաւ ուր ձին, մալն ու օխշարն ու դեէն քը-
շեց, տարաւ, լցեց Սասոււմ. օր բերեց լցեց Սասոււմ մալն ու օշ-
խար, Քեռի-Թորոսիկն էկաւ առէշ, ըսեց.— Շուն շան օրտի, պլէճ-
կերի տղայ. էդ ինչ էրեցիր:

Ըսեց.— Ինչ իմ էրի:

Ըսեց.— Յո՞րի գացիր դու ճապաղընուն աւիրեցիր:

Ըսեց.— Աւիրեցի՞ իմ չօր մուլքն ա:

— Օր քու չօր մուլքն ա՞՞ աւիրեցիր, Պիրարաղի ջուարն ու
Խողբագուն իմալ պղի տաս, ըսեց. ես կ'երթամ Բանձրիկ Մա-
րաթուկ աղօթք էնելու:

Գաւթիմ լէ գնաց տէրտորջ տուն, սաղմոց առաւ ձեռ, սաղ-
մոց ըսեց¹⁾:

¹⁾ Բ. վարիանտում Գաւթի Ծոփասար գնալը և Պիրարաղի
ու Խողբագնի (վարիանտում միայն Աղղբագնի) գալը այսպէս է
պատմուած.

Գաւթիմ թռչորսութեամբ է պարապում և տրորում է ձե-
րունու արտը. ձերունին Գաւթին յանդիմանելուց յետոյ ցղց է
տալիս որսորդութեան իսկական տեղը՝ Ծոփասար (ՄՇերի որ-
սորդութեան տեղը): Գաւթիմ գնում է Ծոփասար. շորս կողմը

Պիրարագին ու Խողբագին խոչուն էրեցին ու էկան Աս-

պատ է քաշած և որսի կենդանիներով լիքն է. բայց բազումեան
դէմ համարելով պարսպապատ սարի վերայ որս անելը, քանդում
է պարիսպը և ընկնում մի վայրենի (խող-ի (խոյի) յետևից: Խո-
յը անցնում է Ծովասարի միւս կողմը, Մարամէլիքի «էլ-ի (ժո-
ղովզդի) վրանների մէջ: Դաւիթ թողնում է խոյը և յարձակում
վրանների վերայ. մեկի աչքն է հանում, միւսի ծառն է կտրում,
մեկէլի ծիծը կտրում. և պատուիրում է Մարամէլիքին ասել. «Ար
կնկայ լաչին ուր գլխուն էղնի, թըլս գոյ կուլու էնին»:

Դաւիթ վերադառնալիս մի «հանգրած» (աւերակ) վանք է
տեսնում. «Հացն ու գինին, Տէր կենդանին» երգում է տուն չ'գնալ,
մինչև վանքը չ'չինէ: Վանքը նորոգելուց յետոյ բառասուն երէց,
քառասուն վարդապետ և քառասուն սարկաւազ միասն է նշա-
նակում, իսկ Օհան Եղբակեցուն վանքի պահապան, վերակացու:

Մարամէլիք իմանում է Դաւիթի արարումները և Ղզբաղնին
ուղարկում է վրէժ աննելու: Օհան Եղբակեցին խարուելով Ղզ-
բաղնի խոստումներով՝ անցնում է նորա կողմը: Ղզբաղինը վան-
քը կողոպտում և միաբաններին կոտորում է. միայն մի սարկաւազ
ապատուելով՝ փախչում է Դաւիթին պատմելու եղելութիւնը: Դա-
ւիթը կեր ու խում ունէր, երբ սարկաւազը ներս է մտնում.

«Դաւիթ նստի հացն ու գինին,

էկան խարին Օհան Եղբակեցին,

Քառսուն էրէց սպանեցին,

Քառսուն վարդապետ, քառսուն սարգևաք:

Դաւիթ, ըսելով սարկաւազի խօսքերը, իսկոյն վազում է թշնամիների
յետևից, Օհան Եղբակեցուն երկու կտոր է անում, իսկ Ղզբաղ-
նին, առամները ձակատին շարելով, ուղարկում է Մարամէլիքին:

Ընթեցողը իսկոյն կնկատէ, որ այս պարբերութիւնը նման
է պ. Մ. Երեղեանի «Դաւիթ և Մհեր»-ի վերջում գրուած «Թըռ-
լան Դաւիթի Ճիւղից» վերնագրով հատուածին: Պ. Երեղեան այդ
հատուածը մի առանձին Ճիւղի մաս է համարում, բայց մեր հե-
տամտութիւնը մեղ այն եղբակացութեան հասցրեց, որ այդ հա-
տուածը առանձին Ճիւղի մաս չէ, որովհետև Մոկաց բարբառով
մեր հաւարած բոլոր վարիաններում այդ հատուածը Դաւիթի Ճիւ-
ղի մի պարբերութիւնն է կազմում, ինչպէս և Բ. վարիանտում,
թէ և և բացի յայտնի Դաւիթից մի ուրիշ Դաւիթ անուն էլ են տա-
լիս, որի մասին ոչինչ յայտնի չէ առայժմ:

սունայ վրէն կոխ. ու Սասունայ չորս կողմ փաթեց խոշուն ու նստաւ¹⁾:

Լուսուն Յոան-Վէգոն էլաւ լուացուելու, տեսաւ՝ աստղին չսար կայ, խոշունին չսար չ'կայ:

Ու փախաւ, մտաւ ներս ու դարգահներ տուեց հողել:

Քեռի-Թորոսիկ էլաւ լուացուելու, իշկեց, տեսաւ՝ աստղին չսար կայ, խոշունին չսար չ'կայ:

Քեռի-Թորոսիկ էկաւ ու տէրտոջ տուռ կայնաւ, Դաւթին խանչեց, դուս հանեց ու ըսեց.—Շուն շան օրտի, յօրի գացիր ճագաղջուրն ու Քոզէն աւիրեցիր:

Դաւիթ լէ ըսեց.—Իմ հօր մուլքն է, աւիրեցի:

Ըսեց.—Քու հօր մուլքն է՝ աւիրեցիր, ըմա Պիրարագին ու Խոզրագին խոշուն էրած, էկած ին բու վրէն:

Դաւիթ ըսեց.—Ես լէ կ'երթամ էդոնց կոխ կ'էնիմ, եա Աստուած ընձի կիտայ, եա էնոնց կիտայ:

Ու Քեռի-Թորոսիկ գնաց աղօթք էնելու Բանձրիկ Մարաթուկ:

Դաւիթ Քուռիկ-Ջալին դուս քաշեց ու հեծաւ. քշեց խոշունի մէջ, խոշուն ջարտեց, Պիրարագին ու Խոզրագին բունեց, ահռէք քանդեց ու շարեց ի ճակատ ուրանց²⁾, ու հեծըցըցուց ձիանք ու ըսեց.—Ջուար տարէք ձեր աղին:

Ջուար տարան Մարամէլիքին:

Մարամէլիք հարցուց թէ՝—Եդ ի՞նչ օրի իք ընդի:

Ըսեց.—Դաւիթն է մըզի իդըմլայ էրի:

¹⁾ Ա. վարիանտով եկողը միայն Պիրհաջն է տաս մարդով: Դաւիթ Եորա մարդկանց սպանելուց յետոյ, ատամները ճակատին շարած՝ Մարամէլիքին է ուղարկում:

²⁾ Երբեմն յատկացուցիչը յատկացեալից յետ է դրուում գրաբարի նման, օր. շարեց ի ճակատ ուրանց, հաց ուրանց կերան:

Ըսեց. — Դաւիթ երեկու երեխէն է, էդ ի՞մալ ձըզի իդըմ-
լայ ի էրի:

Ըսեց. — Գինաս իդա տեղի Դաւիթն է, մէկ անձնահասուր մ'է
դարձի Դաւիթ:

Մարամելիք խոշուն էրեց ու քոմեց:

Եօթ տարի խոշուն էրեց. էն խըդր խոշուն էրեց, օր աստղին
Հադին հասար կէր, խոշունին չ'կէր:

Խոշուն գիշեր քաշեց ու եկաւ. մէրն ու քուր լէ հետն եկան:

Գիշեր եկան, հասան Սասուն, ու Սասունայ չորս կողմ փա-
թեց խոշուն, հմալ փաթեց, օր խոշուն եկաւ, առաւ իրար:

Լուսուն Յոան-Վէգոն էլաւ լուացուելու, տեսաւ, օր աստ-
ղին հասար կէր, խոշունին չ'կէր:

Ետ դարձաւ, փախաւ, մտաւ ներս:

Քեռի-Թորոսիկ էլաւ լուացուելու: Քեռի-Թորոսիկ էլաւ, տե-
սաւ, օր աստղին Հադին հասար կայ, խոշունին չ'կայ:

Քեռի-Թորոսիկ եկաւ, կայնաւ տէրտորջ տու. ու Դաւիթ խան-
չեց, հանեց դուս:

Դաւիթ դուս եկաւ:

Ու ըսեց. — Տ'օ տղայ, էդ ի՞նչ օյին էր, հանիր մըր գլոխ:

Ըսեց. — Ի՞նչ իմ էրի, Քեռի-Թորոսիկ:

Ըսեց. — Գացիր ճապաղջուրն ու Քոզէն աւիրեցիր, հըլա ինչիս
էրի. գինաս էդի Պիրաբադին ու Խոզբադին ա, ըսեց. էդի Մարա-
մելիքն է, Հնդոյ ամիրէն է ու Բազըբըու խալիֆէն է ու քու-
մեծ ախպէրն է, դու ըդոր ջուար ի՞մալ պզի տաս:

Ըսեց. — Քեռի-Թորոսիկ, էղածն էղեր է, բան է պատահեր է,
ի՞մալ էնինք:

Քեռի-Թորոսիկ ըսեց. — Ես կ'երթամ Բանձրիկ Մարաթուկ,
մէկ Սըփ նշան մի կայ հոնի, հանիմ ու բերիմ:

Սըփ նշան էն տեղէն հանեց ու բերեց. բերեց տուեց Դաւ-
թին¹⁾:

¹⁾ Ա. վարիանտով Դաւիթ ինքն է ստա՛ ու՛մ սուր. նշանը

Գաւիթ համբուրեց, գրեց ծոց:

Քեռի-Թորոսիկ հարցուց թէ՛—Գաւիթ, ի՞մալ կ'երթաս կոիւ
Մարամելիքի հետ:

Ըսեց.—Քեռի-Թորոսիկ, եօթ օր գառու միս, բրընձ փլաւ
չ'ուտիմ, Մարամելիքի հետ կոիւ չեմ էնի:

Աւ Գուռկէ-Ջալին դուս քաշեց Գաւիթ, հեծաւ Գուռկէ-
Ջալին:

Քեռի-Թորոսիկ ըսեց.—Մէկ թեթեւ քարդի ծառ մի ունիմ,
դնիմ զքր փիջիս ու էրթամ Բանձրիկ Մարամեակ:

Աւ գնաց Բանձրիկ Մարամեակ, ծառ գրեց կշտի հետ ու
աղօթք էրեց:

Գաւիթ ձին քշեց, գնաց խոշունի մէջ: Իրեք օր շուռ էկաւ
խոշունի մէջ, Մարամելիքի չադր չքր գտնի. գնաց ու գտաւ. տե-
տաւ, օր չադր կ'րանձրնայ, կ'ցածրնայ, ըսեց.—Վէդնի՛ իդա էդնի
Մարամելիքի չադր:

Էկաւ ընդոր չադրի կշտի հետ ձիուց իջաւ, ուրին մէկ պզտի
չադր մի կէր, զարկեց Մարամելիքի չադրի կուշտ:

Չին կապեց ուր չադրի դուռ ու մտաւ, չադրի մէջ քնաւ:
Մարամելիք քնուկ տեղէն իմցաւ. ուր բուրոջ ճամբեց
ջրի: Քուր տեսաւ, օր մէկ չադր մի զարկուկ էր ուրանց չադրի
կուշտ, ըսեց.—Էդ ի՞նչ չադր պզի էդնի:

Գնաց տեսաւ, օր չադրի մէջ մէկ մարդ կէր պտոկուկ. գնաց
մօտեցաւ, տեսաւ, օր շատ խորոտ էր: Աւր ջուր տանել մարհան
էրեց, իրրուղ դարդակ տարաւ Մարամելիքին:

Մարամելիք հարցուց թէ՛—Ա՛խշի, յո՛րի ջուր չ'բերեցիր, դար-
դակ իրրուղ բերիր:

Ըսեց.—Մարամելիք, մէկ մարդ էկեր է, մեր չադրի կուշտ ուր

իրբե շնորհ. Գաւիթ ձին հեծաւ, ուր դուրդ ու քաման վերուց,
էկաւ էկեղեցին համբուրեց, շիտկաւ պատ բլաւ, մէկ հաս սրի
նշան դուս էկաւ: Գաւիթ համբուրեց, դրաւ ծոց:

չադր զարկեր ա. գացի էն ճարդ տեսայ ու ճտեհան էրեցի, շուր չ'բերեցի:

—Օր հմալ է, ըսեց, գնա էն ճարդ խանչա, բի:

Մտրամելիքի քուր գնաց ու Դաւթին խանչեց, բերեց:

Աւ էկաւ էդտեղ նստաւ. եօթն օր բրընձ փլաւ ու գառու միս կերաւ Մտրամելիքի հետ. եօթն օր օր թմաւ, էլաւ, հեծաւ ուր ձին, չադր վերուց, էկաւ տէրտորջ տուն, ուր շորեր փոխեց. ուրիշ շոր հագաւ ու ուրիշ ձի մի հեծաւ, էկաւ, կայնաւ Մտրամելիքի չադրի դուռ ու ըսեց.—Եարօ, քու վախտին հազրբ կեցի:

Մտրամելիք հարցուց թէ՛—Մըն իս դու:

Թէ՛—Ես Դաւթի շիրուխնն իմ:

Դարձաւ, էկաւ Դաւիթ. էկաւ Քուսկէ-Ջալին դուս բաշեց, թամբեց ու գամեց, ուր շորեր հագաւ, Արփ Նչան համբուրեց, ծոց դրեց ու ձին քշեց, էկաւ Մտրամելիքի չադրի դուռ:

—Եարօ, քու վախտին հազրբ կեցի:

Ըսեց.—Դու ո՞րն իս:

Ըսեց.—Ես Դաւիթնն իմ, Մտրամելիք. ըսեց՝ էլի իդա տեղ կոխւ էնինք, ես Աստուած ընձի կ'իտայ, ես բըզի:

Աւ Մտրամելիք սիլահնորաւ ու չադրից դուս էկաւ:

Մտրամելիք Դաւթին ըսեց թէ՛—Երի կոխւ չ'էնինք:

Ըսեց.—Չէ, չ'էղնի, պզի կոխւ էնինք:

Մտրամելիքն ըսեց.—Դաւիթ, Բմալ կոխւ էնինք:

Ըսեց.—Ես կ'չոքիմ, դու թրով ընձի զարկ:

Դաւիթ չորաւ:

Մտրամելիք ըսեց.—Դաւիթ, արի, ես բըզի կ'էղնիմ խուլ, կոխւ չ'էնինք:

Դաւիթ ըսեց.—Չէղնելոց բան է, ընձի օր չոքըցուցիր՝ քու զըրբ զարկ:

Մտրամելիք մէկ թուր թալեց Դաւթին ու հարցուց.—Ի՞ճալ իս, Դաւիթ:

Ըսեց.—Արփ Նչանի զօրուտենով ինչ օր ընձի լու մի խածէ:

Ըսեց՝ արի գըրբ մը լէ զարկ՝

Ըսեց.— Դաւիթ, բըզի կ'էղնիմ փոշեհան, կոխ չ'էնիք:

Ըսեց.— Չէ, չ'էղնից բան է, գըրբ մի զարկեր իս, մէկ լէ զարկ:

Էկաւ մէկ գըրբ լէ զարկեց, ըսեց.— Ի՞մալ իս, Դաւիթ:

Ըսեց.— Սըփ նշանի զօրութենով ինչ օր մէկ լու խածէ. արի, ըսեց, արի էն մէկ գըրբ լէ զարկ ու պրծի:

Էն մէկէլ գըրբ լէ էկաւ, զարկեց:

Դաւիթ թռաւ, էլաւ, կոյնաւ:

Ըսեց.— Դոր բունն է, արի չոքի:

Բերեց ու չոքըցուց:

Դաւիթ բաշեց ուր թուրն, օր պղի զարկեր, Մսրամելիբի մերն էկաւ թէ— Դաւիթ, էդ մէկ գըրբ բախշէ ընձի:

— Ըհա, ըսեց, իդա մէկ գըրբ բախշեցի բըզի:

Ա թուր բաշեց, էլի պղի զարկեր, բուրն էկաւ թէ— Դաւիթ, իդա մէկ գըրբ լէ բախշէ ընձի:

— Ըհա, ըսեց, քուրիկ, իդա մէկ գըրբ լէ բախշեցի բըզի:

Ըսեց.— Բերէք Մսրամելիբ պառկըցու՛ք, ինչ խըղր ձըզի թաղիս, կարպետ, փալաս կայ՝ լցէք վրէն ու ևս իմ մէկ գըրբ պղի զարկիմ:

Բերին, լցին վրէն:

Ա Սըփ նշան խանչեց ու էկաւ զարկեց. զարկելուն՝ կարեց՝ մէկ գաղ լէ իջաւ գետին¹⁾:

¹⁾ Բ. վարխանտի մէջ Մսրամելիբի կոխն ու մահը այսպէս է պատմուած. Մսրամելիբ անձամբ գալիս է Ղրղբադնու վրէժն առնելու և հարկը տանելու, բայց ոչ թէ Սասունից, ինչ պ. Երեզնանի վարխանտու, այլ Խլաթից, ուր գտնուում է Դաւիթ և իւր բեռի շինով-Յովան: Մսրամելիբն ասում է.

«Քառասուն կնիկ կուղիմ մէկ բաժի, մէկ սըֆաթի,
Քառասուն ախշիկ կ'ուղիմ մէկ բաժի, մէկ սըֆաթի,

Ու հեծաւ ձին, ընկաւ խոշունի մէջ. խոշուն ջարտեց ու գնաց. գնաց, տեսաւ, օր մէկ մարդ կայներ ա խոշունի առէջ՝ ձին հեծուկ, մզբախ լէ ձեռ:

Քշեց ընդոր խոշունի վրէն:

Ըսեց.— Դաւիթ, իմ խոշունին դագմիշ մ'էղնի:

Դաւիթ հարցուց թէ՛.— Դու օր կողմի մարդն իս:

Ըսեց.— Ես արևելոց կողմի մարդն իմ:

Ըսեց.— Դաւիթ, իմ խոշունին դագմիշ մ'էղնի, արի, ես դու ահա ու շարթ կնինք:

Ըսեց.— Ինչ ահա ու շարթ կնինք:

Ըսեց.— Մկայ ես լէ ազար, դու լէ ազար, մենք օր կարգուանք քրզի տղայ էղաւ, ընծի ախիկ, իմ ախիկ տամ քու տղին, քրզի ախիկ էղաւ, ընծի տղայ, քու ախիկ տուր իմ տղին:

Վերի դէն Ըստուած վկայ բռնին, ներքի դէն լէ Դաւիթի տկի ձին:

Քառսուն ձի կ'ուզեմ մէկ բաժ, մէկ ունգ»,
Եւ օգտուելով Դաւիթի բացակայութիւնից, ստանում է պահանջները: Դաւիթ իմանալով եղելութիւնը, գնում է վրէժ առնելու, ճանապարհին իւր դժբ պողպատէ ծառի (փոխանակ սեան) վերայ փորձելով: Դաւիթ յաղթում է Մորամելիքին, բայց ներում է, զնջանելով Մորամելիքի իշխանների խնդրին:

Դաւիթ գնում է Իիլ գետայ ջրի վրէն՝ լողանալու: Մորամելիքի մարդիկը խորդախութեամբ բռնում են Դաւիթին: Զինով-Յովան, մատանուց իմանալով Դաւիթին հասած վտանգը, փաթաթուում է եօթ գոմշի կաշով և բռալով յիշեցնում է նորան աղօթքը:

Յիշամ քեզ հէրն ի կենդանին.

Մարութայ Բանձր Ըստուածածին,

Խաչը պատարագին,

Դու պահապան էղնիս պարոն Դաւիթին»,

ասում է Դաւիթ, և իսկոյն շղթաները կորատում և ամեն մի օղը մի մարդ է սպանում թշնամուց: Դաւիթ Մորամելիքին երկու մաս է անում, որոնցից մէկը ձայն է տալիս՝ «Չախով տեղ փորի, աջով թաղի», բայց Դաւիթ աջով փորում, ձախով թաղում է:

Աւ Էնի բաշեց ուր խոշուն, գնաց: Գաւիթ լէ գնաց Մըսր,
նստաւ թագաւոր: Գաւթի ձէն ընկաւ ախշարբ թէ իղըմլայ մէկ
խոչաղուան էրեց:

Խարար օրտեղէն տանք:

— Խարար Ապուտկողից¹⁾ տանք, Խանդուժ խանուժից տանք:

Խանդուժ խանուժ խանչեց ուր ջառին, գիր քրեց թէ՛—
Իդա գիր տար Գաւթին:

Ջառի անուն լէ Ինչ է.— Եխշախըզ:

Եխշախըզ գիր գրեց ուր ծոց ու էլաւ, ընդաւ ճամբախ. Հար-
ցուցելով էկաւ, Հասաւ Մըսր. ու բերեց գիր տուեց Գաւթին²⁾:

Գաւթի գիրն առաւ ձեռնէն ու կարդաց, գիր պագեց, գրեց
ուր գլխուն:

— Եխշախըզ, արի նստի:

Եխշախըզին պատիւ էրեց ու էլան պառկան, քնան:

Մնաց յարի լուսուն. լուսուն Եխշախըզին ըսեց.— Գու գնա,
ես կ'իդամ:

Եխշախըզ գնաց, Հասաւ ուր տեղ: Եխշախըզն օր Հասաւ
ուր տեղ, Գաւթի Գուռկէ-Ջալին թամբեց, գամեց ու դուս քա-
շեց, Հեծաւ, ընկաւ ճամբախ:

Չմէներ սուլթան ուր շորեր Հագաւ, գլխ կապեց ու էկաւ
Գաւթի առէչ:— Գաւթի, ըսեց, արի էրթանք ըսօր ընձի խոնաղ
էղի:

Ըսեց.— Զէ, կ'երթամ, ընձի ճամբուց ետ մ'իցկի:

¹⁾ Մի պանդուխտ Ապարկերտցու ասելով Խանդուժի Հայրե-
նիքը «Բերդ Ապատին» էր կրչուում: Ապարտ անունով մի բերդ
գտնուում է Աղզուանի ճօտերքը:

²⁾ Ե. վարիանտով Գաւթի Մըսրում թագաւորութիւն չի ա-
նում. Մորամէլիքին սպանելուց յետոյ նա վերադառնում է Աս-
սուն և Ասսուներից գնում է Ապուտկող:

Ըսեց.— Ես գինամ դու Խանդուլի խանութի արտով կ'երթաս, չմա Խանդուլի խանութիմ իմ ճըկըթի բարայ չ'էղնի:

Ու Գաւիթին խաբեց, տարաւ ուր տուն. կերան, խմեցին ու էլան մէկ տեղ քնան:

Մնաց. լուսուն Գաւիթ փոշմընաւ ուր բունած բանից—էդ ինչ բան էր ես բոնեցի, պղի մըր ազգ չ'խարուէր, ես յո՞րի խաբուայ մէկ օլուշաղի արտով:

Ու ձին քաշեց ու հեծաւ. քշեց ուր ձին ու գնաց:

Չմիկեր սուլթան ըսեց.— Գու եաւա՛շ, էկար ընձի խաբեցիր ու թողիր, գացիր:

Ու ինադ ընկաւ:

Գաւիթ գնաց, գուլթնի մի ոստտ էկաւ¹⁾. բարև տուեց: Ընդո՞ք լէ Գաւիթի բարևն առան:

Ըսեց.— Եխպրտան, իդա տաւար յարձըկէք, մեխք ին:

Ու յարձըկեցին տաւար, էրեցին դէն:

Մանջկալին ըսեց թէ՛— Երի դու գուլթնի մանջ բոնէ:

Մանջկալ էկաւ, բոնեց մանջ:

Գաւիթ լէ բոնեց գուլթնի խարզնի գլոխ՝ եօթ փաթ ձիով պտտեց:

Եդ գուլթնի մարդկանց մօտէն մէկն ըսեց, ուր հունարն է. մէկէլն ըսեց՝ ուր հունար չէ, ձիու հունարն է:

Գաւիթ ձիուց իջաւ. եօթ փաթ լէ ինք մինակ պտտեց. դարձաւ հեծաւ ուր ձին ու շնորակալ էղաւ ըդընցնէ ու պղի էրթէր: Մանջկալն ըսեց.— Մէրթայ, գուլթնի հացն էկաւ, հաց ուտինք, նոր Ըստուած բու բան աջողայ, գնա՛:

Ու Գաւիթ ձիուց իջաւ մէկէլ, ու ձին թորկեց արծըլու,

¹⁾ Ե. վարիանտով Գաւիթ գուլթանին պատահելուց առաջ պատահում է Բաղդըղու խարճին, որ Գաւիթի նման իւր նշանածը բերելու էր գնում. պայման են կապում, եթէ մէկին տղայ լինի, միւսին աղջիկ՝ տան միմեանց:

յինք էկաւ, նստաւ եղ տեղ. հացն էկաւ, ու բերին զրին Գաւ-
թի առէչ. չորս զտրանոց քուլագ փլաւ դրեցին Գաւթի առէչ:

Երկու լոջ խաչ թալեց ու աման սրբեց, մէկ բրդուջ էրեց-
ինչխրդր օր հաց կէր, բիրագի կերաւ:

Ու հեծաւ ձին:

Ուր մտքի մէջ խորուրդ էրեց ու հարցուց թէ՛—Իրկուն օր
կ'երթաք, Բմալ կ'սարբիք, տուն կ'երթաք:

Բերեցին գուժնի ակներ կանգըցուցին ու գուժան վերցին,
գրին ակներու վրէն, ճամբարակ, լծներ, բնապէն, խոփ, ձևիչ՝ բի-
րագի ուր թախուժով գրին վրէն ու կապին:

—Իդըմայ կ'սարբինք, կ'լծինք տաւար, կ'տանինք տուն, ըսին:
Գաւթի թուր քաշեց ու կայնաւ գուժնի վրէն, ըսեց.—Նս
իմ թուր կ'զարկիմ, թէ կտրեց, կ'երթամ Խանդուժ խանուժին, թէ
չկտրեց, չըմ էրթայ:

Ուր թուր զարկեց, մէկ գաղ լէ գետին գնաց թուր:

Գուժնի տէր ըսեց.—Սեպէր, յո՞րի իմ գուժան թըրբեցիր.
եւ Բմալ էնիմ:

Չեռ տարաւ ջէր, մէկ ճանդ օսկի հանեց թէ՛—Տարէք ձեր
գուժան սարբէք:

Ու Գաւթի շնորհալուտեն արաւ ու քշեց գնաց Ասպուա-
կող¹⁾:

Գնաց, հասաւ Ասպուակող:

Գնաց մէկ խանի գուռ իջաւ, խանչուն խանչեց ու գուս
հանեց: Խանչին ձին տարաւ, կապեց ներս:

Ու խանչուն հարցուց, ըսեց.—Գո՞ր էրթամ, իմ գլխս պահիմ:

¹⁾ Ա. վարիանտով Գաւթի Նլաթից գալիս է գուժանաւոր-
ների մօտ և այնտեղից Պղնձէ քաղաքը, Խանդուժի հայրենական
քաղաքը: Քաղաքի գո՞ները փակ էին, Գաւթի ասպանդակում է
ձին և Խանդուժի պարտէզը թողում. Սուլթան-Գըմիթ յանդիմա-
նում է Գաւթին պարտէզը փչացնելու համար և պատժուում իւր
յանդգնութեան համար:

Ըսեց.—Յուզայ մեր թագաւորին մէկ խերիաթխանայ կայ,
զնա՛ հոնի գլխի պահա՛ն:

Գնաց էդ խերիաթխանի դուռ, մէկ դարգուանչի կէր դուռ
կայնուկ, դարգուանչուն ըսեց.—Ճամբախ տուր, ես լէ էրթամ:

Ըսեց.—Զբմ թողի, անկարին գործ է:

Օր ըսեց չբմ թողի էրթաս ներս, հերստտաւ Գաւիթ, չա-
փալէխ մի զարկեց. զարկելուն վիզ ծռուաւ:

Ըսեց.—Գու սըն իս, օր զարկիր չափալէխով, իմ վիզ ծռուաւ:

Ըսեց.—Ես Մհերի տղայ Գաւիթն իմ:

Ըսեց.—Գաւիթ դո՛ւ իս:

Ըսեց.—Հա՛, ես իմ:

Ըսեց.—Օր Գաւիթն իս, յո՞րի իս էկի:

—Խանդութ խանու՛մի արով իմ էկի, ըսեց:

—Օր Խանդութ խանու՛մ առար, ընձի կ'էնի՞ս քաւոր քրզի:

Ըսեց.—Քու անուն ի՛նչ է, օր քրզի էնիմ ընձի քաւոր:

Թէ՛—Իմ անուն Գորգի է:

Ըսեց.—Օր էդմալ է, սան'էր Գաւիթ, քաւոր Գորգի:

Քաւոր Գորգին կայնաւ դուռ, Գաւիթ ներս մտաւ. մտաւ
ներս, տեսաւ, օր եօթ թագաւորի տղայ նստուկ էն ներս, սեղան
ղրած էն ու կեր ու խում կ'էնէն:

Գնաց եօթ թագաւորի տղին բարև տուեց Գաւիթ:

Տեղ տուեցին, նստաւ:

Ու բերեցին սաքներ, զարկին գինու մէջ, մէկ մէկ տուին
Գաւիթին (եօթ կանթէն պղինձ լցած, զրած էն մէջ տեղ). մէկ-
մէկ սաքան զարկին, տուին Գաւիթին թէ՛—Խանդութ խանու՛մի կե-
նաց իմէ՛:

—Գեւէն գրդլով կ'ջրուէ՛:

Չեռ մեկնեց ու պղինձ վերուց, վերուց դրեց բերնի վըն.
Խմեց ու պղինձ դրեց մէջ տեղ: Գինովցաւ Գաւիթ:

Եօթ թագաւորի տղեկներ թրեր քաշին ու կայնան ու պղի
զարկէն թրով Գաւիթին:

Քաւոր Գորգին դռնից խանչեց.— Սանէր Գաւիթ սանէր Գաւիթ, էդի Հարսնրի տուն չէ, ճահտուն է, ճանճ գլխուցդ ի վերևով կ'ընցնի, գլխի թռու:

Գաւիթ հէջոցաւ. թուր քաշեց ու թռաւ, կայնաւ. ու իդոնք Գաւիթի ահուց փախան, մէկ-մէկ դուս էկան, մէկ-մէկ չափալէն զարկին քաւոր Գորգուն. քաւոր Գորգու վիզ ջլիզ ծուկցին: Աւ խանչեց Գաւիթ.— Քաւոր Գորգի, արի մտի ներս, տուն մնաց մըզի, բագ մնաց հաւերուն:

Ըսեց.— Քաւոր Գորգի, ես ի՛մալ տեսնիմ Խանդուլ խանուսին:

Ըսեց.— Աւրբաթէ ուրբաթ Խանդուլ խանում քառսուն ջառիով կ'իգայ խաս բախէն, կ'երթանք հոնի, կ'տեսնինք:

Մանցին չուրի ուրբաթ. ուրբաթ օր էլան, գացին խաս բախէն. էլան, գացին խաս բախէն, արև նոր տարցաւ. Խանդուլ խանում քառսուն ջառիով էկաւ:

Քաւոր Գորգուն հարցուց Գաւիթ.— Խանդուլ խաթուն օ՞ր մէկն ա ըդոնց մէջ:

Ըսեց.— Խանդուլ խանում էն է, օր ըմի վրէն էրկու թիզ բանձր է:

Տուեց նշանք:

Գաւիթ էլաւ, գնաց յառէշ ուրանց, գնաց հասաւ Խանդուլ խանումին, գրկուաւ, ոչ մէկ, ոչ էրկու, ոչ իրեր, հարիր մի վար իրար պագեց:

Խանդուլ խանում ամչոցաւ. հերտտաւ ու ձեռ զարկեց Գաւիթի դոշ ու զարկեց պատ:

Փնչներուց արուն թալեց:

Աւ Խանդուլ խանում ընցաւ, գնաց խաս բախէն, մարմար հաւուղի վրէն:

Գաւիթ մնաց հոնի:

Խանդուլ խանում աղողցաւ ու պղի մանէր ջրի մէջ լողկներ. ըսեց.— Ախախըզ, աղողցի, արի լողկըցի:

Ըսեց.— Զբմ լողկնայ:

Ըսեց.— Յորի չոս լողկնայ:

Ըսեց.— Զբմ լողկնայ, միայ Գաւիթ քու հօր քաղաք կ'ենի
Գաւթի աւիրած:

Ըսեց.— Եւնչախրդ, վազի, գնա Գաւթի կուշտ, չուր ես իմ
չորեր հագնիմ ու գամ:

Խանդութ խանում հագաւ շորեր ու գնաց. էրեսի արուն
մարուն լուացին ու առան հետ ուրանց գացին. տարան ուրանց
օթախ, հաց կերան, սիրան առան:

Խարար յ՞ւստից տանք,— խարար Լոռուայ Համգից տանք:
Լոռուայ Համգէն գիր գրեց ու ճամբիսց Խանդութ խաթունի հօր
ու ըսեց թէ՛— Խանդութ խանում կ'հագուս, կ'խրուս ու կ'ճամբ-
խես՝ գայ ընծի համար:

Թագաւոր լէ կանչեց ուր վաքիլ, վազիր ու ըսեց.— Ի՞նչ կ'ը-
սէք իդա գրին, օր էկեր ա:

Ըսեցին.— Թագաւոր, դու գինաս, իմալ գինաս, հմալ էրէ:

Թագաւոր ըսեց.— Բերէք ախշիկ հագունք, խրունք, ճամբինք՝
էրթայ:

Թագաւորի սզտիկ տղէն ըսեց.— Թագաւոր, ըսեց, եր որ
քու ախշիկ ճամբիս էրթայ Համգոյ փահլենին, հրա Մհերի տղայ
Գաւթի ջուղար իմալ կ'իտաս:

Թագաւորն ըսեց.— Իմալ Մհերի տղայ Գաւթի:

Գացին ու խանչին բերին:

Եկաւ թամանգոյ էղաւ ու թագաւորի առէչ կայնաւ:

Թագաւոր ուր վաքիլ, վազիր շիւարան թէ՛ իդամլայ լէ մարդ
կ'էղնի:

Ու բերեցին էդ գիր կարտըցին Գաւթի առէչ:

Ըսեց.— Գաւթի, ըսեցի՛ր իդա գիր:

Ըսեց.— Լսեցի:

Ըսեց.— կեարնաս՝ էրթաս Համգոյ փահլենի հետ կուր էնիս:

Ըսեց.— Կ'երթամ:

Ըսեց.— Օր ընդոր սպանեցիր, իմ ախշիկ քու՞ն է, թէ դու սպանուար, կ'իտանք ընդոր:

Դաւիթ էդ տեղէն ետ դարձաւ ու գնաց. գնաց ձիու կուշտ, ձին թամբեց, գամեց ու դուս քաշեց, հեծաւ. էկաւ, կայնաւ Խանդուխտ խանու՞մի փանջարի առէչ ու Խանդուխտ խանու՞մին ըսեց. — Խանդուխտ խանու՞մ, ես կ'երթամ կոխ:

Թէ՛ — Վի՛ր հետ կոխ կ'երթաս:

Թէ՛ — Համզայ փահլեանի¹⁾ վրէն պղի էրթամ կոխ, ըսեց. խանու՞մ, մեր կոխ քառսուն օր կ'քաշայ, քառսուն օրն օր թըմաւ, թէ էկայ, ես կ'իգամ, թէ չ'էկայ, դու կ'հագնիս մարդանակ շոր ու կ'աննիս քու պղտիկ ախպէր հետ, կ'իգաս իմ ջամդակ ջամդկներու մեջէն կ'ջոկիս ու թաղել կ'իտաս²⁾:

Դաւիթ ձին հեծաւ ու քշեց. քշեց գնաց, շատ քիչ Լստուած գինայ, մէկէլ տեսաւ յառջեանց մէկ հմալ թող ու տու՞ման կ'իգայ, օր Լստուած ազատայ. էկաւ, տեսաւ օր սրբի Սարգիսն է՞³⁾:

Դաւիթ գնաց, օր սրբի Սարգսին համբուրէր. Սրբի Սարգիս ըսեց.

— Հանէ քու սրբի նշան ես համբուրեմ, նոր դու ընձի համբուրէ: Հանեց սրբի նշան, համբուրեց սրբի Սարգիս. էն լէ սրբի Սարգսին համբուրեց:

¹⁾ Ը. վարիանտում Դաւիթ Խանդուխտի առաջարկութեամբ է գնում Լճոյ Համզի Շապգոնց Խորասանու գլուխը բերելու:

²⁾ Բ. վարիանտում Խանդուխտ խաթունը Դաւիթին ճանապարհ գնելիս, պատուիրում է Քարսոյ դաշտը չգնալ կոուելու, այլ Չիմանին, որովհետեւ Օղան-Տօղան-Չանջլիտանը (ըստ վարիանտի), որի հետ պիտի կուէր Դաւիթ, սէհրական է, երկնքի երեսով գալիս, հարուածում է հակառակորդին և գետին գլորում: Դաւիթը չի կատարում նորա պատուէրը և վտանգից միայն Չիմով-Յովանի ազգարարութեամբ է ազատուում, յիշելով Լստուծոյ անունը:

³⁾ Ը. վարիանտով սուրբ Սարգիսը Դաւիթին պատահում է «Ջանգառայ դուրան»-ում, որ մի սարահարթ է Երբրանի և Լճոսու մէջ:

—Դէ գնա, ըսեց, Աստուած խըա բըզի էղնի:

Ու Դաւիթ ուր ձին բշեց, գնաց. գնաց, տեսաւ, օր առջևանց մէկ թող ու տուճան լէ կ'իգայ, էկաւ, օր Քեռի-Թորոսիկն է:

Ըսեց.—Շուն շան օրտի, պլէճկերի աղայ, մըլըբը Յասուն ախշիկ չիկէր, օր դու էկար Կապուտկող մէկ ախշայ արով. գինաս էզի Պիրարադն է, Խողըադին է, Մօրամէլին է, Հնդայ ամիրէն է, Բաղդըդու խալիֆէն է ու քու մեծ ախպերն է, ըսեց,—էզի Համզայ փահլեան է, ըզոր ճըկըթի մասնիք կ'էղնի բըզի ձեռաց բլազուկ:

Ըսեց.—Քեռի-Թորոսիկ, էղեր ա բան ու պրծեր ա, պզի էրթամ կոխ, եա Աստուած ընձի կ'իտայ, եա Համզայ փահլեանին:

Ու քշեց ձին. քշեց, հասաւ Համզայ փահլեանի քաղքի վերև: Քեռի-Թորոսիկ մնաց աղօթք էնելու:

Չին թորկեց Քեռի-Թորոսիկ կուշա ու ինք գնաց քաղքի մէջ. գնաց ու հարցուց Համզայ փահլեանի բօշկ ու սարէք:

Նշանց տուեցին:

Գնաց, մտաւ ի ներս. մտաւ ներս, տեսաւ, օր Համզայ փահլեան նստուկ էր աթոռքի վրէն. գնաց բարև տուեց, բարև առաւ էն լէ:

Ու Համզայ փահլեան հարցուց թէ՛—Ի՞նչ մարդ իս:

Թէ՛—Ես Խանդուլ խանումի մարդն իմ:

Թէ՛—Յո՞րի իս էկի:

Թէ՛—Իկեր իմ, ըսեց, մէկ նշանարան մի տաս, տանիմ Խանդուլ խանումի համար:

Համզայ փահլեան ճըկըթի մասնիք հանեց, թալեց թէ՛—Մ'ա, տար Խանդուլ խանումի համար:

Դաւիթն առաւ, էցկեց, էլաւ, էկաւ յընթէ տակ:

Հանեց թալեց թէ՛—Մ'ա իդա, ի՞նչ էնիմ:

—Մ'ա ի՞նչ կ'ուզիս, օր տամ տանիս Խանդուլ խանումի համար նշանարան:

Ըսեց.—Քու գլոխ կ'ուզիմ, օր տանիմ Խանդուլ խանումի

Համար նշանարան, ուրիշ բան չըմ ուզի¹⁾:

Համոզոյ փահլէան հերոստաւ ու էլաւ, հասաւ Գաւթին: Լը-
կուս լէ զուտոոյ մարդ—հասան, առին իրար, բիրադի ջարտաւ:
Գաւթիմ հերսլամիչ էղաւ ու քաշեց Համոզոյ փահլէնին զարկեց
գետին. ու թուր քաշեց, գլոխ կարեց²⁾: թուր զարկեց մըչ գլխուն
ու դրեց փիջի վռէն ու գնաց:

Գնաց հասաւ Քեռի-Թորոսի կուշտ³⁾: հեծաւ ուր ձին, մզբախ
զարկեց գլխու մէջ, դրեց վըր փիջին ու գնաց: Չուրի էրթալն ու
գալն քառսուն օր թըմաւ. քառսուն օրն օր թըմաւ, Խանդութ
խանուժ հագաւ մարդանակ շոր, հեծաւ մէկ ձի, սիլահ-սարար վռէն
կապեց, ուր ախպեր լէ հետ վերցուց ու էկաւ էկաւ Գաւթի
առէչ⁴⁾: օր էկաւ Գաւթի առէչ, գլոխ տուեց Քեռի-Թորոսկին:

Խանդութ խանուժ քաշեց ուր գուրղ ու Գաւթին գուրղ
մի զարկեց:

Գաւթիմ մարտալ տուեց գրղի դէմ. զարկեց Խանդութ խա-
նուժ ու ետ դարձաւ փախաւ:

¹⁾ Գաւթի ալդ խօսքերին Ը. վարիանտոյ Համզան նկատուժ է Գաւթին. Գու ծուս Յրգոյ փոկերուց իս, — դու ծուս Յարգսի սերնդից^(*) ես:

²⁾ Ըստ Ը. վարիանտի Լօսոյ Համզի գլոխն ու Շապգոնց: Խորասանու գլոխ կարեց, — ուրեմն երկուսի դէմ էր կուում Գա-
ւթիմ:

³⁾ Ը. վարիանտոյ Քեռի-Թորոսն էլ օգնում է Գաւթին այս կուսի մէջ. ահա վարիանտի իսկական բառերը. Եկաւ (Գաւթիմ) տեսաւ, օր Քեռի-Թորոս մէկ բանձր տեխ կայներ ա. ըսեց. — Քե-
ռի-Թորոս, յուգոյ մարդ տեսար փախնոդ:

Թէ՛ — Չըմ տեսեր ի, հմայ քեանի մի ժժմունք իդա ձորու
մէջ լցուկ ա:

Եկաւ, տեսաւ, օր Քեռի-Թորոս, ուրնէ շատ արունք էրեր ա:
Ըսեց. — Քեռի-Թորոս, կոխ ես իմ էրի, արունք դու շատ իս
էրի ընձնէ:

⁴⁾ Ը. վարիանտոյ Գաւթիմ Խանդութին պատահում է Ջան-
գուայ գուրանում:

Դաւիթ ձին քշեց վրէն ու գուրդ քաշեց, օր զարկէր. հասաւ, օր զարկէր, յեղբւանց ծամեր թողեց:

Դաւիթ ըսեց.— Հէ՛ գիգի, ֆող, իդա լէ էրկու դագ կ'ընրիս իմ գլոխ. իդա գուրդ պղի մնայ իմ կշտէս ի կախ, չուրի էրթամ, զարկիմ քու հօր քօչ ու սարին:

Գնաց, հասաւ Կապուտկող. օր հասաւ, գուրդ թալեց, քօչ ու սարի բագան բլուց:

Տարաւ գլոխ, դրեց թագաւորի առէշ:

Աւ թագաւոր բերեց դհոլէի, զուռնաչի ու Խանդուլ խանու՛մ իցկեց Դաւթի էղև, տարան ժամ ու պսակեցին:

Դ.

Պ Զ Տ Ի Կ Մ Հ Ե Ր

Տարի մի ընցաւ, մէկ տղայ էղաւ, անուն դրին Մհեր¹⁾:

Մհերն էղաւ տըսնուհինգ տարեկան:

Դաւիթ էլաւ, գնաց թագաւորին խնդրուաւ թէ՛— Ընձի իղին տաս, ես էրթամ իմ քաղաք:

Ըսեց.— Օր կ'երթաս, Ըստուած հետ քրդի էղնի, գնա՛. ըմա, ըսեց, Մհերին չըմ իտայ տանիս, Մհեր մնայ իմ կուշտ:

Դաւիթ առաւ ուր կնիկ ու գնաց. գնաց, հասաւ Չմիկեր Սուլթանի հողի մէջ. Չմիկեր սուլթանի ակշիկ խոշուն էրեց²⁾ ու

¹⁾ Ա. վարիանտով այս Մհերի մականունը «պղտիկ» է. «տղի անուն դրեցին պղտիկ Մհեր»: Այսպէս է կոչուում, երևի, Առուծանու Մհերից զանազանուելու համար: Երեսայի ձեռքը խուփ էր, և երբ հայրը սղմելով բաց արեց, մէջը լերդ լերդ արին տեսաւ,— իդա ընձնէ շատ արունք պղի էնսյ— գուշակեց Դաւիթ:

²⁾ Ա. վարիանտով իլլամցիք են Դաւթի առաջը կտրում իրենց անպատուութեան վրէժը հանելու համար. Դաւիթ Խանդուլի մօտ գնալու ժամանակ սիրային յարարերութիւն էր ունեցել իլլամցոց սօֆու (իշխանի, աղայի) այրի կնոջ հետ: Սասունայ ծուռ Դաւիթն էղնես, գաս մըր աղի կնիկ սիրիս, մըր կոխ կոխ ա, ասում էին իլլամցիք:

էկաւ Դաւթի առէշ.—Յուդա կոխ պզի էնինք:

Դաւիթ վերցուց թէ՛—Իմ հետ ուղուշալ կայ, իմ ուղուշալ տանիմ, հասու՛մ ուր տեղ ու ետ դառնամ գամ, քու հետ կոխ էնիմ:

Տարաւ Խանդու՛թ խանու՛մին հասուց ուր տեղ իրկուն մտաւ մըշ տեղին, քնաւ. մնաց յարի լուսուն, լուսուն հեծաւ ուր ձին ու էկաւ Չմկեր սուլթանի քաւշան, օր պզի կոխ էնէր:

էկաւ, տեսաւ, օր խոշուն հոն չէր. օր խոշուն հոն չէր, ձիուց իջաւ, ձին թորկեց մէկ տեղ ջրի վրէն ու յինք շորեր հանեց, օր լողկնայ ու ուրին թաւեց մըշ ջրին. ինք օր լողկնալու հետն էր, էգ ջրի պուռկ խամբըլը էր, զարկին մղըլսով ուրին¹⁾:

Իռուաց Դաւիթ, ձէն գնաց Սասուն:

Քեռի-Թորոսիկ, Փոքրիկ-Ճնճղիկ, Յոան-Վէգոն, Խոր-Մանուկ, Չինով-Յովան²⁾ բիրադի քոման ու էկան էգ տեղ կայնան:

Ու ըսեցին.—Դաւիթ, էգ ո՞ր զարկեց բըլի:

Ըսեց.—Չըմ գինայ, որ զարկեց, խամբըլներու միջէն մէկ էլաւ ու զարկեց:

Գացին խամբըլներու մէջ գացին, գտան, տեսան Դաւիթն օր բոռացեր էր, մեռեր էր ահու: Եւ ատէկ Չմկեր սուլթանի ատէկն էր:

¹⁾ Ա. վարիանտով Դաւիթ փախչում է պատերազմից, որովհետեւ չէր կարողանում կռուել, խաթմոց քաղաքում իս պատահամբ ձեռքը «համայլի» (նորա ծոցում համայլի և սանր կար) վերայ դնելու պատճառով: Նա կամենում է անցնել կամուրջով, բայց իմաստուն ձին չի անցնում (սիրողի ատէկ կարմըլի տակն էր): Դաւիթ ձին գետի միջով բշում է, ձին խրուում է ցեխի մէջ և իւր շորերն էլ ցեխոտում է. մինչդեռ, ձիուց իջնելով մաքրում էր իւր «խապուտը», սիրողի աղջիկը նեա ու աննղով սպանում է Դաւիթին:

²⁾ Ա. վարիանտով Դաւիթն օգնութեան են գնում Քեռի-Թորոս, Յոան-Վէգոն, Ճնճղիկ-Փոքրիկ, Չինով-Յովան, Ճոս-Վիրապ, Խոր-Վիրապ, Խոզբազին (°):

Գաւիթն օր իմցաւ Չմկեր սուլթանի ախիկն էր, ըսեց.

— Էդ իմ սերմն էր, օր ինձ սպանեց¹⁾:

Գաւթին վերցուցին ու էկան:

Յոան-Աէգոն առէչ էկաւ. էկաւ, Խանդութ խանուսին ըսեց թէ՛ — Խանդութ խանուս, Գաւթ մեռաւ, ես քրդի անուշ:

Խանդութ խանուս օր սպանելու ձէն ըսեց, ինք լէ վերւանց թալեց ցած ու ընկաւ, մեռաւ:

Գաւթն առան, էկան. բերին, Հասուցին էդ տեղ. էկան, տեսան, օր Խանդութ խաթուն ընկեր է ու մեռեր:

Քեռի-Թորոսիկ ըսեց. — Էդ ո՞րն ըսեց, օր զինք թալեց ցած, մեռաւ:

Ըսին թէ՛ — Յոան-Աէգոն ըսեց:

Ըսեց. — Յո՞րի չ'սրբար, չուր գէնք Հարցուցէնք՝ էրեխայ էղե՞ր ա, չ'էղեր ա:

Գացին, տեսան, օր ծծերուց կաթ կ'իգայ, ըսին. — Օր Հմալ է, էղեր ա:

Բերին էրկուս լէ պատընքեցին ու տարան, Հորեցին:

Եօթն օր սուգ կապեցին:

Քեռի-Թորոսիկ խանչեց ուր տղեկներ. — Էրթանք, առնենք մեր տղէն, գանք:

Ու Քեռի-Թորոսիկ, Յոան-Աէգոն, Փորրիկ-Ճնճղիկ, Խոր-Մա-

¹⁾ Բ. վարիանտի մէջ Գաւթի մահը պայտէս է պատմուած. Գաւթ իւր քեռու՝ Չինով-Յովանի որդու Հարսանիքն էր գնացել, երգուելով կնոջը՝ քառասուն օրից յետոյ անպատճառ վերագառնալ. երգուելիս սխալմամբ ձեռքը, փոխանակ սանրի, խաչ պատարագի վերայ էր զրելը: Սուլթան-Գրմիտ թունաւորած նեառաննեղով սպանում է Գաւթին, երբ վերադարձին պիտի անցնէր Մեղրագետի կամրջով: Գուռկէ-Ջալալին Գաւթի զիակը բերանով մինչև Սասուն է տանում:

նուկ, Չինոյ-Օհան գացին. հասան Կապուտկոյ¹⁾:

Գացին թագաւորի կուշտ ու ըսին.— Թագաւոր, մեր տղէն տուր տանինք, Գաւթին սպանեցին:

Թէ՛ — Ո՞ր սպանեց:

— Զմլկեր սուլթանի ախչիկն, ըսեցին, սպանեց:

Թագաւորն ըսեց թէ՛ — Տղայ չ'էղեր ա Գաւթին:

Ընդոնք ըսեցին թէ՛ — Էղեր ա:

— Հա՛, ըսեց, էղեր ա, ըմա մեռեր ա:

Քեռի-Թորոսիկն ըսեց.— Օր մեռեր ա, մերք մեր ջնսի գերեզման կ'ճանչնանք. եօթ շէնք է երկէնք:

Ըսեց.— Քեբէք, էրթանք, տեսնանք:

Գացին, տեսան, օր էրկու շէնք չէր կոյի:

Ու ըսեցին.— Թագաւոր, մեր տղէն դօ՞ր ա, տուր տանինք, էղիկ մեր ջնսի գերեզման չէ:

Թագաւորն ըսեց թէ՛ — Զ'կայ:

Քեռի-Թորոսիկն ըսեց.— Բոռա՛, Չինոյ-Յովան:

Չինոյ-Յովան բոռաց մկ. օր բոռաց, ձէն գնաց, հասաւ Մհերին (Մհեր տարած էն եօթ դարգըճոյլ ներս էն կոխած, դճոյլ զուռնայ կ'զարկէն, օր Մհեր չ'լսէր էդոնց ձէն):

Ըսեց.— Չինոյ-Յովան, մէկ լէ բոռա՛:

Ձէն էկաւ, Մհերի անկաջ ընկաւ:

Գհոյլ, զուռնէն դհա զըլեցին:

Գհոյլուն, զուռնաշուն ըսեց.— Ըդոնց ձէն կտրէք, իդա իմ ջնսի ձէն էր՛ էկաւ:

Գհոյլին, զուռնաչին դհա զիլ զարկեցին դհոյլ ու զուռնէն: Հորդեց Մհեր ու տուեց զըմէն մէկդէն ու գնաց դուս:

Գնաց, հասաւ ուր հրօխպերներու կուշտ. օր գնաց, հասաւ

¹⁾ Ը. վարիանտով Կապուտկոյ գնացողներն են. Քեռի-Թորոս, Չինոյ-Յովան, Ճնճղիկ-Փորրիկ, Յասն-Վէգոն, Ճոռ-Վիրապ, Խօր-Վիրապ և Սող-Բաղին: Խողբադնի պատեղ հանդէս գալլը Եասունցիների հետ՝ մերք պատմողի յիշողութեան սխալ ենք համարում, թէ էն երկու անգամ կրկնուում է նշյն անունը:

Հրօխակներսու կուշա, ըսեց.— Յո՞րի իք էկի:

Ըսեցին.— Քու հէր սպանեցին, էկեր ինք քրզի տանինք:

Հարցուց թէ՛— Ո՞րն է սպանէ իմ սպայուն:

Ընդոնք լէ ըսեցին թէ՛— Չմկեր սուլթանի ախշիկն է սպանի:

Առան Մհերին ու գացին¹⁾:

Տարան, Դաւթի շորեր հագուցին, ու Դաւթի սիլահ կապեց վրէն. ձին լէ քաշին, բերին էդ տեղ, ու Սրփ նշան համբուրեց, դրեց ծոց, ու ընկաւ երկրներ ջարտել. էլ թաց ու չոր չհարցու: Քշեց Չմկեր սուլթանի քաղքի վրէն. Խոր-Մանուկ²⁾ լէ հետ տարաւ. Չմկեր սուլթանի քաղք աւիրեցին³⁾:

Ու էդ տեղէն առան, գացին ուրիշ քաղքի⁴⁾ մի վերայ. գացին, տեսան, օր էդ քաղք իսկի մարդ չ'կէր. Մհերի ահուց բիրադի փախած էն սարեր:

Տեսան էդ քաղքի մէջ մէկ բուխերկից ծուխ կ'էլնէր. բշեց

¹⁾ Ա. վարիանտով՝ Մհեր լսելով հօր մահը, լաց ու քիթ ու բերնի վրէն ընգաւ. եօթ օրից յետոյ միայն տեղից վեր կացաւ և գնաց Սասուն:

²⁾ Ա. վարիանտով՝ Մհերին միանում է Ճոռ-Վիրապ կամ Խոր-Վիրապ. պատմողը շփոթում էր այստեղ այդ երկու անունները: Խոր-Մանուկը Քեռի-Թորոսի որդին է, բայց Խոր-Վիրապի և Ճոռ-Վիրապի ծագումը յայտնի չէ վարիանտի մէջ:

³⁾ Բ. վարիանտով՝ Մհերը իւր հօր հոգին հոգալուց յետոյ, տէրտէրի հագուստով ծպտուած՝ գնում է Խլաթ. պատահում է Սուլթան Գըմիթին, որ ջրաղացի քարը «քարման» (իլիկ) էր շինել և թել էր մանում: Մհեր ճանաչում է նորան և տեղեկանալով, որ, հօրն սպանելուց յետոյ, իրեն էլ է ուզում սպանել. խորամանկութեամբ իւր մօտ է կանչում և երկու կտոր անում: Աւերում է Խլաթը, մի կատու էր ձացել, նորան էլ Չինով-Յոփանի օգնութեամբ «թունդրան ակից» հանելով սպանում է:

⁴⁾ Ա. վարիանտով՝ Մհեր միայն մի քաղք՝ Խլաթն է աւերում, և այստեղ են լինում մի տէրտէր իւր կնոջ և դստեր հետ (Փիրմուս, Դեղձոն):

ձին, էկաւ հողի, դուռ կայնաւ. ու ձիուց իջաւ, ու ձին կապեց
դուռ, էկաւ, մտաւ ներս. էկաւ, տեսաւ մէկ հալիւոր մարդ, մէկ
լէ ուր ախշիկ նստուկ էն էդ յողէն:

Բարև տուեց հալիւորուն Բարև առաւ, ըսեց.— Բարով, հա-
զար բարով, Մհեր:

Ըսեց.— Դու Բնչ գինաս, օր ես Մհերն իմ:

Ու նստաւ:

Ախշիկ էլաւ, գնաց, Մհերի ձին քաշեց ներս, կապեց:

Հալիւորու անունն լէ Փիրմուս է, ախշկայ անունն լէ Դեղձոն:

Ըսեց.— Փիրմուս, իդա բաղաք յորի մարդ չկայ:

Ըսեց.— Էդոնք ըմէն բու յախուն փախած, էլած սարեր:

— Ախշի, էլն տես, ճամբով ձիաւոր կ'իդայ:

Ախշիկն էլաւ, տեսաւ, օր մէկ ձիաւոր կ'իդայ:

Էկաւ, օր Խոր-Մանուկն է. էկաւ, ձիուց իջաւ. քաշեցին ձին
ու ներս կապեցին:

Ու Խոր-Մանուկ էկաւ, հոն նստաւ:

Մնաց էդ տեղ յարի լուս:

Ըսեց.— Փիրմուս, Դեղձոն տուր Խոր-Մանուկին:

Տուեց Խոր-Մանուկին Դեղձոն:

Մհեր Խոր-Մանուկին թողեց էդ տեղ, ու քաշեց ուր ձին,
հեծաւ, ընկաւ ճամբախ¹⁾:

Քշեց Պաճիկ թագաւորի քաղքի վըն. բշեց քաղքի վըն ու
քաղաք առաւ ձեռ ջարդեր:

Ջուար տարան Պաճիկ թագաւորին թէ.— Մհեր մկայ բու
քաղաք կ'աւիրայ:

Պաճիկ թագաւոր լէ առաւ ուր վաբիլ, վազիր ու սինօզներ
ու էկաւ Մհերի առէչ, ըսեց.— Մհեր, իմ քաղքին դագմիշ մ'էղնի:

¹⁾ Ա. վարիանտով Գուռկէ-Ջալաթիկ սանձը Մհերից խը-
լով նորան Բաղդադ տարաւ: Մհեր առնում է Խալիֆայի ազնի-
կը, բայց առանց կռուի:

Ըսեց.— Ի՞նչ արով դագմիչ չ'էղնիմ:

Ըսեց.— Էն ժամանակ, ինչ քու հէր Մարամէլիբի հետ կռիւ էրեց, ես ու քու հէր ախտ ու շարժ ենք էրի:

Թէ՛— Ի՞նչ ախտ ու շարժ էք էրի:

Ըսեց.— Ախտ ու շարժ ենք էրի քու հօր հետ, օր ընձի ախշիկ էղնի, քրդի տղայ, իմ ախշիկ տամ քու տղին, օր քրդի ախշիկ էղաւ, ընձի տղայ, քու ախշիկ տաս իմ տղին: Ըսեց.— Մկայ Աստուած քրդի քու հօրն է տուի, ընձի լէ Աստուած ախշիկ է տուի, տենանք դու կ'առնիս իմ ախշիկն:

Ըսեց.— Տեսնամ, օր քու ախշիկան հաւնայ, կ'առնիմ, թէ չհաւնայ, չըմ առնի. օր չ'հաւնայ՝ քաղաքդ կ'աւերիմ:

Աւ առաւ Մհեր, գացին ախշկայ կուշտ. ախշկայ անուն լէ Գոհար խանու՛մ է. օր տեսաւ, հաւնաւ. ախշիկ լէ տղէն հաւնաւ:

Մէկ ժամանակ մացին հոնի:

Գոհար խանու՛մ աստղապաշտ էր. էն մէկ օր իրկուն Մհերն ըսեց Գոհար խանու՛մին թէ՛— Էլի իմ աստղ իշկէ, տես ի՛մաւ լէ իմ աստղ:

Էլաւ Գոհար խանու՛մ եզոր աստղ իշկեց, ըսեց.— Քու աստղ շատ դուարժ է, ըմա քու ազգի մէջ մէկ շատ նեղած է, ըհա՛ լուսուն է, ես իրկուն է՝ գլոխ կ'զարկին:

Մհերն ըսեց.— Խոր-Մանուկն է. ըսեց՝ Գոհար, իմ ձին քաշէ, հեծնիմ: Գոհար խանու՛մ քաշեց դուս. ձի մ'լէ ուրին դուս քաշեց. երկուս լէ ձիան հեծան, քշեցին, գացին, հասան Փիրմուս հաւ լիւորու կուշտ. օր հասան հալիւորու կուշտ, Գեղձոն էլաւ, էկաւ երկու ձին լէ քաշեց, տարաւ, կապեց ներս:

Աւ Մհերն ու Գոհար խանու՛մ գացին ներս, նստան:

Մնաց յարի լուսուն. օր լուսցաւ, մէկ լէ տեսան Աստղիկ Երզնկանցին¹⁾ էկաւ Մհերի վրէն կռիւ. արև նոր էր ծաղկի, էկաւ, հասաւ էդ տեղ:

¹⁾ Ա. վարիանտով՝ Աստղիկ Երզնկանցի և Երրեմէ պատմողը

ՄՏերի ձին լէ թամբին, գամին ու դուս քաշին. ՄՏեր էլաւ ուր ձին չեծաւ, սիլահճ սարար վռէն կապեց ու եկաւ եդ տեղ մը յգանն Երկուս առան իրար, իրարու գուրղ կ'զարկին. յարի կէս օրին գուրղ կ'զարկէն իրարու, մէկ-մէկու չըն ախտի:

Գոհար խանուժ տեսաւ, օր Աստղիկ¹⁾ Երզնկանցին շատ կ'զօռէ ՄՏերին, չըմքի էնի վերեանց կ'կուռէր, ՄՏեր ներքեանց. ՄՏեր գուրղ կ'զարկէր, չըր քիսնի Աստղիկ Երզնկանցուն, էն լէ կ'զարկէր՝ Սըփ նշան չըր թողիք ընդոր վնաս եղնի:

Գոհար խանուժ ըսեց.— Աստղիկ Երզնկանցի, ՄՏեր խամ տղայ է, շատ մը՛ զօռի ՄՏերին, Տըլա խկի կուռ չ'էրի, նոր կուռ կ'էնի:— Սիւտակ ծծեր դուս թալեց Գոհար խանուժ, ըսեց.— Քըզի իդա սիւտակ ծծերու մէջ կ'պահիմ, ՄՏերին շատ մը՛ զօռի:

Աստղիկ Երզնկանցին օր տեսաւ սիւտակ ծծեր, կայնաւ. օր կայնաւ, ՄՏեր տըկեանց գուրղ զարկեց. օր զարկեց, առաւ սիրտ, պառեկից դուս տուեց:

ՄՏեր գիցաւ թի չկպաւ, ըսեց.— Անջախ էր եկի իմ գըրբ օր զարկէնք, դու չթողեցիր. եօթ տարի, ըսեց, դու ընձի եղնիս մէր ու քուր: Մէկ լէ տեսաւ, օր Աստղիկ Երզնկանցին վերի դէն պադաւ գետին, էղաւ մէկ մէյիդ ու եդ տեղ էրկնցաւ:

ՄՏեր ետ դարձաւ, եկաւ Փիրմուս Տալիւորու կուշտ նստաւ. ու Տարցուց թէ՛.— Իդա Աստղիկ Երզնկանցին յորի է եկի մըր վրէն կուռ:

Ըսեց թէ՛.— Գեղձոն՝ իմ ախչիկ՝ Աստղիկ Երզնկանցու նշանածն է, ընդոր արող էկեր է կուռ:

Գիշեր մնաց եդ տեղ:

Լուսուն էլաւ, վերցուց Գոհար խանուժ, Գեղձոն, Խոր-Մանուկ ու Փիրմուս. էլան, գացին Պաճիկ թագաւորի բաղաք. տա-

ասուժ էր Երկրանցի, բայց երբ ուշագրութիւն էի դարձնում այդ տարբերութեան վերայ, իսկոյն ուղղում էր:

¹⁾ Սպարդկերացին (Չար Աստղիկ, էր անուանում):

բաւ, դրեց Գոհար խանուսի օթախներու մէջ:

Աւ Մհեր հեծաւ ուր ձին. կռիւ պղի էնէր, յարի եօթ տարին թըմէր:

Քչեց Լօռուայ Շարի-արքան թագաւորի քաղքի վրէն, քաղքի ճոթն առաւ, առաւ ջարդեր:

Շարի-արքան խոշուն էրեց ու ըդոր հետ կռիւ էրեց. ինչ-տըդր խոշուն բերեց, Մհեր ջարդեց:

Շարի-արքան թագաւոր հարցուց Մհերին թէ՛—Քու հունար ի՞նչ է, դու իդըմլայ կռիւ կ'էնիս:

Ըսեց.—Իմ հունար իմ թւերն է—հպարտցաւ:

Ըսեցին.—Բերէք բաման թալինք, բռնինք:

Քաման թալեցին, բռնեցին. օր բռնեցին՝ տարան, թալին հորու մէջ: Աւր ձին թուր խլեց ու գնաց, ճամբախ կտրեց. օր մարդ էրթէր՝ ձին կ'սպանէր:

Մհերին լէ տարան, քառսուն գաղական հոր թալին:

Մէկ պառաւ կէր քաղքի մէջ. էդ պառաւուն եօթ ախլիկ կէր, պատիկ ախլիկ հարիր տարեկան էր. էդ պառաւ դանեց դան հաց կ'տանէր, օրէն էրկու դան կ'թալէր հորու մէջ:

Շարի-արքան եօթն օր իրարու վրէն արձիճ բռնեց ու հալեց: Պառաւն էկաւ Մհերին ըսեց.—Արձիճ է քոմած, կ'հալին, օր ընան վրէդ:

Ըսեց.—Ըրա՛ ի՞նչ էնիմ, պառաւ, գնա՛ ընձի մէկ հատ բահ բի:

Բերեց բահն ու թալեց հորու մէջ:

Պառաւ ըսեց.—Էդ հորու կշտի հետ մէկ խարարայ հոր մի կայ, ծակէ, ընցի էն մէկ էլ հորու մէջ:

Ըսեց.—Եօթ ղիտր անլուայ բուրդ բի, մէկ ղիտր կուպր:

Գնաց ու պառաւ առաւ, էկաւ, թալեց հորու մէջ:

Մհեր զարկեց անլուայ բուրդ ծակի վրէն, կուպր լէ վրէն, պառեկ տուեց դէմ:

Շարի-արքան¹⁾ հալեց արձիճ ու լցեց հորու մէջ. մնաց յա-

¹⁾ Ա. վարիանտով Մհերը կռիւ է գնում ոչ թէ Լօռայ Շա-

րի արձիճ պաղաւ, ընդոնք թողին, գացին:

Պառաւն էկաւ, կայնաւ հորու վրէն թէ՛—Մհեր, արձիճ լցին հորու մէջ, արձիճ պաղաւ, արի բըզի հանիմ:

Ըսեց.—Ի՞մալ ընձի կ'հանիս, չըս կեարնայ ընձի մինակ հանի:

Ըսեց.—Ի՞մ ախիկներ կ'առնի՞ս, օր բերիմ իմ ախիկներ, քըզի հանիմ:

Ըսեց.—Վառնիմ գնա քու ախիկներ քի, մէկ լէ շիրիդ քի հետդ ի: Պառաւ գնաց, առաւ ուր եօթ ախիկ, շիրիդ հետ էկաւ: Եկան, կայնան հորու վրէն ու շիրիդ կակին հորու մէջ: Մհեր կապեց շիրիդ ուր մէջք, քաշին, հանին, ու ժողվեց ախիկներն ու պառաւ լցեց հորու մէջ:

Եկաւ էն արձիճի վրէն մէկ սաղրինջ խաղցաւ:

Եդ տեղէն էլաւ, էկաւ քաղքի մէջ. էկաւ, տեսաւ, օր մէկ ջուրեակ հինած կ'էնէր, հինած կ'էնէր ու կ'իլէր. հինածի կէս սև էր, կէս սիւտակ էր:

Ու հարցուց թէ՛—Յո՞րի մէկ սև կ'հինիս, մէկ սիւտակ ու կ'իլաւ հետ:

Գործըբար ըսեց.—Ես Սասունայ իմ, Մհերին բռնեցին, թալին հորու մէջ, էն արով մէկ սև կ'հինիմ, մէկ սիւտակ ու կ'իլամ:

Եդ տեղէն Մհեր գնաց Շարի-արբանի կուշտ ու ըսեց.—Շարի-արբան, ըսեց, ես Սասունայ իմ, ես Մհերի ձիուն շատ սայիտուտեն էրեր իմ, Մհերի շորեր տու հագնիմ, Մհերի սիւրհ տու կապիմ, էրթամ ձին բռնեմ ու բերիմ քըզի. բաւականի խոշուն լէ տու հետս ի տանիմ, օր ձին բռնեմ, բերիմ:

Խոշուն տուեց ու առաւ հետ, գնաց. տարաւ, իցկեց խոշուն

րի-արբանի վերայ, այլ Հալարու խալիֆայի վերայ, որը նշանուած էր Մհերի կնոջ վերայ, և Մհեր ամուսնանալով՝ յափշտակել էր նորա ձեռքից: Հալարու խալիֆան խորամանկութեամբ Մհերին բռնում, հորի մէջ է ձգում. պառաւը հանում է, ինչպէս և այստեղ:

մէկ ձորու մէջ, ինք կայնաւ խոշունի յեղև ու ձիուն ձեն տուեց. ձին ճանչըցաւ Մհերին, ձին խոշունի առէչն առաւ, ինք լէ յեղևանց. ջարտեցին, էրկուս էկան իրարու կուշտ, մանցին ինք ու ձին մինակ:

Գնաց ձիու կուշտ, ձիու աչքեր պագեց, թուրն առաւ ձեռու հեծաւ ձին, էկաւ, կայնաւ Շարի-արքանի քոչկու սարի յառէչ:

Ըսեց.— Շարի-արքան, քու վախտին հազը կեցի՛— ես էկայ: Շարի-արքան դուս էլաւ թէ՛— Գու ո՞րն իս:

— Ես, ըսեց, Մհերն իմ:

— Զէ՞, ըսեց, արձի՞ճ հալի, լցի վըէզ ի՞:

— Արձի՞ճ ծակի, դուս էկայ, ըսեց: Աւ զարկեց Շարի-արքանի գլոխ կտրեց:

Էդ տեղէն գնաց հորու վըէն կայնաւ. պառաւն ու ուր եօթ ախշիկ հորու միջէն հանեց, բերեց գործըրարի կուշտ, առաւ գործըրար լէ հետ, էկաւ Շարի-արքանի դիւան:

Պառու պզտիկ ախշիկ տուեց ջուլեակին ու ջուլեակ դրեց թագաւոր Շարի-արքանի տեղ:

Էդի մնաց էդ տեղ:

Մհեր հեծաւ ուր ձին ու զարկեց, էկաւ Պաճիկ թագաւորի կուշտ, ու Պաճիկ թագաւորին խնդրուաւ թէ՛— Կ'խնդրիմ իմ նշանած տաս, ես էրթամ հասնիմ իմ թախտին:

Պաճիկ թագաւոր ըսեց թէ՛— Որտի, եր օր կ'երթաս, Աստուած քու բան աջողայ, գնա՛:

Պաճիկ թագաւոր բերեց մէկ ձի լէ հազրեց Գոհար խանու-մին. Գոհար խանու՛մ հեծաւ ձին. Խոր-Մանուկ լէ, Գեղձոն լէ հետ վերուց, ու շնոխ կըլաւ թագաւորի մօտէն ու ընկան ճամբախ. էկան, հասան Սասուն:

Մէկ ժամանակ մէջ տեղ ընցաւ:

Մհեր կ'հեծնէր ուր ձին, օր էրթէր ալըղուշ էնելու, ձին

գետին չըր վերցընէ, չուրի չորեր կ'չքուէր հողի մէջ:

Մհերն ըսեց.— Ես ի՞մալ էնիմ. գետին իմ ձին չ'վերցու:

Քչեց ձին ու եկաւ մէկ ջոջ քարի մի կուշտ կայնաւ, ըսեց.
— Ով Աստուած, ես էլ ի՞նչ էնիմ, ի՞մալ էնիմ:

Օր էդ թաւուր ըսեց, աղաչանք էրեց, Աստուած ըզոր ձէն
լսեց. քար բացուաւ ու Մհերին մէջն առաւ: Ձէն եկաւ թէ՛
— Մհեր, դու պզի մնաս քարի մէջ, չուրի ցորնի հաստ էզնի մասրի
բարայ, նոր քարից դուս գաս:

Մկայ իդա սհամին լէ մըչ քարին է Մհեր ու կ'ըսեն՝ ձին
օր կ'ըռէ, քարից դուս կ'իգայ¹⁾:



¹⁾ Բ. վարիանտի վերջաբանը. «Մկայ Մհերն ու ուր ձին կեն-
դանի մըչ էն քարին ին. տարին հինգ աւաք կատիկ (նաւակատիկ)
Մհեր էն քարից դուս կ'էլայ, ախշար կ'աչքէ, մոնայ էն քար
Հրաման չ'կայ, օր քելէ ախշար. եր օր ցորնի հաստն էղաւ մէկ
մանսուր, գետին կ'իսայիմայ, Մհերն ու ուր ձին կ'գան ախշար. նոր
Մհեր կուտուրում կ'էնի, վերջ կ'մարտիրոսուի:

Ս Ա Ս Մ Ա Յ Ծ Ռ Ե Ր

(Մոկաց քարաոսով)

Ե.

ՍԵՆՍՈՐԻ ԵՒ ԲԵՂԳԵՍՈՐԻ ԺՆՈՒՆԳԸ

Պար չկար, մի ժամանակ մի կոպակաշտ թագաւոր կար մի
խաչապաշտ թագաւոր: Էն ժամանակ որ թագաւոր որ զօրեղ կ'ըլ-
նի՝ էն մէկէլից (խարջ¹⁾) կ'առնի. կոպակաշտ թագաւոր խաչապաշտ
թագաւորից զօրեղ կ'ըլնի: Օրէրուց մէկ օր նրա խարջ առնողնի
էկան խաչապաշտ թագաւորի մօտ, տեսան մէ շատ (խորոտ²) աղ-
ջիկ ունէր. գինացին իւրանց թագաւորին ասըցին. «Քեո տուն Աս-
տուած շէնի, դիւ Բ՛նչ կ'անես մալ (խաղինայ³), դովլամ⁴» քեզ
ունես (սող, ապրանք, էրկիր, մալ, խաղինայ, դովլամ. խաչապաշտ
թագաւորին մէ էն տեսակ աղջիկ ունի, որ ամեն մի բան կ'աժի»:

Խելք ընկաւ կոպակաշտ թագաւորին, յերեկից⁵) խաչապաշտ
թագաւորի մօտ. «Քեո աղջիկ տաս ինձ»:

Խաչապաշտ թագաւոր ասաց. «Ես խաչապաշտ, դիւ կոպակաշտ,
Բ՛նչ բան ա, որ ես իմ աղջիկ տամ քեզ»:

Պոպակաշտ թագաւոր ասաց. «Պոռով կղի՛ տի տաս, խաթ-
րով կղի՛ տի տաս»:

1) Հարկ: 2) Գեղեցիկ: 3) Գանձ: 4) Հարստութիւն: 5) Ուղար-
կեց:

Ասաց. «Կոխ կ'անիմ, չեմ ի տայ»:

Կոխ արեցին, շատ զոչում սպանիցին. խաչապաշտ թագաւոր կոտորուից: Աղջիկ էրդիկ¹⁾ կայնիր էր, ասաց. «Որ իմ խէրն իմանար, էսքան մեղք չէր ըցկի²⁾ իմ շինք, ինձ կ'տար»:

Խաչապաշտ թագաւոր լսաւ. լսաւ, ասեց. «Իս իմ աղջիկ կըտամ»:

Խաչապաշտ թագաւորին մէկ բռնսայ³⁾ վարդըպետ կար, կնկան շոր խագըրից, աղջկան հետ դրից, որ աղջկան տղայ էղնի, թոնդրան վրան կնքի: Գնաց. մէ էրկու օր մնաց, կռապաշտ թագաւոր ասաց խաչապաշտ թագաւորի աղջկան. «Էս օր իս քե մէհվան⁴⁾ իմ»:

Խաչապաշտ թագաւորի աղջիկ ասաց. «Էս օր մեր գիրքերին աչքեր իմ, որ մինչև քառսուն օր չ'թըմըմի, դիւ ինձ մէհվան չես ի կեայ»:

Քառսուն օր թամամից, աղջիկ դաստիւր⁵⁾ առից, գնաց ծովի կրաղ⁶⁾ սէյր անիլիւ: Աստծու հրամանով ծով բացուից, մէ խամ ջիւր իրէ. բիւռ տուից, մէ ջիւր խմից, մէկէլ բիւռ կիսատ: Իրէ տուն:

Թագաւոր ասաց. «Իս քե մէհվան իմ»:

Աղջիկ ասաց. «Ո՛ւ, իս մեր գիրքերին աչքիւ իմ, մեր գիրքիւ կ'ասին, մինչև ասանըմէկ ամիս չ'թամամի, դաստիւր չ'կայ մարդ կնկան մօտ էրթայ»:

Ասաց. «Որ ընցկուն ի, դիւ կայնի երդիկ, ինձ խետ խօսա, որ իմ սիրտ բացուի»:

Ժամանակ ըմ վրէն ընցաւ, աղջիկ իմացաւ, որ տղով ա. ակխաւ⁷⁾, որ ծովից ա, ամա թագաւորին չը յայտնից: Թագաւորն էլ ակխաւ: Թագաւոր ասաց. «Իս⁸⁾ քե մէհվան չեմ էկի, քիւ փոր լիքն ի, էս քնչ բան ա»:

1) Առսամուտ: 2) Չգի: 3) Գօշ, անմագ: 4) Հիւր: 5) Իրաւունք, հրաման: 6) Ափ: 7) Հասկացաւ: 8) Պէտք է կարգալ իլլու

Ասաց. «Գիւ շատ զօրեղ իս, խօսացիր, քեռ բերնի հէլըմ¹⁾
ես առայ, ըզուց տղով էլայ:

Թագաւորի խելք ինկաւ: Իննը ամիս որ թամամից, Աստուա-
ծուծիւն խաչապաշտ թագաւորի աղջկան էրկու տղայ տուից. վար-
դապետ թոնդրան վրայ կնքից, թագաւոր չ'ակխաւ, մէկի անուն
գրից Սանասար մէկին՝ Բարդուսար: Որ գեղական տղէք ամսա-
կան կ'ճոչանան, ընդունը օրական. Աստու կամեցածն էր:

Շատ քիչ Աստուած գիտէ, մէ քանի տարի վրէն ընցաւ, խե²⁾
լսողաց, չար թշնամին մտաւ ընդունց կռքերի միջին, մատաղ ու-
ղիցին:

Կոքապետ իրէ թագաւորի մօտ. «Կոքիր մատաղ կ'ուղին»:

Ասաց. «Ինչ կուզէք՝ տարէք մատաղ արէք»:

«Խաչապաշտ թագաւորի աղջեկից էրկու տղայ կայ, էնոնք
մատաղ կ'ուղին, յիւրիչ բան չեն ուղէ»:

Թագաւոր ասաց. «Տարէք, մատաղ արէք»:

Էդ տղերք արիւ-լիւս չին տիսած: Մուսնաթ արիցին թա-
գաւորին. «Գնանք աշխար տեսնինք, մենք մօրից ծնուիր ինք՝ աշ-
խար չինք տեսիր»:

Ասաց. «Շան լակոտներ, գնացէք»:

Գնացին ծովի կրաղ. Սանասար մեծ աղբէրն էր, Բաղդասար
պստի աղբէր. Սանասար Բաղդասարին ասաց. «Մինք մե թալինք
ջիւր՝ աղէկ ի, քան ի էրթանք, կուպաշտ թագաւոր մե կ'մատղի
կուռքերու յառաջ»:

Բաղդասար սիրտ չ'արեց: Սանասար ինք բցից ծով: Աստու
հրամանով ծով ինչ չոր գետին վրայ գնաց, ծով բացուից. գնաց
մէ բաղչի միջին, տեսաւ մէ ձի էնդի զինած, կէծական թուր վրէն
կախ տուած: Միրտ էրաւ, որ ձին խեծնէր, ձին ասաց. «Խողածին,
Ինչ կ'ենես, քեռ միտ Ինչ ի»:

¹⁾ Շունչ: ²⁾ Հեռի:

Ասաց. «Քե կ'խեծնեմ»:

Ասաց. «Քե կ'տամ էրեզական կ'խաշեմ»:

Ասաց. «Ծոռվային եմ, ձի¹⁾ կ'տամ քեո փորի տակ»:

Որ կ'տար էրեզական խաշէր, էտու փորի տակ. որ կ'տար էր-
թար յանդիւղ, ինք էտու քամակ:

Ասաց. «Ես քեո ձին, դիւ իմ տէր. դիւ նեղացած կ'ըլնիս,
էրթանք էնդի մի ջիւր խմի, ուհաթի»:

Գնաց, տեսաւ մի կութ էնդեղ էր. էրկու զիար բամբակ դրից
մէջ, դրից գլոխ, չ'կայնից. մէ մէջկապ էնդեղ էր, Եօթ փաթ էրե
բորբ մէջաց, չ'կայնից. մէ ջուխտ կոնդրայ, մէ մէ զիար բամբակ
գրից, խագաւ. հալա ճոչ էր. չ'փէհմաւ, որ ջիւր խմէր, քնէր: Ջիւր
խմից, քնից. քնից մէ քիչ. Աստծոյ շնորք առից. վէր էլաւ, էրկու
զիար բամբակ խանից կուծդրէքաց, խագաւ,— էնդուր ոտով, մէջկապ
մէջքով, կութ գլխով: Ելաւ ձին խեծաւ, բաղչով կ'երթար, մէկ էլ
տեսաւ ծովու իրիս:

Բաղդասար տեսաւ, որ մի սար էլիւր ա սարի վերայ, ասաց.
«Երթար, կոսպաշա թագաւոր ինձ մատղէր, աղէկ էր, քան էս
ջանափար ինձ ուտէր»:

Սանասար ասաց. «Դ'նչի լաց կ'ըլնիս»:

Ասաց. «Ես լաց չ'իլնիմ, բա ո՞վ տի լաց ըլնի. մէ աղբէր կար,
ինք թալից ծով. կոսպաշա թագաւորն էլ ինձ պիտի մատղի»:

Սանասար ասաց. «Ես քեո աղբէրն իմ, լաց մ'ըլնի. Աստու-
ծով էն չի կարայ մէ մատղի»:

Եկան, թագաւորին տեսան: Թագաւոր ասաց. «Շան լակոտ-
ներ, Ի'նչի շիւտ չ'էկար»:

Բաղդասար ասաց. «Որ մեր մօրէն ծնուիր ինք, ախշար չենք
տեսեր, ախշար տեսանք՝ մոռացանք»:

Ասաց. «Երիբ ձեզ մատղեմ»:

«Մեզ վեր գիր, մատղէ»:

Կոսպաշա թագաւոր վախայաւ, ձեռ չ'էտու: Բաղդասար էկաւ,

¹⁾ Ինձ:

պառկեց, որ մատղէր: Գանակ բաշեց, որ մատղէր, Սանասար թա-
գաւորին տուեց, շրջեց էնդեղ, թագաւորին իրան մարդերով կա-
պեց, տախտակ անցրուց գլխով, ճրագ գլխի վրայ վառեց, կարմիր
գինին աչքի յառաջ խմեց: Էնդուր մարդիկ ձէն քցին բաղաք, աս-
կեար ժողվեցին, էկան Սանասար ասաց. «Ա՛յ վա՛յ, ա՛յ վա՛յ, էսոնք
էղնին բաժրակ, ես էղնիմ կրակ, էսոնք չեմ կարայ վառի. էստոնք
էղնին կրակ, ես ջիւր, չեմ կարայ անցընի»:

Ձին ասաց. «Ընչի՞ կ'վախանաս, բեռ Աստուած կանչի, քանի
դիւ բեռ Աէծական թրով սպանիս, ես էնքան իմ պուշով կ'սպա-
նիմ. ինչքան դիւ Աէծական թրով սպանիս, էնքան ես իմ նափա-
սով կ'սպանիմ. ինչքան դիւ Աէծական թրով սպանիս, էնքան ես
իմ ոտով կ'սպանիմ. ինչի՞ կ'վախանաս»:

Սանասար ուր Աստուած կանչեց, գնաց բեռսայ վարդապոխ
մօտ, էնդեղ խոստովանաւ, մասն առաւ. Աստուայ հրամանով ինկու
ասկեարի մէջ, մէկ-էրկու դիր կան էկաւ, էնենց փրթեց, ինչպէս
ձին կտրի ուր գարին: Սանասարին քաղաք թագաւոր ընդունեց:
Խարար գնաց ուր քեռուն. քեռին ասաց. «Ա՛յ Աստուած, որ էն
տղէք տեսնի, թող իմ հոգին առնէր»:

Շատ հէյվէ¹⁾ արեց, չգնաց, մէր խրատեց՝ գնաց: Սանասար
Բաղդասարին ասաց. «Ըս կ'երթամ, թագաւորին չթողաս: Գնաց
քեռու տուն, ձին դռնով չ'ընցաւ. մէ գուրդ տուեց, մէ բուրջ
փլցրեց, ձին ներս քաշեց. շատ խօսքի ընկաւ, մոռացաւ ուր տուն

Թագաւոր համոզեց Բաղդասարին. «Ընձ թող, էթանք Սե-
սար, վերու օշխար, վերու տաւար կոյ, մեզ համար էնդեղ բէֆ
կ'անենք, չե բեռ աղբէր կեայ»:

Բաղդասարին խաբեցին, եօթ տարուան դինին կապեցին գլխ-
որ մէկին թաս գինի տուեցին, ասաց. «Խաղար բարին Բաղդա-
սարին»:

Ասաց. «Ձեր խաղար կտրուի, լցրէք տաշտեր, ես խմեմ»:

¹⁾ Խնդրեց, աղաչեց:

Սանասար էլաւ դիւռ, տեսաւ Բաղդասարի աստղ խաւարեր
իւ Բաղդասար էնենց խմեր ի, ընկեր ի, ահա՜ չունի. էնդունը էլ
առած գորղեր, թրեր, էկած Բաղդասարին. հրեշտակ Աստծուց էկեր
էր, ձեռ բռնիր էր վրայ. ընդուր կողքեր խանդաբ են¹⁾ դարձրած,
էնքան գորղեր զարկած են. խրաման Աստծուց էր, գորղ չէր դիպի:

— Կս տ'երթամ, քեռի:

Քեռին ասաց. «Մկոյ Բաղդասար գլոխ գրեր ա մօր էրկու
ծծի մէջ քներ ա»:

Եկանջ չարեց, էլաւ ձին խեծաւ. ձիուն ասաց. «Ե՛ք տի խաս-
նիս իմ աղբօր»:

Եսաց. «Չե մի զայլիւն²⁾ խմես»:

Եսաց. «Չեղաւ»:

Եսաց. «Աչքեր խիես, բաց անես»:

Եսաց. «Չեղաւ»:

Եսաց. «Որ կարաս քե բռնես, ոտ դնես ուրքեր, չե մէկէլ
ոտ խասցնես»:

Չիւ գլոխ պագնեց, խասուցուց աղբօր. կանչեց. «Է՛ Բաղ-
դասար»:

Եսաց. «Է՛, ի՛նչ աղէկ քներ ի, չթողեցիր ես քնի»:

Եսաց. «Մէ ել կուշտդ ըռըչկա՛³⁾»:

Տեսաւ, որ կշտներ խանդաղ էր դարձեր: Սանասար խոսաւ
թագաւորին էլ, մարգերուն էլ սպանեց, առաւ ուր աղբէր, էբի
տուն: Խորխուրդ արիցին. քեոսայ վարդըպետ ասաց. «Ըստեղանք
ձե տուն չի դառնայ»:

Էլան, իրանց մալ, ապրանք առան, գնացին. գնացին մէ վէ-
րունի, սար. որ տեսան էդ ակղ բան չկայ, ասին. «Ըստեղ աղէկ ի,
որ մենք մեանք»:

Էն տեղ կ'մեան, իրանց տուն կ'չինին: Քանի տարի կ'չինին՝
Ըստուած գիտի. մարդ չին գնդնի, որ տան անուն գնի:

¹⁾ Փոս: ²⁾ Ծխամորջ քաշես: ³⁾ Տես, նայիր: ⁴⁾ Վայրենի, անապատ:

Մէ օր խլիսուն¹⁾ կ'տեսնան, մէ բարակ մուխ մէ ձորից կ'էլ-
նի: Գնացին, տեսան մէ խալուոր մարդ: Ասաց. «Պապիկ, էդ Ինչ
կ'անես»:

Ասաց. «Էս էլ իմ տունն ա»:

Ասաց. «Երի էթանք բեզ պահներ»:

Ասաց. «Քեռ տուն ձի տուն չի էղնի»:

Ասաց. «Քե կ'չլակեմ, կ'տանեմ, կ'բերեմ. մէ տուն եմ չինե,
անուն դիր»: Խալուոր շալակից, տարաւ. տարաւ տուն, էն իրիկուն
խորամարից²⁾: Խլիսուն տանից էլաւ դիւռ, էն մէկ կ'չտեսնէն գնաց
չուր իրիկուն, նոր էլի դիւռ:

Ասաց. «Ո՛րտի, էս տուն չի, էս Սասուն ի»: Անուն դրին Սա-
սում:

Ասին. «Ի՞նչ անինք, ինչ չանինք, պէտք ա մինք պսակուինք
ս'րտեղաց աղջիկ բիրինք»:

Քեռոսայ վարդըպետ ասաց. «Չե արժան ա, որտեղ եօթ ձեռդ
քեր³⁾ կայ»:

Կան էկան, եօթ ձեռդ քերո դնդան. եօթ օր խարսնիս արի-
ցին, բէֆ ուրախութիւն արիցին, կեր ու խում արիցին, մե մի բան
չտուեցին: Համա Աստուց իրեք խնձոր իրե, մէկ ականջ արողին,
մէ շարողին, մէկ ասողին:

Ինդունք էնդեղ խասան իրանց մուրաղին, դիւք էլ էստեղ
խասնիք ձեր մուրաղին⁴⁾:

¹⁾ Լուսադիմին: ²⁾ Պատիւ տուեց: ³⁾ Քոյր:

⁴⁾ Այս ճիւղը պատմել է մեզ տասնեակ տարի մեր կողմե-
րում ապրած մի Մոկացի: Անուն, ինչպէս տեսնուում է, համարեա
բողոքովին փոխուած է, բայց բովանդակութիւնը, ինչպէս հաւա-
տացնում էր Մոկացին, շատ լաւ գիտէր:

Բ Ա Ղ Պ Ա Ս Ա Ր

Օղորմի տը¹⁾ տամ՝ օղորմի էն վարդապտին,
 Օղորմի տը տամ՝ օղորմի էն Սանասարին,
 Օղորմի տը տամ՝ օղորմի էն Բաղդասարին,
 Օղորմի տը տամ՝ օղորմի էն օխտ ճեող Դաւթին,
 Օղորմի տը տամ՝ օղորմի էն ականջ էրողներու անցաւորաց
 խողունն²⁾։

Վարդապետ Սանասար Բաղդասար առից, էկաւ մէ սարի մէջ
 քնակուաւ։ Սանասար գնաց յարևելի կողմ քար բիրիլիւ, Բաղ-
 դասար յարևմտեան։ Սանասար զԲաղդասարի պատ քակից, Բաղ-
 դասար Սանասարի. յետիւ ասըցին. «Էս Բնչ բան ի, մինք իրարու
 տուն կ'քանդի՞նք»։

Քար բիրին, լրացըցին. ձեռ յիրար տուին, Ըստուած կանչի-
 ցին, իրանց տուն իրարու խիտ³⁾ շինիցին։ Դարձան մէ պղտի⁴⁾ եկե-
 ղեցի մ'էլ շինիցին։ Սանասար ասաց. «Հայր սուրբ, միր տան անուն
 Բնչ տը դնինք»։

—Ո՛րդի, գնացէք ճամբիտ արալբի⁵⁾ նստէք, մէ բեասիբ⁶⁾ կ'ըլնի,
 Հարուստ կ'ըլնի, բիրէք, մեր տան խացկիրութիւն էնի, ըլնը մի⁷⁾
 տան անուն դնի, էրթոյ»։

Քեասիբ խալուոր⁸⁾ մարդ բիրիցին, խացկիրութիւն արաւ։

—Էս տան անուն տիր, տընանք Բնչ տը դընիս տան անուն»։

Քեասիբ մարդ աչից⁹⁾ էն տան շուրս պիւլիւր¹⁰⁾, ասից. «Ո՛ր-
 դի, էս տան խսար¹¹⁾ չի, էս տուն չի՛ Սասոււմ ի»։

Էնու անուն կուչուաւ Սասոււմ։

Էլաւ քեասիբ, կինաց։

Վարդապտին էր, Սանասարն էր, Բաղդասարն էր. օրէն իրիք

¹⁾ Պէտք է։ ²⁾ Երգ է։ ³⁾ Հետ, միասին։ ⁴⁾ Փոքրիկ։ ⁵⁾ Ճամ-
 բամէջ, ճանապարհի մէջտեղ։ ⁶⁾ Աղքատ։ ⁷⁾ Մեր։ ⁸⁾ Ալիւոր։ ⁹⁾ Նա-
 յեց։ ¹⁰⁾ Բոլոր շուրջը։ ¹¹⁾ Հաշիւ։

տիր¹⁾ ժամ, խաչ, աղօթք կ'ենին

Ժամանակ ըմ վերէն ընցաւ: Խաբար սրբուց տանք:—Պղնձէ քեաղքի թագաւորի աղջկանից տանք:

Պղնձէ քեաղքի թագաւորի աղջիկ մէ կուժ լիք ջիւր էր լցրել, խնձիւր բերան դրել, մէ կուժ ել դարդակ էր բերան դրել. թղթի մէջ կիրիր էր. «Բաղդասար տղայ, ես Պղնձէ քեաղքի թագաւորի աղջիկն իմ. իմ սրբոս բանց էսա դարդակ կուժ սարսուժ ա²⁾, իմ գլուխ քանց էսա լիք կուժ լիքն ի. Աստծու շնիւրքով լցուկ իմ. քառսուն տեղէ քառսուն մարդ ի եկած իմ վրէն ուղիւ, ես խօսք չըմ տուի. էրազով զքի տըսիր իմ, արի՛ ընձի առ, ընձի շատ տիւր³⁾ կ'կեաս դիւ. ես թուղթ կը կրիմ քե⁴⁾ խամա: Արից, ասաց:

«Վ'տանիս Սասուն, յաջակողմ յերդսէն կ'բցիս Բաղդասար տղի տեղաց⁵⁾ վերայ: Եր⁶⁾ որ էնի⁷⁾ կտրիճ մարդ ի, թող կեայ ձի⁸⁾ տանի իւր խամա»:

Թուղթ բիրողնիր բիրան Սասուն զթուղթ. աջակողմ յերդսի վերայ գնացին, տեսան, որ մէկ տեղաց շիւր ի քցած, մէ ջահիլ⁹⁾ ջիւան տղայ մէջ քնիր ի, բրդնիր ի. էնքան կարմիր, արիւուն կ'ասի. «Գիւ դէն կենա, ես յառաջանամ»: Մէ ջուխտ շամդան¹⁰⁾ գլխին կ'վառուայ, մէ ջուխտ շամդան ոտներուն կ'վառուայ:

Թուղթ բիրողներաց մէկ էսաց. «Ա՛յ քոյրս, արի էրթանք էս մէկէլ էրդսի վերայ աչկինը¹¹⁾, բալքի¹²⁾ Բաղդասար տղէն էդ չի»: Գնացին էն յերդսի վերայ, տեսան, որ մի մարդ քնիր էր շորերաց մէջ. աչկիցին, տեսան էնեց ի բրդնի, որ էնի էն տղեց տասնապատիկ դհա աղէկ ի:

Քուր ասաց. «Քուրս, էս ի Բաղդասար տղէն. թալինք¹³⁾ էս էրդիս վէ»:

Մէկէլ քուր ասաց. «Ա՛ղջիկ, վալահ, էս մարդ շատ աղէկ

1) Անգամ: 2) Մաքուր: 3) Գիւր գալ. հաճոյ լինել: 4) Քեզ համար: 5) Անկողնի վերայ: 6) Երբ: 7) Նա, այն: 8) Ինձ: 9) Երիտասարդ: 10) Աշտանակ: 11) Նայենք: 12) Գուցէ: 13) Չգեներ, չզբրտներ:

մարդ ի քան էն մէկէլ. չիմ գինայ էս ի Բաղդասար, թէ էն մէկէն ի Բաղդասար»:

Թալիցին Սանասար տղի տեղաց վերայ:

Աէս գիշեր էլան, զեանգ քաշիցին. տ'երթան ժամ աղօթք էնիւլու: Վարդապետ, Բաղդասար կեացին ժամ ասիլու, տեսան Սանասար տղէն չ'իրև. դիւ¹⁾ մի ասիլ թէ Սանասար քնից ակխեր²⁾ ի, թուղթ առաւ ձեռ, կարտաց թէ՛ «Բաղդասար տղայ, ես Պղնձէ քեաղքի թագաւորի աղջիկն իմ. իմ սըրտ քանց էսա դարդակ կուժ սարսուժ ա, իմ գլոխ քանց էսա լիք կուժ լիքն ի Աստծու շնիւրքեաւ լցուկ իմ. քառսուն տեղէ քառսուն մարդ ի էկած իմ վօէն ուզիլու, ես խօսք չըմ տուի. էրազով զքի տըսիր իմ, արի՛ ընձի առ, ընձի շատ տիւր կը կեաս դիւ. էս թուղթ կը կիրիմ քե խամա»: Սանասար, որ տեսաւ թուղթ ախպօր էկիր ի, ըռըկաւ³⁾. «է՛յ Հայ, ըսաց, իմ ախպէր ինչ բէբախտ ախպէր ի, առանց ձի գեործ կը բռնի. որ ընցկուն ի, ոչ էնունց ժամ կ'երթամ, ոչ էնունց աղօթք կ'էնիմ: Տ'ըլնիմ իմ ձին խեծնիմ, էրթամ յիւրիշ էրկիր կուրուսիմ: Տեսնամ Աստուած ինչ կ'տայ ձի»:

Վարդապետ էսաց. «Բաղդասար, որտի, Սանասար տղէն չ'իրէ⁴⁾ ժամ, կ'ըլնի որ չարախար ըլնի. որտի, գինա, ասա, կեայ ժամ աղօթք էնայ»:

Բաղդասար գնաց, էնու տիւռ ծիծից թէ՛ «Սանասար ախպէր, Սանասար ախպէր»:

Թէ՛—Ի՞նչ ի:

—Ինչի՞ չիս ի կեայ ժամ, քեռ աղօթք անես:

—Գնա, ես ըռըկիր իմ, ձեր ժամ չիմ ի կեայ:

Էն էլ էլաւ, մաղղէն էրաւ, նիաթ կախից⁵⁾, էկաւ ժամ:

¹⁾ Դու: ²⁾ Ձարթեղ է: ³⁾ Բարկացաւ, խռովեց: ⁴⁾ Չեկաւ:
⁵⁾ Քիթը կախեց, խռովեց:

Վարդապետ էսաց. «Բաղդասար, որտի, յն¹» ի բեռ ակպէր, չ'իրի ժամ»:

Բաղդասար դժարացաւ²), ըսաց. «Հայր սուրբ, իմ ակպէր ընդկիր ի, չի կեայ ժամ, տինն գնա»:

Հայր սուրբ եկեղեցուց դիւրս իրէ, գնաց Սանասարի խնցան տիւռ ծիծից. «Սանասար, որտի մէ տիւռ բաց»:

Տիւռ էբաց, Հայր սուրբ գինաց նիրս. «Էսօր ինչ ի ըլի քե, որ տինն ժամ չես ի կեայ»:

— Հայր սուրբ, առ էսա թուղթ, կարտա, տիս ինչի չիմ կեայ ժամ, ինչ սրտով աը կեամ ժամ:

Վարդապետ զթուղթ առից, կարտաց թէ՛ «Բաղդասար տղայ, ես Պղնձէ բեաղքի թագաւորի աղջիկն իմ, իմ սըրտ քանց էսա դարդակ կուժ սարսուփ ա, իմ գլոս քանց էսա լիք կուժ լիքն ի. Աստծու շնիրբով լցուկ իմ. քառսուն տեղէ քառսուն մարդ ի էկած իմ վրէն ուզիլու, իս խօսք չըմ տուի. էրազով զքի տըսիր իմ, արի ընձի առ, ինձի շատ տիւր կ'կեաս տիւ: Էս թուղթ կ'կիրիմ քե խամա»:

— Իլն, որտի, իլն, էրթանք ժամ Աստծուն փառարանինք, ես խարար չիմ, քանց քի շատ ընդկայ էդ գեործէն:

Ելաւ. գնացին ժամ, ուրինց Աստուած փառարանիցին: Ժամ էլաւ, էկան ուրինց խունց, սուփրէն բաց արին, նստան խացկիրութիւն: Վարդապետ էն թուղթ տուից Բաղդասար տղին, ըսաց. «Առ բեռ թուղթ»:

Բաղդասար տղէն կարտաց թէ՛ «Բաղդասար տղայ, ես Պղնձէ բեաղքի թագաւորի աղջիկն իմ, իմ սըրտ քանց էսա դարդակ կուժ սարսուփ ա, իմ գլոս քանց էսա լիք կուժ լիքն ի. Աստծու շնիրբով լցուկ իմ. քառսուն տեղէ քառսուն մարդ ի էկած իմ վրէն ուզիլու, իս խօսք չըմ տուի. էրազով զքի տըսիր իմ, արի ընձի առ, ընձի շատ տիւր կ'կեաս տիւ: Էս թուղթ կը կիրիմ քե խամա»:

1) Ո՞րտեղ է, ո՞ւր է: 2) Սիրտը շարժուեց, յուզուեցաւ:

Բաղդասար տղէն ըսաց. «Հայր սուրբ, ես բեր Աստուծուն մեղայ. Սանասար տղայ, ախպէր ջան, էս թուղթ արճօվի դիւ ձենէ ըսըկիր իս. ես կուրան¹⁾ կ'ըլնիմ բեր աչք իրիսուն, էդ թուղթ քի իմ տուի, գնա քե խամա բի»:

Բաղդասար տղէն յերտըւցաւ. «Էն Քիրիստոսի առէք-կերէք վկայ կենայ, ես էդ բանից խարար չիմ»:

Սանասար ըսաց. «Ախպէր, ըսաց, վո՞վ ի լսի, վո՞վ ի տըսի ախպէր զախպօր նշանած առնի. դէ՛, մը՛ դադրի, ըլլի քեր խողու-քեար էրա²⁾, բեր ձին խեծի, բեր Աստուած կանչի, գնա»:

Էլլաւ իւր խողուքեար էրաւ, ձին խեծաւ, էլլաւ, կայնաւ ճամբիի վերայ, կանչից. «Հայր սուրբ, արի քեր աջ խամբուրիմ, ես տ'եր-թամ կարիբու[թիւն³⁾»:

Բաղդասար տղէն կանչից. «Սանասար, խողուտ մեռնիմ, արի ես զքի տեսնամ, կ'երթամ»:

Իրարու խիտ դայն ըրին, հալալի[թիւն ուզին իրարուց, մատ-նիքնիր փուխիցին:

Բաղդասար էլաւ, խեծաւ զձին, գնաց. զիւր Աստուած կանչից, ընկաւ ճամբախ. թէ որ քառսուն աւուր ճամբախ էր, էնի իրիք օրէն քչից, գնաց, խասաւ Պղնձէ քեաղքի պատի տակ: Տեսաւ, որ քառսուն ձիաւոր ընդի, մօրուս էկիր ի դեղին ի դարձած, էնքան մնացած ին: Էն մէկ խալուոր ըսաց. «Հէ՛յ վան, հէ՛յ վան, կանաչ կտրիճ ջահէլ տղայ, տիւ էլ էկար, ընկար էս քեաֆ-րի⁴⁾ ձեռ»:

Ջահէլ տղէն վերուց, ըսաց. «Վի՞ ջան, ի՞նչ կ'ըլնը»:

Ըսաց. «Որտի, մէ քիչ սարր⁵⁾ էրա, էս քեաֆրին ընցկուն խաւք⁶⁾ ըմ կայ, կ'կեայ էս պատի վերայ կ'ճուայ, միր հասակին մարդ կ'դառնաս»:

Էդ էլ իւր ձիու գեամ⁷⁾ յիւլիւրից, ձիու մէյդան⁸⁾ բաց

¹⁾ Մատաղ ²⁾ Պատրաստութիւն տես ³⁾ Օտարութիւն: ⁴⁾ Գազան: ⁵⁾ Համբերիր: ⁶⁾ Թռչուն: ⁷⁾ Սանձը ոլորեց: ⁸⁾ Ասպարէզ, հրապարակ:

էրաւ, դարձաւ, կանչեց զիւր Աստուած, ուրբեր¹⁾ ըմ դարկից ձիուն, բիրդան թռաւ, ընցաւ զՊղնձէ բազան քեաղքի մէջ (չէ՞ քեաղաք տիւռ չ'ունէր, առ թռնէր, ընցնէր):

Շատ կան էկաւ քեաղքի մէջ, իրա բէժով տեղ ըմ չ'ընդաւ, որ նստէր: Էկաւ, խասաւ քեաղքի կուշտ, մէկ խայու խան ըմ գնդաւ ըսաց. «Ափօ ջան, էս խանի բիրէն²⁾ Բնչ ի»:

Ասաց. «Որտի, ձիուն մէկ կրուշ, մարդուն քսան փարայ»:

— Թ' Ափօ, ես կ'տամ ձիուն էրկու կրուշ, իմ գլխուն իրիբ կրուշ (զինք բանց ձին աւելցըցուց), իմ ձիուն աղէկ տիրութիւն կ'անիս:

Չին իդի կապից, գնաց մէջ քեաղքին կան կեալու: Քառսուն փուռ փուղրաթ էրաւ, ըսաց. «Օրական Բնչ կ'աշխատիք՝ փուռնչիք»:

Թէ՛— Տաս մաջիգեսայ, տասնըմէկ մաջիգեսայ:

— Թէ որ տիւք տաս մաջիգեսայ, տասնումէկ կ'առնէք, ես կ'տամ ձե չուրս ոսկի օրական, էդ խացիր յիմն ի, ձը տուէք:

Գնաց բառսուն էլ ջիւր բիրող բանից. էսաց. «Օրական Բնչ կ'աշխատիք»:

Թա՛— Օրական տաս կրուշ:

— Ախպէր, ես կ'տամ օրական մէկ սըւտակ³⁾ մաջիգեսայ, տիւք էդ ջիւր Տէշ մարդու չ'իրէք, ձի խամար բիրէք:

Էլաւ, մէկ խաց առից ֆուռնից, դարձաւ, էկաւ ուր խան:

Իր խաց կերաւ, ասաց. «Ափօ ջան, էսաց, մէ խարցումս⁴⁾ էնիմ քենէ»:

Թ' ասաց. «Որտի, Բնչ խարցումս»:

Ասաց. «Էս քեաղքի անուն Բնչ կ'ըսին»:

Ասաց. «Որտի, էս քեաղքի անուն Պղնձէ քեաղաք կ'ըսին»:

— Դէ, կ'ըսէ, Պղնձէ քեաղաք էստե՞ղն ի:

Կ'ըսը. «Հա՛»:

Կ'ըսը. «Պղնձէ քեաղքի թագաւոր մէկ աղջիկ ըմ ունի, Բնչ

1) Ասղանդակ: 2) Վարձ: 3) Սպիտակ: 4) Հարց:

կ'ըլնը Էնոր քեռչք ու սարէն ինձ էլ շանց տաս, ես էլ սէ՛Տը ընիմ¹⁾:

Խալուօր խերստաւ²⁾. «Քեռ ինչ բան ի էդ բանիի խիտ, հալայ³⁾ տղայ իս»:

Էն էլ մուկնաթ էրից⁴⁾. «Ափօ ջան, կուրբան քե, ես կարիբ էրկրից իմ, ինչ կ'ըլնը մէ ձի շանք տաս, ես էլ թամաշայ էնիմ, էրթամ մեր էրկրքիբ, ասեմ, ընցկնայ⁵⁾ քեաղաք ըմ կայ»:

Խալուիւր առից զողէն, էլաւ տանիս, ձեռ պարզից, էսաց. «Էս սիւ փանջարէք⁶⁾, սա ամարաթնիր⁷⁾ կ'տիսնա՞ս, — թագաւորի աղջըկան բնակարանն ի, կ'տիսնա՞ս էդ սիւ յիրգիսնիր»:

Թ'ասաց. «Ափօ ջան, խա՛ս»:

Եսաց. «Էնի սիւ փարդայ⁸⁾ ի կապած յիրգիկներուն, որ աղջիկ տիւռ չ'տեսնայ»:

Տղէն ասաց. «Ափօ, էս ինչ⁹⁾ տանիս ճրագի պէս կ'վառուայ»:

Եսաց. «Որտի, էնի ոսկի խնձիւր ի, գեորդ ըմ կայ էնու յիրգսնիրու տակ, ինչ զվաթով¹⁰⁾ էլնի՛ էն գեորդ վերուցի, զարկէ էն ոսկի խնձիւր բիրի տակ, գնի իւր ծուց, թագաւորի խիտ կուրանէ, կորի՞՞ էլնի, աղջիկ կ'տանի իրեն»:

Եսաց. «Օ՛Ք, ափօ, ես ինչ իմ, որ էդ բաներաց ձեռ թալիմ¹¹⁾ քելէ էրթանք, խարցմունս արի քենէ, կ'երթամ յիւրիշ էրկրնիր, կ'ըսեմ Պղնձէ քեաղաք էսպէս քեաղաք ի»:

Գնացին խան. խալուիւր քնաւ:

Տղէն էլաւ, կանչից զիւր Եստուած, գնաց խասաւ գեորդի մօտ. դարձաւ աղօթրանը, իրիբ անգամ ծուկըր էդի առաջի Եստուածու, դարձաւ ձեռ էթալ գեորդին: Եստուած հրամանքով գեորդ ինչըն փառ էկաւ ձեռ. զարկից էդ ոսկի խնձիւր կուարից, բիրից տակ, էդի ծուց, դարձաւ, էկաւ յիւր խան, քնաւ:

¹⁾ Զբօսնեմ: ²⁾ Հերստաւ, բարկացաւ: ³⁾ Գեռ ևս: ⁴⁾ Խնդրեց:
⁵⁾ Եյսպիսի: ⁶⁾ Լուսամուտ: ⁷⁾ Եպարան, պալատ: ⁸⁾ Աբարպոյր:
⁹⁾ Աւժով: ¹⁰⁾ Ձեռ տամ, հետեւեմ:

Խլիսուն, ինչ լիւս¹⁾ բացուաւ, էլան ինչ տեսան,— տեսան թագաւորի աղջկան յերգանիր բացուի, լիւս տուիր ի բեաղար:

Թագաւորից Ֆարման²⁾ էլաւ. «Վան էկէք, տեսնամ ինչընտ մարդ ի էկի իմ աղջկան խնձիւր կուտրի, տարի, բռնեցէք, բիրէք էստի, էնի ջալադ էնինք³⁾»:

Չաւուշնիր ընկան բեաղարի մէջ կան կեալու. էրկու սհաթ կան էկան, մարդ չտեսան: Գնացին, ինկեան էն խալուիրու խան, ըսին. «Խալուիւր ջան, ըստի⁴⁾ կարիր մարդ չ'կայ»:

Ասաց. «Ձէ (էն տղէն էնքան էն խալուիրոջ աչքին շէր ի կեայ), ըսաց՝ չէ, կարիր մարդ չ'կայ»:

Տղէն վերուց ըսաց. «Ախպէր ջան, ինչի՞ կարիր մարդ չ'կայ ես կարիր եմ»:

Խալուիւր ըսըկաւ. «Միւս կաց, զքի կ'տանին, սպանին»:

Ասաց. «Ինչի՞»:

Էդ չաւուշներուն կանչից. «Ախպէրնիր, ինչ խարցմունս կ'անէք, ես կարիր իմ»:

Չաւուշնիր տեսան էդ տղան էնէնց մէջընտն ջահէլ տղայ մ'է, էնոնց արուն էոաց էդ տղի վրայ: Չաւուշնիր ասըցին. «Ա՛յ տղայ, զքի պահինք, տիւ մի կեայ թագաւորի յառաջ, դիւ ատուս իս»:

Թ'ասաց. «Թագաւորին ինչ ըլի՞ չ'կեամ թագաւորու յառաջ»:

Չաւուշնիր ասըցին. «Մտի, ասըցին, զարկած ին թագաւորի աղջկան խնձիւր տարած ին, թագաւորից հրաման ի, ինչ մարդու մօտ էն խնձիւր տեսան, թէ կարի՞ճ էլաւ, կոիւ արից, պրծաւ, թէ որ կարի՞ճ չ'էլաւ, զգլետի կ'զարկին»:

Էդ էլ ձեռ տարաւ ջէք, մէկ ըրի⁵⁾ ոսկի խանից, տուից չաւուշնիրուն, մէկ էլ ձեռ տարաւ ծիւց, ըզ ոսկի խնձիւր խանից, շանց տուից, ասաց. «Ա'խպէրնիր, էնքան ձի ժամանակ տուէք, ես

¹⁾ Լոյս: ²⁾ Հրովարտակ, հրաման: ³⁾ Գլխատներ: ⁴⁾ Այստեղ: ⁵⁾ Բուռ:

իմ ձին խեծնիմ, էրթամ էն գեորգին խամնիմ:

Խստաւ գեորգին. դադրաւ դէմ աղօթրանի, յիշաց զիւր Աստուած, կանչից Քրիստոսի մայր Աստուարածին— ձե պահապան կենայ— դարձաւ շաւուշներուն ասաց. «Չալուշնիր, գինացէք ձե թագաւորին ասէք, թէ քեո սկէ խնձիւր տարող տըսիր ինք»: Էն էլ ձեռ էտու, գեորգ վերուց, առեց ձեռ:

Չաւուշնիր գնացին, թագաւորին ասիցին. «Մենք քեո սկի խնձիւր տանող տըսիր ինք»:

Թագաւոր ասաց. «Գինացէք, ասէք՝ կեայ ըստեղ, թագաւորի բռնաւորն¹⁾ ի»:

Էկան, ասըցին. «Տիւ թագաւորի բռնաւորն իս, էրթանք բըռնուի»:

Ասաց. «Թագաւոր, ինչ թագաւոր, ապա մինք թագաւոր. Տէր Աստուած գիտինք. հա՛, հա՛, ձե թագաւորից կոխ կ'ուզիմ գնացէք, թագաւորին ասըցէք, կոխ կ'ուզիմ, ես Աստուած կ'տայ ձի, ես իրան. ես ինչը տը կեամ թագաւորին բռնուիմ. կոխ կ'ուզիմ, որ կոխ. էնիմ»:

Թագաւոր ասկեար²⁾ ժողվից:

Բաղդասար տղէն քեռսունն օր, քեռսունն գիշիր կոխ էրաւ. քեռսունն ֆռան խաց, ինչ իջար³⁾ էր էրի, մինակ կերաւ. քեռսունն մարդու ջիւր, ինչ կ'կրին, մինակ խմաւ. շթողաւ էդ բիւլիւր քեաղաք ոչ խաց ուտին, ոչ ջիւր խմին, էրաւ փարիզ օր, զինք մինակ կերաւ, խմաւ: Թագաւորից իլաջ⁴⁾ կտրուաւ. թագաւորի մարդին էլ շատիր անօթինէ կ'մեռնին: Թագաւոր ֆարման էխան⁵⁾ ֆանչու վերայ, ջրբիրնիրու վերայ. շեսախ⁶⁾ ի խաց թխել, ջիւր բիրիլ. ինչ մարդ խաց թխի, ջիւր բիրի, էնի տուն ու տեղ, մալ, ապրանք ոչ թագաւորական ա, ոչ ախշարական. պէտք ա կրակինք, կրակի փայ⁷⁾ էնինք»:

¹⁾ Գերի, բանտարկեալ: ²⁾ Չօրք: ³⁾ Կապալ: ⁴⁾ Ճարք: ⁵⁾ Հանեց: ⁶⁾ Արգելուած է: ⁷⁾ Բաժին:

Քեանսունն օր Բաղդասար տղէն կերաւ, խմաւ, կոխւ էրաւ,—
քեանսունն օր էլ անօթի, ծարաւ կոխւ էրաւ:

Խարար սրբուց տի տանք, Բաղդասար տղէն շատ նեղութենի
մէջ ի:— Խարար Սանասարից տը տանք:

Էն մէկ առաւօտուն Սանասար էլաւ, գինաց ժամ. գինաց դա-
սի վերայ, ուր դաս կարդաց. աչք ընկաւ Բաղդասար տղի մատ-
նիք, ինչ ախպէր ախպօր խիտ փոխարկիր էր, տեսաւ, որ մատնի-
քի կէս սեցիր էր: Ըսաց. «Հէյ վա՛ն, Հէյ վա՛ն, Հայրի սուրբ,
տ'երթամ, իմ ախպէր շատ նեղութինի մէջ ի»:

Ըսաց. «Որտի, սարը ըրէ, վով սարը ունէ, կեանք ունէ, զմիր
Ըստուած փառարանինք, էրթանք մէ կտուր խաց ուտինք, զքե
ճամբխու գնիմ, գնա՛ քեռ ախպօր խասի»:

Էկան խացկիրութին էրիցին: Սանասար տղէն շատ թանկա-
գին էր վարդապրտու մօտ, էլաւ զձին քաշից յեռջիւ տղին, թամբ
դրից վերէն, տղէն պատրաստուաւ:

Տղէն էլաւ, խեծաւ զձին, վարդապրտու աջ առից, ուր Ըս-
տուած կանչից, գնաց: Թէ որ Բաղդասար խասիր էր իրիք օր
Պղնձէ քեաղքի բաղանի տակ, Սանասար գինաց օր ու մէկ ճաշ:
Տեսաւ, որ քեանսունն խալուիւր մարդ կայնած ին էնդեղ ջերկ¹⁾.
տեսաւ, որ էդ մարդիկ էնքան խալուիւրցած ին, որ շիւրիք, մուրուս
վերէն գլեոխ գեղին ի դարձի: Բարիւ ետու Հաղթաց (Սանասար
տղէն շատ խելքեով տղայ էր): Էլի էն խալուիւր բարիւ առաւ.
«Հէյ վա՛ն, Հէյ վա՛ն, կանաչ կտրիճ՝ ջահէլ տղայ, դիւ էլ էկար,
էթաս, ընկնես էն քեաֆրի ձեռ»:

Ըսաց. «Ի՞նչ կայ, որ քեաֆրի ձեռ ընկնիմ»:

— Որտի, մէկ սՀամ մասս, էն քեաֆրին մէ խաւք ըմ կայ,
կ'կեայ կ'ճուայ, դիւ էլ մե Հասակին մարդ կ'դառնաս»:

Սանասար կ'ասը. «Լի՛օ ջան, կ'ընը էս ութսուն, ութսուն 'ւեր-

¹⁾ Կարդով:

կու օր, մէ ջահէլ տղէ մ'իրէ, էն Ինչըն էլաւ:

—Որտի, էնու ձին կրակէ ձի էր, թուաւ, բնցաւ քեաղքի մջ. էսօր ութսուն օր կայ՝ կուր գաւի¹⁾ կ'էնին, գեորդի ձէն կըկեայ ֆէրիզ Փահլափանի ձէն կ'կեայ, էլ չում գիտի ինչըն²⁾ էլաւ, ինչըն չ'էլաւ:

Սանասար տղէն դարձաւ, կանչից. «Տօ՛, Բաղդասար, ախպէր»:

Բաղդասար ասաց. «Օրհնեալ է Աստուած, բեռմակս խասաւ³⁾, էլ ախ ի) ու երկուշ շունիմ»: Ասաց. «Հրամմէ, Սանասար ախպէր»:

Սանասար ասաց. «Գեորդ ըմ զարկ էս պատ շըջի, ես կեամքս խանիմ»:

Բաղդասար վերուց գեորդ, զարկից զբիւրջ շուռ տուից: Սանասար տղէն քաչից զթուր կէծակին, կանչից ուր Մարութայ Բարձր Աստուարածին, խաչնի պատրազին, վըր Սանասարի աջ թիւին (օգնական, պահպան կենայ ականջ էրողներուն), մտաւ Պղնձէ քեաղքի մջ. էնքան աքեար կորից, արուն էլաւ զլէշիր⁴⁾ տարաւ: Էն էն թարափէն զարկից, կորից, Բաղդասար տղէն էն թարափէն. էրկուս էկան, իրարու խասան. էլ մարդ չ'մնաց, կոտորուան: Կրկրսի աչքիր ըսկուն⁵⁾ արուն էր լցուի, զիրար չը ճանչըցան. փաթթուան, յիրար տը սպանին. զփաթ չ'յաղթից զյիրար սպանին, նիւր⁶⁾ ճանչցան թ'ախպէր ին իրարու:

Գնացին զաղջիկ առան, էկան. կայնան բեռսուն խալուրու մօտ. Բաղդասար տղէն ասաց թէ՛ «Ախր անաստուած, էս քեռսուն մարդ քի խամար էկած, ես տիւ կ'րիրիս, էս մարդիկ ինչ ժամանակ էկած ին՝ էն հասակին կ'դարձըցիս, զքի կ'տանիմ, թէ չէ, չիմ տանի»:

Աղջիկ սերբանդութին⁷⁾ էրաւ, կանչից ուր խաւքին բիրից. խաւք ինչ կանչից, ինչ ժամանակ էկած ին ջահէլութ, էլի էն խասակին դարձան:

1) Առիւ: 2) Ինչպէս: 3) Օգնութիւնս հասաւ: 4) Ահ, երկուշ: 5) Գրակ: 6) Այնպէս: 7) Նոր: 8) Ախարդութիւն

Կայնրցըցուց քեառսուն մարդ (էն քեառսուն մարդու սրբա տը հաշտեցըցի, յիտիւ¹⁾ աղջիկ տանի). Բաղդասար տղէն զինքն էլ կայնաւ մէջ աղջիկ, Սանասար տղէն կայնան մէջ տեղը Բաղդասար ասաց. «Աղջի, Աստուած որ կ'սիրիս, ես իմ զքե խանե տիւս քեռ թախտից, տիւ մ'ասի, թէ Բաղդասար տղէն աղէկ ի, ես էնդուր խիտ էրթամ. Աստուած ինչ կ'սիրիս, քեռ սրբա որին կ'ուզի էս քեառսուն մէկից, էնդուր ձեռ բռնա, գնա»:

Իրիք անգամ ասաց, իրիք անգամն էլ գնաց, Բաղդասար տղի ձեռ բռնից:

Բաղդասար ասաց. «Այ կարիր ասպէրներ, տիւ սաղի²⁾ կ'էլնիք՝ էս աղջիկ տանիմ, էնուր խիտ ուտխութիւն էնիմ, կեանք վայելիմ էդու խիտ»:

Քեառսուն մարդ դարձան, ասըցին. «Բաղդասար տղայ, մինք շատ շնիրակալ ինք քենէ, ինչ որ տիւ զմե եաշ³⁾ դարձըցիր ջահիլութեն. տար, խէր տեսնաս մտէն»: Բաղդասար տղէն ըսաց. «Աղջի, քառասունի ձեռ բռնէ, քառասունից շնիրակալութիւն էրա»:

Շնիրակալութիւն արից, քառասունի ձեռ բռնից:

Գարձան ինունը իրանց տնիր. Սանասար, Բաղդասար էկան Սասուն:

Բաղդասար տղէն պսակիցին, էնու ուրախութիւն էրիցին: Վարտապիտան էր, գինաց մէ յիւրիշ թագաւորի աղջիկ էլ բիրից. բիրից, Սանասար տղէն էլ պսակից⁴⁾:

1) Յետոյ: 2) Համաձայն 3) Հասակ:

4) Այս ճիւղը պատմել է մի ուրիշ Մոկացի, որ շատ տարիներից ի վեր բնակուում էր Շիրակում, ուստի և լեզուն խիստ աղաւաղուած է ու բազմատեսակ. զրանից է առաջացել այն, որ միևնոյն բառը, ինչպէս ընթերցողը կրտեսնի, երեք-չորս տեսակ է գրուած, թէ ձայնաորոների և թէ բաղաձայնների փոփոխութեան նկատմամբ: Բացի սորանից այդ Մոկացին պատմել է և Գաւթի և Մհերի մասին, բայց մեծ նմանութիւն ունենալով հետևեալ ճիւղի հետ, աւելորդ համարեցինք այստեղ զետեղել:

Գ Ա Ի Ի Թ

- Դառնամ զողորմին կ'տամ էն սուրբ Մըլքսէթ քհնին¹⁾,
 Ելա տղեոյ քահանին.
 Դառնամ զողորմին կ'տամ էն Սանասարին, Բաղդասարին,
 Սանասարին, Բաղդասարին.
 Դառնամ զողորմին կ'տամ էն Չէնով-Յեովանին.
 Դառնամ զողորմին կ'տամ էն Մհերին.
 Դառնամ զողորմին կ'տամ ընու յիշատակ Դաւթին²⁾:

Մհեր³⁾ զինքն էր ուր կնիկ, տալ⁴⁾ տղայ չէր էլի⁵⁾:

¹⁾ Բ. վարիանտում ողորմին այսպէս է.

«Օղորմի տը տամ՝ ողորմի Սանասարին, Բաղդասարին.

Օղորմի տը տամ՝ ողորմի Ճիւչ Խաթիւնին.

Օղորմի տը տամ՝ ողորմի Ճիւչ Մհերին.

Օղորմի տը տամ՝ ողորմի Չէնով-Յեովանին.

Օղորմի տը տամ՝ ողորմի Յոան-Վերդոյին.

Օղորմի տը տամ՝ ողորմի Թալան Դաւթին.

Օղորմի տը տամ՝ ողորմի էն տան Ճիւչին՝ պղտկին.

Օղորմի տը տամ՝ ողորմի ականջ էրողին:

²⁾ Ե.յս կտորը երգում էր Մոկացի Յեովանը, վարիանտիս պատմողը:

³⁾ Ե. վարիանտում Մհերի տեղ Սանասարն է յիշուած, բայց կարծում եմ զա պատահական սխալ պիտի լինի, որովհետեւ, որքան յիշում եմ, երբ պատմողին հարցուի որք էի անում, Դաւթիթը Մհերի որդին համարեց և ոչ Սանասարի:

⁴⁾ Դեռ ևս: ⁵⁾ Բ. վարիանտը այսպէս է սկսում. «Խաղանք ձեողէ՛ ձեող, կեանք, զաղորինք վեար Դաւթը ձեողին»:

Մարմնլիբի խէր¹⁾ Մարայ մէջ մեռաւ. Իսմիլ (Կանուս²⁾), Մարմնլիբի մէրն³⁾ էր, մնաց որպագարի:

Միտք էրաւ, ըսաց.— Ջանմ, իս տ'ընիմ⁴⁾ իմ ժողովուրդ ժողովիմ, պիրիմ մէկ թաղարիք⁵⁾ տեսնամ. իմ մօտէն մէկ տղայ տիւս չ'ինկեաւ, մէկ տղայ ընծը հարկաւուր ը, ընը միր ազգին տիրութիւն էնը, մինք չ'մնանք շիւար⁶⁾. համայ⁷⁾ կըպը մէկ փէրիզ ընը, իրան մօտէն մէկ տղայ բհամ կեայ⁸⁾. ընինք ճամբիսնք մատ⁹⁾ Մըհեր, էնու մըաէն հիւին էսինք¹⁰⁾, բեալքիմ կեայ իմ կուշտ, ընծը մէկ տղայ ընը:

Էլաւ, էրկու մարդ ճամբից. կեացին մատ Մհեր, կ'ասին.
— Մհեր, Իսմիլ խանըմ գմի ճամբիսիր ի քի խամար, հիւի կ'անի, որ անսուտ կեայ, ձի էլ տղայ վեար ախշին չ'կտըրուը:

Մհերն էր, կ'ընը կ'ասը.— Տիւ կեացէք, Աստուած ձի¹¹⁾ խիտ, իս իրիք որ իմ կնկան մօտէն խարար կ'առնիմ, նուր կ'կեամ: Էդ էրկու մարդ գարձան կեացին դեախ Իսմիլ խանըմ: Էն էլ իրիք օր խատ ուր կնկան մասալհաթ¹²⁾ էրաւ, կնիկ դեաստուր¹³⁾ չ'իտու: Էլաւ, գեաղտիկ¹⁴⁾ կնկնից կինաց (համայ կնիկ խարար էլաւ, որ կինաց էն բանին): Էնդուցայ յիտ¹⁵⁾ ութ օր մնաց մատ Իսմիլ խանըմ: Իսմիլ խանըմ, ինչ ութ օր ըմացաւ, ահախաւ¹⁶⁾, էլաւ էրազով, որ զինք տ'ընէր տղով: Էսաց.— Մհեր, կինս, ըսաց, կինս քի¹⁷⁾ տուն, ամայ քիւ կնկան մը զիւրցը էդա *) բան

1) Հայր: 2) Տիկին: 3) Մայր: 4) Տ', տը', տի— պէտք է: 5) Պատրաստութիւն: 6) Խեղճ: 7) Բայց: 8) Գոյանայ: 9) Մօտ: 10) Խնդրենք: 11) Չեր: 12) Խորհուրդ: 13) Իրաւունք, թողտուութիւն: 14) Ծածուկ, գաղտնի: 15) Նորանից յետոյ: 16) Իմացաւ, զարթնեց: 17) Քո:

*) Ը. վարիանտով Սանասար կամենում է մանուկ Մարմնլիբին մկրտել տալ, բայց Մարմնլիբի կինը չի թողնում և անունը Մեղիք է դնում: Մի բանի տարուց յետոյ երբ Սանասարը մի անգամ կանգնած էր տանիքի վերայ, տեսաւ թէ ինչպէս Մարմնլիբը մի գոմէջ մէկ թևի, միւսը միւս թևի տակն առած՝ տուն բերեց. « Է՛լ յ վախ, հէ՛յ վախ, ասաց նա, էսի Բնչիս իմ տուն քեան»

ՄՆՏԵՐ ԷԼԱԷ, կինաց ուր տուն. մութ ժամանակ էր, տիւռ
ծիծից.—Անիկ, էսաց, տիւռ բաց էրա:

Անիկ էսաց.—Ա՛ւար քի տիւռ չը՛մ բանայ, քիւ խիտն էլ նեա
կը նստիմ, նեա կ'կանգընիմ մինչիւ քեառսուն տարի:

Էսաց.—Ա՛յ կնիկ, էդա բան էղենց մ'էնեւ:

—Ձէ, ըսաց, որ տիւ կեացիր իս, այլազգու խիտ խառուիր
իս, մինչիւ քեառսուն տարի իս պտի քեառասունք պախիմ, քիւ
կուշտ չ'քինիմ: Էնզեղ յերտիւմ կերաւ՝ «Մինչիւ քեառսուն տարի
իս քիւ կուշտ պտը չ'պառկիմ»:

Էրկունն էլ յերտըցան, նուր տիւռ էբաց. էբաց, կեացին
քեառսուն օր էնունք միամիտ իրարու կուշտ պառկան:

Քեառսուն օր էնզեղ էլաւ, տասն օր էլ էնու եալ կեալ¹⁾,
էլաւ իցցուն օր. իցցուն օր կնկան կուշտ չ'պառկաւ. [թըխ²⁾] զան
իցցուն օր, իրիք տարի էլ կնկան կուշտ չ'կինաց:

Ջուհար իրի՛ Խամիլ խանըմին մէկ տղայ իլիր ի, անուն դրած
Մարամելիք, համա էնննց տղայ ի, աւատա՛, որ էնիկ չափին խաս-
նը, ախշարք էնու դէմ կանգնող չ'կայ:

Էդա խօսք որ ՄՆՏԵՐ լսաւ, էլաւ կինաց մատ ուր կնիկ, է-
սաց.—Անիկ, էսաց, ասօր միր Խաւու աստղ մտվաղիր³⁾ ի, իրի յ)
մէկ բան գնդընինք, մի յ) Խաւու ճրագ տ'ընցընը. էրի մե Խաւու
ճրագ մ'ընցըցու, մինք էրի կեանք մէկ տեղ, բեալքիմ Աստուած
մի ճրագ կպուցու, մէկ տղայ ընը, մե Խոյու ճրագ կպնը:

Էսաց.—Ձէ, ես յերտիւմ իմ կերի՛ մինչիւ քեառսուն տարի
մինք մէկ տեղ չ'քինինք:

դիցը, իմ աչքեր կուրացըցը, Խոյու ճրագ ընցըցը, Տաճկի վա-
ռըցը: Մարըը թողեց, Սասուն վերադարձաւ. Բաղդասարը և
Վարդապետը մեռած էին, և այժմ Չէնով-Յովանին, Աերգեղային է
տեսնում Սասունում:

1) Գնալ գալ: 2) Բացի, դէպի: 3) Խաւարել է: 4) Երի, եկ:
5) Մեր:

էսաց.—Այ կնիկ, բեառսուն տարին քեառսուն օր խտարինք, քեառսուն օր՝ քեառսուն տարի, բեալքիմ մի Աստուած մէկ տղայ տայ, ընը զէն այլազգու ճրագ փըջը, վեար մի ազգուն չ'կործանայ:

Կնիկ էսաց.—Այ մարդ, տիւ գիտիս, համա ինչ օր մի տղէն ընը, էն օր մինք կ'մեռնինք, մե տղէն հէթըմ¹⁾ կ'մայ ախշարք:

Էսաց.—Որ մինք կանք ախշըրքի վերայ՝ պտը մեռնինք, համա որ մինք մեռնինք, միւր տղան որ սաղ ընը, մինք գենայ²⁾ սաղ կ'յիշուինք. մե տղէն որ ընը՝ մե տան անուն չ'կուրուար:

Էսաց.—Յերտիւմակուտուր կ'ընինք, տիւ գիտիս:

Էլան, իրարու կուշտ կեացին: Ինն ամիս, ինն օր, ինն զեակղայ³⁾ որ լմացաւ⁴⁾, մէկ տղայ էլաւ. տղէն որ տարան մկըրտըցին, անուն գրին Գառիթ, պապկի անուան վերայ. որ կնքեցին, պրծան, Մհեր վոսիւթ էրաւ, էսաց.—Իմ տղէն չոկ ծիծը չ'կերցըցէք, կ'տանէք մըտ Մարմէլիքի մէր, իմ խաթր խամար իմ տղէն կ'պախը, չուր ծըծէն կ'կտըրուը: Յիտ էն ժամանակ իմ տղի վոքիլ⁵⁾ տիւ իս, Չէնով-Յովանին կ'ասը, իմ տղի մեխը վարձը քիւ վիզ, որ բեանի կերիս, լաւ պախիս, Սասման տան ճրագ չ'ընցըցիս:

Որ վոսիւթ⁶⁾ էրաւ, պրծաւ, յերտիւմակուտուր էլան, էրկուան էլ մեռան:

Չինով-Օվան էլաւ, զտղէն էրաւ բալիւլ, առից, տարաւ էնգեղ, Մարմէլիքի մուր թասլիմ էրաւ⁷⁾:

Մարմէլիքի մէր էլաւ, վերուց զտղէն, պէտք ի ծիծ տէր, իրիք օր իրիք գիշիր էն բան չ'կերաւ, էնու ծիծ չ'ծըծից:

Մարմէլիք ուրմ⁸⁾ խաղալիւց էկաւ, մէր կանգընաւ էնդեղ, Մըսրամէլիքին էսաց.—Էսա տղէն, էսաց, իրիք օր իրիք գիշիր կայ իմ ծիծ չ'ուտը, մայ անօթը, տը մեռնը, մինք ամօթանք կ'ընինք էնու տիրուջ մօտէն. արա ինչիս էնինք էսա տղի խիտ, ինչիս շախինք⁹⁾, որ մի ծիծ չուտը:

1) Որք: 2) Էլի, դարձեալ: 3) Այրկեան: 4) Լրացաւ: 5) Հոգարարձու, խնամակալ: 6) Կտակ: 7) Յանձնեց: 8) Նիզակ: 9) Պահէնք:

Էսաց.—Մորէ, էդա ազգ, էսաց, խաստակուղ¹⁾ ազգ ի, մի գլխուն բալայ չ) տ'ընը, էսաց, էլ վըջ²⁾ չ'կըտըրը, ինկիր ինք մէշ իլի, էնու խօր մալ շատ ը, կինա մէկ բեռ մեղը կ'ըրիրս, մէկ բեռ էլ կարագ. կ'ըրիրս էստեղ, կ'շինիս եղը մեղը, կ'տաս՝ տղէն կ'ուտը. մինք էլ պարզիրիս էնունց բալից պրծնինք, էնունք բալայ ին

Էսաց.—Որտի, Մէլիք, ինչ բալայ տ'ընին, էսիկ քի ախպեր տ'ընը:

Էսաց.—Էդիկ ձը ախպեր չ'ընը, ինչ զարար), ինչ փեաս ըն- ձը ուրտը³⁾, ըգուր մօտէն տ'ընը:

Մարամելիքի մէր ճամբեսից, էպի մէկ բեռ մեղը, մէկ կարագ. մեղրով կարագեով էդա տղէն կիրըցուց, պատից մինչև իրիք տա- րի: Իրիք տարով յիտ տղէն էլաւ, մեանչ քեաղքին կան կ'կեպը: Էտուր էրած բան ինչ կը. մեանչ քեաղքին կան կ'կէր, ինչ քան- դար ութ տարեկան, տաս տարեկան տղայ կէր՝ կ'առնէր խատ ուր, կ'երթէր խաղ էնիլիւ:

Տիր ըմ էլ կեացին ճան⁴⁾ կ'խաղին տաս տաս'ւերկու տղի խիտ, տղէք տաս տարեկան ին, ութ տարեկան ին, զինք իրիք տա- րեկան ի. ճանի վերայ կուրտան, վիր թիւ⁵⁾ էտու ձեռ, թիւքիր թռան, վիր վուտքիր իտու, վուտքիր կուտարան. իրիք տղի թիւ թռաւ, իրիք տղի վուտ կուտարաւ:

Էլան, դարձան տուն, գանգատ էրին իրանց խուր, մօր ասին. —Մէկ չեթըմ տղայ կայ Մարամելիքի տուն, էնիկ էրաւ, որ մե վուտքիր կուտարաւ, մի թիւքիր թռաւ:

Էդունց խէրիր կեացին մատ Մարամելիք գանգատ էրին. Մըս- րամելիք շատ ըռըկաւ, էլաւ ձեռ էտու տղէն, տ'սպանէր. մէր չ'իթուղ, ըսաց.—Տղայ ի, բանը ֆէմ⁶⁾ չ'էնի:

Էդ օր էդենց ընցաւ:

¹⁾ Հաստակող, յաման: ²⁾ Խաթայ, պատիծ: ³⁾ Ճար չ'կայ: ⁴⁾ Վշատ: ⁵⁾ Հասնի, լինի: ⁶⁾ Վէգ ոսկորը: ⁷⁾ Թւ: ⁸⁾ Խելքը բան չի կտրում:

Մէկէլ օր էլաւ, մօր ըսաց.—Մը՛ թըղնը էրթայ ճժիրու ¹⁾
խիտ խաղայ:

Մէր (սլխուն ²⁾) էլաւ, տիւն ³⁾ վեար Գաւթին շինից, էսաց՝
տնէն չ'ընը տիւս:—ՂԳաւթիթ քինուկ էթուղ մեանչ տան, տիւն
շինից վերայ, կինաց:

Ճաշու վիտին ակխաւ էլաւ ձէն էթալ տիւն շիմքեով, սեար-
դարով թուաւ, էկաւ:

Ելաւ տիւս, կանչից ինկիրտանք ժողվից, կեացին բեախէն.
բեախէն որ կեացին, իպի ⁴⁾, ինչ էրաւ Գաւթիթ. ձէն էթալ մէկ
սպնդրի ⁵⁾ ծառ կոսից ⁶⁾, զձէր իպի գետըն, կանչից.—Տղէք, խեծ-
նինք վեար էս ծառին, ինչ լաւ բան ը՛:

Որ խեծան վեար ծառին տաս տասնըխինգ տղայ, Գաւթիթն
էր, էնդեղէն զծառի ձէր բաց իթուղ, ծառ կանգընաւ, զտղէք է-
թալ ամեն մէկ փուղան ⁷⁾ ընկան Իրիք խատ մեան, մնացածնիրն
էլ որ գընոխ կուտրաւ, որ վուտ կուտրաւ, որ մէշք կուտրաւ,
բիրադի ⁸⁾ բիրինդար ⁹⁾ էլան Բիրինքդարբիր ժողվեցին, ամեն մէկ ուր
խօր տուն տարան, մեռածքիրն էլ տարան մըզկիթը տիւն դրին:

Յիրիկուն էնունց մալէն ¹⁰⁾ էկաւ.—Էս ինչ սարըբով ¹¹⁾ էս
մարտիր մեռած:

Մըզկըթը վոքիլ էկաւ, էսաց.—Մէկ չէթըմ տղայ գեղյ
Մըսրամէլիքի տուն, էսա էրկու տիր մի ճժիր խաղալիւ տեղ
սպանից:

Էնդեխէն կիրից Մսրամէլիքի խամար.—Էան էգա տղէն կ'սպա-
նիս, կ'կուրուսիս, եան մինք կ'ըլնինք, մի տնիր կ'աւիրինք, էր-
թանք:

Յիրիկուն Մսրամէլիք էկաւ տուն, մալը թուիթ կար-
տաց.—ԷԻրիք միծ մարդու տղայ էգա չէթըմ սպանիր ի, եա էնի

¹⁾ Տղաների, երեսաների: ²⁾ Լուսաբացին: ³⁾ Դուռ: ⁴⁾ Բերեց:
⁵⁾ Բարդի: ⁶⁾ Կոացնեւ, ծռել: ⁷⁾ Փողոց: ⁸⁾ Բողորը, ամենքը: ⁹⁾ Ախ-
րաւոր: ¹⁰⁾ Մոլան: ¹¹⁾ Պատճառով:

կ'սպանիս վերջացրցիս, եա մինք մի տնիր կ'աւիրինք, էրթանք»:

Մտրամելիք զլծուր քեշից վեար Դաւթին, էսաց.— Տ'սպանիմ, իմ խաց ջիւր կուրուսից, իս մէկ հէթըմ տղի յարով մէկ բեաղաք չըմ աւիրի:

Մէր էլաւ դէմ կանգընաւ.— Պտի չ'սպանիս:

— Բնէ նազէ¹⁾, տ'սպանիմ:

Մէրն էսաց.— Էդիկ ֆէմ չ'էնի, էրեխայ ի, էդու սպանիլ մեիք ի:

Մտրամելիք էսաց.— Տղայ չի, խելք կ'խասնը, ամա խաստակուղ ի, կաստը²⁾ կ'սպանը:

— Ե՛յ որտի, որ կաստի ի, ընինք բիրինք, փորձինք:

էսաց.— Մարէ, Բնէխ տը փորձինք:

էսաց.— Խլիսուն իս կ'ընիմ մէկ չանախ³⁾ կրակ կ'լցնիմ, մէկ ոսկի. կ'դնինք յէռջիւ աղին, թի ձեռ էտու, ոսկին առից՝ խելքեով ի, սպանը, թի որ կրակ առից՝ տղայ ի, խելք չ'կտըրը:

Խլիսուն էլաւ, իպի զկրակ ըզոսկին իտի յեռջիւ. տղէն իրիչից⁴⁾, տեսաւ էրկու բան կ'պսպղայ, ձեռ պարզից ըզոսկին պտի վիրուցէր, Ըստծու հրամանքիւ կրակ կպաւ մատ, մատ բեշից իտի բերան, ըզուսն էրիցաւ, թլոր⁵⁾ էլաւ, անուն դրին Թլոր Դաւթի:

Մէր էսաց.— Ո՛րտի, տիւ տեսա՞ր, որ տղայ ի, ֆէմ չ'էնի:

Մտրամելիք էսաց.— Եբա Բնէ բան էնինք խիտ:

Մէր էսաց.— Ինչ կ'երթաս հոլ կ'խաղաս, քիւ ախպէրն էլ տար էնդի խաղ էնա, քիւ աչք պախը վերայ, որ խատ տղէնեւրուն կոխ չ'էնի:

էսաց.— Մարէ, խատ ձի կ'տանիմ, ամա զինք խաստակուղ ազգ ի, վախանամ մէկ պատիճ⁶⁾ բիրի միր գլեոխ:

Մէր շատ աղաչից.— Քենէ մուննաթ⁷⁾ ըմ կ'էնիմ, քիւ ախպէր խիտ տանիս:

¹⁾ Ընկարելի է: ²⁾ Դիտմամբ: ³⁾ Ըման: ⁴⁾ Նայեց: ⁵⁾ Թլուատ: ⁶⁾ Պատիժ: ⁷⁾ Խնդիրք, աղաչանք:

Էլաւ, մօր խաթր չ'կպաւ, մօր խաթր պախից, առից տա-
րաւ. առից, տարաւ, իախ մէջ մէյդընին

Գաւիթն էր, զինք խաստակուղ ազգ էր, մտաւ, նստաւ հոլ-
տուն Էնկանդար¹⁾ աղաչից ակպէր, չ'լսաւ. որ չ'լսաւ, ըսըկաւ.
որ ըսըկաւ, էսաց.—Վերթամ էնդեխէն զհոլ կ'զարկիմ մէկ տիր
սպանը:

Զինք կինաց, հոլ առից, էթալ, էսաց.—Զարկիմ մէկ տիր
սպանուը, մնայ ուր տեղ:

Էնդեխէն որ հոլ կզար՝ ար կէր հոլտուն, Գաւիթ զձեռ
խոու, զհոլ դարձիւցից, իրիք խարիր ձիաուուր փերիղ-փահլիւան
սպանից: Էդ աւուր ուրախութիւն, խաղ, ուտիլ, խմիլ բեադըցին²⁾:

—Երա ինչխ էնինք, ինչխ չ'էնինք:

—Տ'սպանինք զԳաւիթ.

Ետին.—Էստեղ մը սպանը, տար մատ քիւ մէր, նուր սպանը:

Օր կէսօր էր. առին զԳաւիթ, էկան տուն:

Մէկէլ էանէն³⁾ էնուր մալէք, ախընդքիր⁴⁾ էկին, էդ իրիք խա-
րիր ջամդար⁵⁾ տարան գըռըցին⁶⁾:

Մտրամելիք զԳաւիթ առից, տարաւ ուր տուն:

Էսաց.—Մարէ, տիւ զիմ աչքիր կուրցըցիր, մեանչ իմ ազ-
գուն զձը սիւիրիս էրիր. մարէ, էսա տիր տ'սպանիմ:

Էսաց.—Այ որտի, որ տիւ տ'սպանիս, էսաց, էրկու փէրիղ⁷⁾
զնդէ, տիւն չ'սպանիս, մեխք ինկնի քիւ վիղ, տի խիտ թըխ⁸⁾ տա-
նին ուր խէրանական էրկիր, Մուրադ—ջիւրու բերան, խանին վեար
Բաթմանայ կարմնջին, վիղ կտրին, թալին գիտ:

Էրկու փէրիղ⁸⁾, առին զԳաւիթ, էկան: Գաւիթն ի, էլ փէ-

¹⁾ Այնքան: ²⁾ Վերջացրին, քանդեցին: ³⁾ Կողմից: ⁴⁾ Եխունդ—
մահմեդական հոգևոր պաշտօնեայ: ⁵⁾ Գիակ, լէշ: ⁶⁾ Թաղել: ⁷⁾ Քաջ
գիւցազն, ըմբշամարտ: ⁸⁾ Թող:

⁸⁾ Ա. և Բ. վարիաններով երկու փէրիզներն են Բաթմանայ
Բիւղէն և Ճարպախար-Քեամին:

բիզբիրուն ականջ չէնը, մէկ լիւր¹⁾ կ'տեսնայ, կ'սպանը, մէկ լը-
պըստրակ²⁾ կ'տեսնայ, կ'զարկը, կ'սպանը. ականջ չէնի փէրիզ-
քիրուն Փէրիզքիր ճամբիի խիտ կ'քէլին, էգիկ ճամբիէն տիւս
կ'քէլը:

Շատ էկան, քիչ էկան, Մուրադ—ջիւրու բերան խասան. էն-
դեղ կանգնան էրկու փէրիզ վըր³⁾ Բաթմանայ կարմնջին. Գաւիթ
յիտիւանց էկաւ, խասաւ. խասաւ, տեսաւ, որ էրկու փէրիզ վըար
կարմնջին զաղրած ին:

Գաւիթ էսաց.— Տիւք ի՞նչ արով էդա տեղ զաղրիր էք:

Էսաց.— Խուգիւղ արևուդ կուրբան կ'ընինք, տիւ էրեխայ իս,
վախենանք մէկ բեալէ մ' կեայ, յէռջիւ զքի կ'ընցըցինք:

Էսաց.— Ջանմ, տիւ կանգնիր էք ընձը կ'թալէք գիտ (տղէն
յիմաստուն էր, յիմացաւ):

Տղէն էսաց.— Տիւ քէլըցէք, զկարմունջ ընցէք, իս յիտիւ տը
կեամ:

Ըսին.— Չէ, մէկ ընցնը, մէկ կենայ յիտիւ, որ տիւ չ'վա-
խանաս:

Էսաց.— Որ անցկուն ի, թըխ ձե խօսք ըլնը:

Ինչ Գաւիթ խասաւ կէս կարմնջին, յառաջ մարդ դարձաւ
վերայ, յըտին մարդն էլ խասաւ. ձեռ թալիցին Գաւիթին, զԳա-
ւիթ տը զինին ⁴⁾ թալին գիտ:

Գաւիթ մէկ ձեռն էթալ, մէկ փէրիզ բռնից, մէկն էլ զմէկ
բռնից. բըռնից, իտի կարմնջի վերայ, ձեռ էտու ջերէն տանակ
էխան, էրկուսն էլ տը զինէր:

Էն մէկն էսաց.— Իս որ կամ, քիւ խօր դեաստախանը⁵⁾ վե-
րայ իմ ճիւշացը ⁶⁾, քիւ խօր խացն իմ կիրի:

Էն մէկէլ էսաց.— Իս որ կամ, իմ սոյ ⁷⁾ արար ը, իս Մարա-
մէլիքի խօր յըռջիւու մարդն իմ. Մարամէլիք զինք ուր բերնով
էսաց.— Տարէք էնդեղ զինէք, թալէք գիտ:

¹⁾ Լոր, թռչուն է: ²⁾ Նապաստակ: ³⁾ Վերայ: ⁴⁾ Զինել, սպանել
⁵⁾ Միւսոյ, սեղան: ⁶⁾ Մեծացել: ⁷⁾ Ցեղ, տոհմ:

Գաւիթն էր՝ մէկ իթուղ, արար սպանից, էթալ գետ^{*)}:

Փէրիզ էսաց.—Որ տիւ էդա մարդն իս, էդա հիւնար¹⁾ քիւ
փուր կայ, քեանի որ սաղ կենդանի իմ, իս պտի բի խըզմաթքար²⁾
ընիմ^{**)}: Էլան, էկան Սասմայ սնոր³⁾:

Չէնով-Յովան էլաւ, դիւրբինք յ) իտի աշիչ, իրիշից ուր ճամ-
բախ. իրիշից, տեսաւ, որ մէ փէրիզ կ'կեայ, մէկ տղայ էլ յիտի-
ւանց կ'կեայ, ճամբեկն տիւս կ'քէլը: Ինք ուր կնկան էսաց.—Ա՛յ
կնիկ, իլի տեղ շինի, մէկ տղայ ծուռ-ծուռ ճամբեկն կ'քէլի, ճամ-
բեկն տիւս կ'կեայ. էնիկ մէ ծուռ Գաւիթն ի՛ կկաւ.

Խորոխպէր էլաւ զգլեոխ պագնից, շատ էլ ուրախացաւ, փառք
իտու Ասարծուն, փառք անմախ թագաւորին, միր տղէն էլաւ, ուր
խօր տեղ տը բռնը:

Խլիսուն Չէնով-Յովան էլաւ, զեղական բեարհաւից⁵⁾, էսաց.
—Իմ ախպօր տղէն իկիր ը, նախիր մարդու չ'տիք, էս տարիս իմ
ախպօր տղին տ'էնիմ նախրուրդ^{***)}:

Խլիսուն քեաղքըցիք բիրադի⁶⁾ խօսք տուին, որ պտի բռնին
նախրուրդ:

Ինչ լիւս⁷⁾ բացուաւ, էլաւ, էսաց.—Գաւիթ, էսաց, քեզի
էսաց, բռնիր իմ նախրուրդ, յըմէն⁸⁾ մէկ տաւրի գլեոխ մէկ կուտ⁹⁾
կուրիկ¹⁰⁾, մէկ կուտ ցուրին միզի հախ¹¹⁾ կ'տան, շաբթէն մէկ ան-
գամ էլ, քեաղքի բոլութին¹²⁾ ի, տուն մէկ խաց կ'տան. կերի՛ս
պախը տաւար, թի չի՛ս կերի:

1) Բաջութիւն, հնարք: 2) Ծառայ: 3) Սահման, դաշտ: 4) Հե-
ռադիտակ: 5) Ժողովեց: 6) Բոլորը, ամենքը: 7) Լոյս: 8) Ըմէն, ամէն
մէկ: 9) Յօրենի չափ է՝ փայտից շինած: 10) Աօրեկ: 11) Աւարձ: 12) Ա-
ռատութիւն:

*) Ա. և Բ. վարիանտներով երկուսին էլ ներում է:

**) Ա. վարիանտով փէրիզները շան լակոտի արիւն են խմեց-
նում Մսրամելիբին Գաւիթի արեան տեղ:

***) Ա. վարիանտով նախ գառնարած է դառնում և սպա
նախրորդ:

Էսաց.— Էնենց պախիմ՝ ծաղկը պէս արխային, խլիսուն, տ'եր-
թամ յէռջիւ: Ամա խրօխպէր, իս պիպիկ ¹⁾ իմ, մէկ ջուխտ ըմ
սօլ ²⁾ ընծը խամա կ'տաս կարիլը

Էսաց.— Էս սհաթիս կ'երթամ, կ'տամ կար:

Էն սհաթին էլաւ, կինաց ջուխտ ըմ սօլ էտու կարիլ իպի
խուռ տղէն, տղէն առից, խագաւ:

Խրօխպէր էսաց.— Որտի, խլիսուն զնախիր կ'տանիս Սասմայ
սարի յիտիւ՝ չայիր ³⁾. սըւտակ ⁴⁾ քեար կայ, սըւտակ քեարի տակ
յախպուր ⁵⁾ կայ, էն յախպրի վերայ կէսօր կ'ընար հաւիս, իս քեզի
կէսօրին խաց կ'առնիմ, կ'կեամ:

Խլիսուն Դաւիթ խագաւ զսօլիբ, զնախիր առից, տարաւ
սար: Մէկ սպնդրի ծառ էլ քեշից, էտի վեար ուր թիւին, զնա-
խիր կ'քիշի: Նախիր էխան սար, տեսաւ, որ արջեր, կէլիբ, աս-
լանքտիր ⁶⁾, կափլանքտիր ⁷⁾ փախան. ինչ Դաւիթ վուտ կ'ղարկէր գե-
տըն, գետըն կ'գնդէր ⁸⁾, էնու ձէնէն արջեր, կէլիբ փախան:

Դաւիթն էլ ինկաւ յիտիւքիբ, որու խասաւ՝ էզար, ժողվից.
ինչ արջ կէր, կէլ կէր, ասլան կէր, զափլան կէր՝ ժողվից, իպի՝
մեանչ նախրին, խառնից զնախիր ⁹⁾:

Ճաշուցին զնախիր ժողվից, տարաւ չայիր սըւտակ քեարի
տակ վեար յախպրին: Տեսաւ, որ չոկ ¹⁰⁾ գեղը նախրուրդ մ'էլ
տաւար բիրի էնդեղ կ'էրըծայ, էսաց.— Այ նախրուրդ, էսաց, արի
իս տիւ ախպէր ըլնինք:

Էրկուս ախպէր էլան:

Դաւիթ էսաց.— Իս քեաղցած իմ, ինչ տ'ուտինք:

Նախրուրդ էսաց.— Դաւիթ, միր գեղ սասման ժամի, որ տիւ
քեաղցած իս, տիւ կաց իմ տաւար, իս էրթամ ճաշ պիրիմ՝ ու-
տինք:

¹⁾ Ոտարօրէիկ: ²⁾ Մաշիկ, սանաման: ³⁾ Մարգագետին: ⁴⁾ Սպի-
տակ: ⁵⁾ Աղբուր: ⁶⁾ Առիւծներ: ⁷⁾ Այգրներ: ⁸⁾ Թնդալ: ⁹⁾ Ասան-
ձին, զատ:

¹⁰⁾ Քերականօրէն անհասկանալի է:

Գաւիթ էսաց.— 2է, տիւ շքս կերը ճաշ պիւրը, իս կ'երթամ:
տիւ տաւար պախը, իս էրթամ, առնիմ, պիրիմ:

Գաւիթ էլաւ, կինաց էն գեղ. խասաւ, տեսաւ, որ քեան-
սուն լիւկ¹⁾ խրիսայ²⁾ ի դրած, էսաց.— Ա՛յ ջանմ, քիչ ըմ խարի-
սայ տուէք տանիմ, իս իմ ընկեր ուտինք:

Ժամխար կանգընաւ, էսաց.— Ա՛յ որտի, դեադըը՝ պատա-
րագ ըլնը, համ կուշտ կի, համ առ, տար:

Էսաց.— 2է, իս լաղն³⁾ իմ, մկայ կ'տանիմ,—նախիր կ'երթայ
խալխի զիանքտիր:

Որ չ'տուին, Գաւիթ էզար մէկ լիւկ խրիսայ էխան, մէկ
պղինձ էլ եղ, առից, կինաց նախըչու մօտ, տեսաւ նախըչին էն-
դեղ կ'լայ, էսաց.— Ջանմ, ինչի՞ կ'լաս:

Էսաց.— Վ'լամ, էսաց, տաս դիւ⁴⁾ էկան, տաս խատ իղ իմ տա-
ւարքիրուց առին, տարան:

Էսաց.— Հայդի, թըղ հրիսէն մնայ էստեղ, ես էրթամ տա-
ւարնիր առնիմ, պիրիմ, նուր կ'ուտինք:

Էդիկ մնաց. ինք էլաւ յիտիւ դիւերուն կինաց. կինաց, էլաւ
սարի գլեոխ. տեսաւ՝ դիւիր զտաս իղ զինած, կտրտած, լցած
մեանչ տաս կանթէն պղինձ՝ կ'իփին: Էն սհաթին խասաւ, տաս դի-
ւու գլեոխ կտրից, էլաւ ձեռ էտու զպղինձ՝ միս մէջ հալայ կէ-
սափիիլ, առից, վիրուց, տարաւ էն գեղը մէջ՝ կաշիքն էլ խիտ.—
Առէք, էսաց, էսա մեծ պղինձ ձի պտտիկ պղնձի փուխ⁵⁾, էսա միսն
էլ ձի խրիսը փուխ, ինչ իս տարիր իմ, կաշիքն էլ շիւարնիր թըխ
խագնին իմ խերը խամար:

Գարձաւ, էկաւ մատ նախրուրդ, տեսաւ, որ խրօխպէր խաց
առիր, իկիր ի:

Խրօխպէր որ զատնու իրիշկից մեանչ նախրին, վախացաւ. տե-
սաւ որ քեանի արջ ըմ կայ, կէլ ըմ կայ, ասլան կայ, կափլան

1) Փոքրիկ կարաս: 2) Հարիսայ: 3) Առաջ, շտապ: 4) Դև:
5) Փոխ, փոխարէն:

կայ, բիրադի ժողովի մեանչ նախրին, բերաճաւի, տուի վերար յախարին:

Խրօխպէր կանչից.— Գաւիթ, էրի քիւ խաց ան, տար, ծիրացիր իմ, չբմ կերի պիրի, խարքցի մատ քի:

Գաւիթ էկաւ մատ խրօխպէր, էկաւ, էսաց.— Խրօխպէր, ինչ էդա սիւ տաւարքիրն ին, ինչ էդա կարմիր տաւարքիրն ին՝ լաւ ին, ինչ էդա բող տաւարքիրն ին, էդա պետ տաւարքիր շատ ծռուիթին կ'էնին, ընծը կ'չարչրին:

Խրօխպէր ծըծղաց, էսաց.— Էն ինչ շատ կ'փախին, զար, էսաց, որ ճարտարուին:

Գաւիթ սօլիր վիրուց, էթալ յընջիւ խրօխպէր, էսաց.— Խրօխպէր, իս քեզի ասը կեննց սօլ ըմ կարը, որ մէկ տարի դերարի իմ վուտ, էսիկ խլիսուն խագիր իմ չուր ճաշուն կտրտուաւ, էլ կտուրքիր ոտս չ'դեադրը:

Չէնով-Յովան միտք վէ էսաց.— Քիւ տուն աւիրուը, իս պողվըտէ սօլ էտու կարիլ, սճաթ ըմ էտու ոտ՝ չ'կանգընաւ:

Գաւիթ էսաց.— Խրօխպէր, դէ իլի էրթանը, ճաշ իմ պիրի, կի, կինա:

Չէնով-Յեովան, նախրուրդ զճաշ կերան, Գաւիթին չ'մնաց. որ Գաւիթին չ'մնաց, էսաց.— Խրօխպէր, տարտակ աման տու ամանիմ տիրուջ, իս էլ կնդեղ կ'ուտիմ:

Էլաւ, զաման իաի վերար թիւին՝ պղինձ խիտ, առաւ, տարաւ սասման ժամու տուն, թասլիմ տէրտուրուջ էրաւ (դեղական յերտըւցած ին, որ էն տղէն տեսանը, շատ կ'տիինը¹⁾). տարաւ կնդեղ ըզաման, ըզպղինձ, էտու տէրտէրին էսաց.— Տէրտէր, ճաշ տուէք՝ իս ուտիմ, էն տարած անջախ²⁾ իմ խրօխպէր, նախրուրդ կերաւ:

Տէրտէր էկաւ, էսաց.— Էս տղէն ձէն չ'տէք, մի աման չամ տարաւ, չամ դարձիւց, առից իպի. խաց էլ կ'տէք՝ ուտը, ըլնը, էրթայ:

¹⁾ Կըծեծենը: ²⁾ Հաղիւ:

Աինաց, նստաւ, էրկու լիւկ էլ զինք կերաւ էլաւ, էկաւ մօտ
խրօխպէր:

Չէնով-Յետովան դարձաւ, էկաւ դեախ¹⁾ տուն. էկաւ, դալա-
լին²⁾ էսաց.— Աանչը յամէն մարդ ուր դարգըննիր³⁾ շինը, ուր
յերարսնիր կանը, քեանի տաւար չ'էկած. որ տաւար կեայ, կէ-
լիր, արջիր, ասլանբտիր, կափլանբտիր բիրագի խա) տաւրին տը
կեան, շուռ առնին քեաղքի մէչ, որ որ տեանայ սիրտ կ'պատըռուը,
կ'մեռնը. դարգախնիր շինէք, շուր) մուլթ կ'տայ. որ մուլթ իտու,
սարը ջանալար⁴⁾ կ'քաշուը, կ'երթայ սար, նուր կ'ըլնէք ձի տըռ-
նիր կ'պացէք, ձի տաւարնիր կ'գիւմէք⁵⁾:

Յիրիկուն Գաւիթ նախիր ժողովից, առից, իրի:

Քեաղքցիք բիրագի տանիր, դարգըննիր շինիցին, յերարսնիր
կանիցին, էլ մարդ տիւս չ'էլաւ: Նախիր իրի, լցուաւ քեաղաք:

Գաւիթ կանչից, էսաց.

«Քաց էրէք ձիր տանիր, բաց էրէք⁶⁾,

Վիր մէկ էր, էրիր իմ էրկուս,

Վիր էրկուս էր, էրիր իմ ուլթ,

Վիր տաս էր, էրիր իմ քսան,

Վիր քսան էր, էրիր իմ քեառսուն,

Վիր քեառսուն էր, էրիր իմ յիսուն,

Վիր յիսուն էր, էրիր իմ խարիր»:

Մարդ զտանիր չ'էրաց:

Գաւիթ դժարացաւ, կանչից, էսաց.— Ո՞վ Մտտուած, քի կ'կան-
չիմ, որ ինչ խալալ ը, էստեղ մնայ, որ ինչ խարամ ը, դառնայ
ուր տեղ էրթայ:

Խարամբիր չոկուան, կեացին. խալալքիր մնացին, տէրուանը⁷⁾
էլան, գիւմիցին:

1) Գէպի: 2) Մուննտիկ: 3) Գարբաս, դուռ: 4) Հետ, միասին:
5) Մինչև: 6) Գազան: 7) Գիւմիլ, անասունները զոմուլ կապել:
8) Երգ է: 9) Տէրերը:

Գաւիթ էլաւ, կինաց ուր տուն:

Էսաց.— Խրօնպէր, մէկ սօլ էլ տուր իս կարիլ, որ խագնիմ,
տաւար տանիմ:

Էսաց.— Ո՛րտի, քիւ նախրի հասն առնիմ տամ, անջախ ջուխտ
բմ սօլ էլ տամ կարիլ. որ էդենց ա՛նէիս, նեա¹⁾ նախրի խիտ կի-
նա, նեա քիզ էլ սօլ բմ տամ կարիլ խլխտուն զքի ա՛նէիմ գեառ-
նարած, տիւ չքս կերի նախրչուծին էնը:

Խլխտուն էլաւ, կինաց բարուշաւ²⁾. գեառնիր ժողվից, խտի
Գաւթի խիտ:

Խլխտուն էլաւ, առից, կինաց սար. սար որ տարաւ, խասը-
ցուց, խրօնպէր էսաց.— Իս ճաշուցին խաց կ՛առնիմ, կ՛կեամ:

Գաւիթ էլաւ զգեառնիր քիչից, տարաւ, էխան սար. գեառ-
նիր էնդեղ մեացին: Էտուր ոտաց ձէն որ էլաւ, բեանի մ՛ որ էդա
սար ու ձիւր³⁾ լպտարակ կեր, աղուխ կեր, կուզ⁴⁾ կեր, կոռորաչ⁵⁾
կեր, բիրադի օխտ սարը դէն ժողվից, իլից մեանչ գեառնիրուն.
որ իլից մեանչ գեառնիրուն՝ շատ էլ նեղացաւ. տեսաւ՝ էն եա-
նէն խրօնպէր խաց առից, իրի:

Էսաց.— Գաւիթ, քիւ հալ ի՛նչիս ի, գեառնիրու խիտ ճամ-
բախ կէրի՞ս էրթաս:

— Խրօնպէր, էսաց, կարմիր գեառներու խիտ, էդա սիւ ու-
լիրու խիտ լաւ ճամբախ կ՛երթամ, համա մէկինիրու խիտ, էդա
բող ուլիր, սըւտակ ուլիր, էդա յերկէնականջ ուլիր զիմ խոզին
անկիրող առին, էնքան ձի կ՛չարչըրին:

Էսաց.— Զա՛ր, դար, խրատը:

Ինչ լպտարակնիր, աղուխնիր կ՛փախին, գեառներուց կ՛ըլնին,
մէկ սպնդրի ծառ ինչ կ՛զարկի, կեախ⁶⁾ բմ քսան, իրսուն շուռ
կ՛տայ գետըն:

Էսաց.— Էրբճա՛ չուր յիրիկուն, յիրիկուն առ, բի՛ տուն:

¹⁾ Ոչ: ²⁾ Համաձայնել, պայման կապել, հաշտուել: ³⁾ Զոր
⁴⁾ Աղուեսանման մի կենդանի: ⁵⁾ Աղնիւ մորթով մի կենդանի
⁶⁾ Ընդամ:

Խրօխպէր էլաւ, դարձաւ տուն

Գաւիթ լպտորակներ, աղուիսներ, կուզեր ժողովեց, առից, իպի,
լից մեանչ քեաղքին

Քեաղքցիք էլան, չոկըցին ուրանց գեառներ, տարան: Ամն
մէկ ինչքանդար կպէր¹⁾ լպտորակ, աղուիս, կուզ՝ տարան խիտ.
լպտորակ զինիցին խատ ուլիրուն՝ կերան. աղուիս, կուզ էրին բուրք,
խագան: Ին վըխտէն լպտորակն էլ չուր մկայ էլ հա՛ կ'զինին, հա՛-
կ'ուտին. աղուիս, կուզ կ'էնին բուրք՝ խագնին:

Չէնով-Յեովան էսաց.— Գաւիթ, տիւ էլ ի՞նչ տ'էնիս. էսաց՝
քի մէկ տիրկափուն²⁾ կ'առնիմ, էրթաս նէճիր³⁾ էնիս⁴⁾:

Էսաց.— Խրօխպէր, էդիկ լաւ իմ բան ի:

Գաւիթ առից, կինաց մէճիր. առից, կինաց պառուս կորկի
մէչ, առից լիւր սպանել: Մէկ արտ կուրիկ պառուս տրուրից:

Պառաւ էլաւ, կինաց, տեսաւ, որ Գաւիթ զկուրիկ տրուրի
ը. շատ ըռըկաւ, յիշունց ⁵⁾ խոու.— Գաւիթ, կիրոզս քի տանի, մախս
քի տանի, իմ ապրուստ էն մէկ արտ կուրիկն էր, էն էլ վեար
ձի կորիցիր: Ի՛նչ, կինա՛ քիւ խոր նէճրի սար, վերու օչխար կայ,
մարալ⁶⁾ կայ, խաղալ⁶⁾ կայ, սպանը՛, բի՛ քի խամար ապրուստ
էրա՛. էդ քի խամար ապրուստ չի, իմ արտ կ'տրուրիս:

Գաւիթ էսաց.— Պառաւ, խուզիւզ արիւուզ կուրբան կ'ըլ-
նիմ, սրտեղն ի, ընձը շանք տու:

Էսաց.— Կինա՛ մատ խրօխպէր Չէնով-Յեովան, քի կ'ասը:

Էլաւ լալելէն կինաց մատ խրօխպէր.— Խրօխպէր, իմ խոր նէճ-
րի սար ընձը շանք տը տաս⁷⁾:

1) Պէտք էր: 2) Նետ ու աղեղ: 3) Որս: 4) Յիշոցք, հայհո-
յանք: 5) Եղջերու: 6) Վայրի այժ: 7) Բ. վարիանտով Գաւիթ նախընթացից և գառնարա-
ծու թիւնից յետոյ կարգալ է սկսում և երբեմն ծածուկ պառաւ-
ւի արտում որսորդութեամբ պարապում:

*) Բ. վարիանտում Գաւիթ նախընթացից և գառնարա-
ծու թիւնից յետոյ կարգալ է սկսում և երբեմն ծածուկ պառաւ-
ւի արտում որսորդութեամբ պարապում:

**) Գաւիթ այստեղ Ա. վարիանտում երգով գիմում է հօրեղ-
բօրը.

Խրօխպէր էսաց.—Ա՛յ որտը, քիւ խէր ինչ մեռիր ի, Մարա-
մէլիք մի մօտէն էն սար խլիր ի. շինք կ'իխշի¹⁾ էրթայ:

Էսաց.—Խրօխպէր, տիւ ընձը շանք տու, որ կեան՝ թըխ ըն-
ձը սպանին, քի շին սպանը:

Էսաց.—Ո՛րտի, խլիսուն, էսաց, մեանք, մէկէլ օր էրթանք,
տեսնանք:

Խլիսուն Գաւիթ էլաւ քինուց. էլաւ կինաց, պառուուն էսաց.
—Ա՛յ պառաւ, էդ Մարամէլիք ի՞նչ բան ը, էն գեոյ Մըսրն ի, ի՞նչ
բան ունի իմ խօր նէճրի խիտ:

Էսաց.—Ո՛րտի, որ տիւ կտրիճ՝ ըլնիս, էնիկ քիւ խօրն ի, չը
կէրի զօռով խըլը:

Մէկ օր ընցաւ, մէկէլ օր էլաւ, խատ խրօխպօր ընկաւ ճամ-
բախ, կեացին²⁾. կեացին, էլան խօր նէճրի սար:

Էսաց.—Գաւիթ, էսիկ քիւ խօր նէճրի սարն ի, յառաջ քիւ
խօր վխտին³⁾ էսա սարի պիւլիւր⁴⁾ բազան⁵⁾ ինք բեաշէ, մկայ Մըս-
րամէլիք իկիր ի, զբազանքտիր քակիր ի, զվէրու⁶⁾ օշխար, մարալ,
ինչ որ կայ, կ'կեայ կ'թալնը⁷⁾, կ'լոխպը⁸⁾, կ'տանը:

Ընդուցայ յիտ էլան, սարի կան էկան, շանք խուռ. օր վի-

«Խէրախուլթ խրօխպէր, խէր չունիմ, էրա խէրուլթին,
էրա խէրուլթին.

Սիւ սարն իմ տըսիր, բալաք բիւրջ պիւլիւր,
բալաք բիւրջ պիւլիւր.

Վըզ ուր Աստուած կ'սիրը՝ էրթանք սէճը կնիլիւ,
էրթանք սէճը կնիլիւ»:

Այս երգը մեր խնդիրով ձայնագրել է շնորհուհուհի Առ-
ղոմնն սարկաւազը. ընթերցողը կարող է գտնել ժողովածուիս
վերջում (երկրորդ գրքըյկում): Ա. վարիանտի պատմողը բոլոր եր-
գերը նոյն եղանակով էր երգում:

¹⁾ Չենք համարձակուում: ²⁾ Ժուրջը, բոլորը:

³⁾ Պարիսպ: ⁴⁾ Վայրենի: ⁵⁾ Յափշտակել: ⁶⁾ Մերկացնել, պղտկել:

⁷⁾ Ա. վարիանտով Չէնով-Յովանն ու Գաւիթը ժողովողի
հետ միասին են գնում Սև սար որս անելու:

րանքտիր միմնաւ^{*)}։ Լիան, պառկան մեանչ սարին, քինան։ Դաւիթ քինաւ, խրօխպէր ահախ¹⁾ չ'տարաւ, հաշիեար²⁾ մնաց. էլաւ, իպի Դաւիթի անթարու³⁾ փէշ էթըլ⁴⁾ ուր տակ, պառկաւ վերայ։

Դաւիթ ահախաւ⁵⁾, իրիշկից գիշերուան կէսին Սասմայ սա-
րը գլեռտ, տեսաւ, որ լիւս կամար կանգնիր ի Դաւիթ գինք է-
լաւ, էսաց. — Ո՛ղ Տէր Աստուած, թի որ խրօխպէրս վիր խանիմ
քինուց, տ'ընը, տ'ասը՝ Դաւիթ վախացաւ, ընձը վիր էխան. որ
չ'խանիմ, իմ անթարու փէշ էնու տկէն տիւս չի կեայ։

Լիան զտանակ, էթալ զանթարու փէշ կտրից. մնաց խրօխ-
պօր տակ անթարու փէշ։ Աաստ էրաւ⁶⁾, դեախ լիւս կինաց. կի-
նաց, խասաւ վեար լիւսուն, տեսաւ, որ էնդեղ միծ, ահագին մար-
մար քեար կայ, մարմար քեարի կէսն ճղուիր ի, լիւս մէշէն կ'բու-
խայ⁷⁾։

Գիշիր էր. էլաւ, իրիք ճղեց⁸⁾ քեաշից պիւլիւր քեարին։ Դար-
ձաւ, էկաւ մա⁹⁾ խրօխպէր. տեսաւ՝ խրօխպէր ահախիր ի, իլիր ի
քինուց, նստիր ի**):

Էսաց. — Դաւիթ, տիւ դ'իւր էր կեացի։

Էսաց. — Իրիշկը, խրօխպէր, էն լիւս կ'տեսնաս, էսաց, քենէ

1) Գունը չ'տարաւ։ 2) Արթուն։ 3) Անթարի, գիւղական վեր-
նազգեստ։ 4) Դրեց, ձգեց։ 5) Զարթնեց։ 6) Երեսը դարձրեց։ 7) Բըղ-
խել։ 8) Գիծ։ 9) Մօտ։

*) Ա. վարիանտով Դաւիթ ժողովրդից բաժանոււմ է, մե-
նակ սկսոււմ է պտըտել. Դաւիթ մտնոււմ է «Բալբար բիւրջ»-ի մէջ.
Աստու չրամանով նորա առաջ բացոււմ են դռները։ Դաւիթ
ներս է մտնոււմ և ոսկու, արծաթի շեղջերի հետ տեսնոււմ է «ժա-
մու խանդիրձնիր, անգին թագիր, անգին բիւրվառնիր, անգին խա-
շիր, անգին շուրջառնիր, ոսկէկուղ աւետարանքտիր»։

**) Ա. վարիանտով Դաւիթ այս երգն է ասոււմ հօրեղբօրը
զարթեցնելու համար.

«Խէրախուլ խրօխպէր, խէրախուլ խրօխպէր, վի՛ր իլի,
Մարմար քեարն ի բացուի, լիւս կամար մէջ կ'փայլի»։

Իսկ Բ. վարիանտոււմ այս երգն է ասոււմ.

կ'ուզեմ իրիք խարիր ուստայ, իրիք խազար փալայ, ունջբար ¹⁾, որ պիրիս, էսաց, էսա շարթուն վերայ բանին, Մարութայ բանձր Աստուարածին շինին:

էն սհամին խրոխպէր էջաւ բեաղքը մէջ իրիք խարիր ուստայ խպի, իրիք խազար էլ փալայ, ունջբար, առից, իպի, իտի վերայ. շինիցին շուր շարթ օր. շինիցին, գըլխիցին ²⁾:

Շարթ օր էկաւ, էսաց.— Խրոխպէր, քենէ կ'ուզեմ քեանսուն տերաւեր, քեանսուն վարդապիտ, քեանսուն էլ սարկաւագ, որ կեան շարթ ժամ օրհնին, կիրակի պատարագ մէջ մատուցին:

Խրոխպէր էնկիս ³⁾ հազըից ⁴⁾, տարաւ, էնդեղ իտի. ժամ շարթ օր օրհնիցին, կիրակի պատարագ մատուցին. Բաթմանայ-Բիւղէն, ճարպախար-Քեամին էլ կարաղուլ ⁵⁾ տրին վեանքին:

Դաւիթ էլաւ, էկաւ Սասուն. էկաւ Սասուն, ձեռ իտու մէկ ժեանգոուտ ⁶⁾ շխպիկ ⁷⁾ առից, կինաց պաուու արտ շաղկեամ էր ցանի, պրծաւ ինի, շեղպըկով բեղուից ⁸⁾, կերաւ տեսաւ, որ պաուաւ էկաւ:

— Պայ, էսաց, Դաւիթ, տիւ իմ կուրիկ տրուրիցըր, տիւ էկիր, մէկ արտ շաղկեամ էր մնացի, իմ ձմրան ապրուստ մէկ արտ շաղկեամ էր, էն էլ վեար ձի կտրիցիր: Մէկ ազար աղջիկ ընձը կէր, էն էլ քիւ սարբրիւ ⁹⁾ Մարամելիք տը ճամբիսը, տանը:

Էսաց.— Պաուաւ, էդ ինչ կասայ ¹⁰⁾ ը, էդ ինչ կը:

Էսաց.— Մարամելիք ճամբիսիր ի էստեղ քեանսուն բեռ ոսկի կուզե, քեանսուն տարուան խարջ մնացը գետըն, քեանսուն

Վերախուլթ խրոխպէր, վիւր իլի:

Խէր շունիմ՝ էրա խերութին:

Տիւ քիւ անիւշ քինուց վիւր իլի,

Յասօր տիւ զը խամա էրա խերութին:

Մարմար բեար բեկուիր,

Լիւան ի մէջ դեաղբիրո:

¹⁾ Երկրագործ: ²⁾ Գլուխ բերել, վերջացնել: ³⁾ Էնբան, այնպէս: ⁴⁾ Պատրաստեց: ⁵⁾ Պահապան: ⁶⁾ Ժանգոտ: ⁷⁾ Դանակ սուանց կոթի: ⁸⁾ Կճպել: ⁹⁾ Պատճառով: ¹⁰⁾ Պատմութիւն, զօրոյց:

խառն կողմով) կնիկ կ'ուզը, տանը երկանք աղան, քեառսուն ազար
աղջիկ կուզը արմաղան²⁾, քեառսուն յերկէն կնիկ կուզը՝ ուղտ
բառնան³⁾:

Էսաց.— Պանաւ, էդա բանիր սրտեխն ի, ընձի շանք տու:

Էսաց.— Գեոյ ձե տան կուշտ խարաբայ⁴⁾ մարաբ⁴⁾ ըմ կայ,
էսաց, կինքաիր, աղջկնիր ժողվի, էրի էնդեղ. ոսկին էլ խրոխպէր
գեոյ մաղաղէն կ'չափը:

Գաւիթ էսաց.— Պանաւ, էրթանք շանք տու:

Էսաց.— Կինա՛, գեոյ կ'տեսնաս:

Էլաւ, կինաց էնդեղ, տեսաւ խրոխպէր ըզոսկին կ'չափը:
Էկողնիր վո՞վն ի,— մէկ Բադին, մէկ Կողբադին, մէկ Սիւղին, մէկն
էլ Չարխազին ը. կանգնած ին, Չէնով-Յեովան կ'չափը. շատ նե-
ղացեր էր, բրաներ էր:

Գաւիթ էնդեխէն կանչից.— Խրոխպէր, էսաց, վիր իլի, իս
կ'չափիմ:

Խրոխպէր էլաւ, զկոտ իտու Գաւիթ ձեռ: Գաւիթ առից զկոտ,
գեործից, չուրս ոսկի էթըլ վեար վըռուն, փէտ իտու, իցկից, տար-
տակ կոտ էթալ ջըվալ էսաց.— Մէկ:

Մէկ, էրկու, իրիք անցկուն էրաւ, Բադին ըռըկաւ.— Էդ ինչ
կ'էնիս:

1) Կարծ: 2) Գեղեցիկ: 3) Աւերակ: 4) Յարգանոց:

*) Ա. վարիանտով Մարամէլիք լսելով՝ որ Գաւիթ գրաւել
է Սև սարը, նորոգել է Մարութան, նախանձից թշնամանում է
Գաւիթի հետ և մօր կամքին հակառակ ուղարկում է Կուզբադ-
նուն և մի փաշայի, եօթ տարուան հարկ պահանջելու Կուզբա-
դին ասում է.

«Պաննիմ քեառսուն ազար ախիկ արմաղան,
Քեառսուն կարճ կնիկ՝ էրկանք աղան,
Քեառսուն էրկէն կնիկ՝ դաւա բառնան,
Կուտերով ոսկի կ'զատիմ օխտ տարուան խարջ,
Սասում երեքում աը բերիմ թալան»:

Բ. վարիանտով Կուզբադնի տեղ Քեռսէն է գալիս:

Մէկ չըլլաւորիկ էլար, թիւ թուաւ. Սիւղնին էլ ականջ, պընջ կտրից. Չարխագին, Կուզբագին փախան, ջուհար¹⁾ տարան Մըս-րամեւիբին: Կտունք փախան, կեացին, Գաւթի կինաց զմարաբի տիւս էրաց, աղջկնիր, կնքտիր տիւս էխան: Աղջկնիր կնքտիր օրհնիւթքեով կեացին:

Կուզբագին ջուհար տարաւ Մսրամեւիբին, էսաց. — Մէկ տղայ իլի Խաւոց ազգին, զմի ճրագ ընցըցուց:

— Արա Բնչ կնինք:

Ին եանէն ասին. — Գաւթի ի, բաշխայ²⁾ մարդ չի, մէկ ժամ չինի Սասմայ սարը մէշ, քեառսուն տէրտէր, քեառսուն վարդապիտ, քեառսուն սարկաւազ տրի մեանչ վեանքին:

Էսաց. — Կուզբագին, քիւ թագարիք տիւս, տ'երթաս Սասմայ սար, Մարութայ բանձր Աստուարածին թաւնիս, աւիրիս, կեաս:

Կուզբագին էլաւ, իրիք խարիր մարդ առից, բիրադի մէկ տա-րուան պահուած տղայ, ժողվից, էլաւ, կինաց վեանքի վերայ³⁾:

Ճարպախար-Քեամին իլի սար, կինաց ի նէճիր. Բաթմանայ-Բիւղէն էլ դարձի, քեաղաք էկի, վեանք մշուր³⁾ մեացի:

Կուզբագին քեշից, կինաց վեար վեանքին: Էղար, սպանից քեառսուն տէրտէր, քեառսուն վարդապիտ, քեառսունից մէկն պա-կաս սարկաւազ, — մէկ սարկաւազ էլ զինք մեանչ շուրիրուն պա-խից, չ'տեսան^{2*)}:

Կուզբագին զըմէն էլ սպանից, զվեանք քակից, զըմէն աւի-

¹⁾ Լուր: ²⁾ Ուրիշ, տարբեր: ³⁾ Անտէր:

^{*}) Ա. վարիանտով այժմ գալիս է Քեռսէն:

^{**}) Ա. և Բ. վարիանտներով Մսրամեւիբի մարդիկը ոչ թէ Բաթմանայ-Բիւղի և Ճարպախար-Քեամու բացակայութեան ժամանակ են յարձակում, այլ խորամանկութեամբ իրանց սպանած արջի ականջները ցոյց տալով երկու «փէրիզ»-ներին՝ հաւատացնում են, թէ Գաւթին սպանել են: Երկու փէրիզները իրենց տիրոջ մահը լսելով այլ ևս վանքը չեն պաշտպանում:

ըից, ինչ որ կեր՝ (սուրտից¹⁾), առից, տարաւ

Սարկաւագն էլաւ, առից արընթըթախ շապիկ, առից, էկաւ,
Սասմայ քեաղաք. Սասմայ քեաղաք որ մտաւ, խարցնից.—Մե տէր
Գաւիթ ճրտեղն ի

Ասին.— Կեացի պառու տուն, գինի կ'խըմը:

Կինաց, կանգընաւ վեար տուն, կանչից.

«Մի տէր. Գաւիթ նստիր ի մեանչ սողբըթին²⁾,

Կ'խմէր նոան գինին.

Էկին, սպանիցին քեառսուն տէրտէր,

Քեառսուն վարդապիտ, քեառսունից մէկ պակաս
սարկաւագ³⁾»:

Էլ չխոսկացաւ³⁾, էսաց.— Ժամու խունկն ի պակաս, թէ
ձէթն ի պակաս, տուէք՝ սարկաւագ առնը, էրթայ:

Սարկաւագ էսաց.— Նեա խունկն ի պակաս, նեա ձէթն ի
պակաս:— Երընըթ⁴⁾ շապիկ էխան, էթալ յեռջիւ Գաւթին:

1) Մաքրել, սրբել: 2) Երգ. է: 3) 2 հասկացաւ: 4) Երիւնոտ:

*) Բ. վարիանտում տիրացուն այս երգով է դիմում Գաւթին.

«Ափսո՛ւս, խաղա՛ր ափսոս,

Սպանիցին վարդապիտնիր,

Ինչ ոսկը գաւազան կ'ըռներ,

Քարուզ կ'տէր ժողովորդին:

Ափսո՛ւս, խաղա՛ր ափսոս,

Սպանիցին քեառսուն տէրտէր,

Ինչ ոսկը սրկին բռնած ձեռ՝

Սրբութին կ'տէր ժողովորդին:

Ափսո՛ւս, խաղա՛ր ափսոս,

Սպանիցին քեառսուն պակաս մէկ տիրացու,

Ինչ ըզոսկը բիւրվառ ձեռ՝

Խունկ կ'ծխէր յըռջիւ ժողովորդին:

Դաւիթ էլաւ, պառու անթարուց¹⁾, ինչ թոնիր կ'սառնին, առից, ընկաւ մաշ տաշտին, կանչից Աստուած, կինաց դեախ Աող-բազնը ասքար. կինաց, ասքարին խասաւ. խասաւ, ձեռ. էտու մէկ սպնդրի ծառ ըմ քեչից, իրիք տիր իտու պալանդարկ²⁾, իրիք խարիր ասքար կուտրից³⁾. Մնաց Կուզբաղին զինք մընակ: Խասաւ, Կուզբաղին էլ բռնից:

Էսաց.— Իս բիւ ժամու բեախտ, ընձը չ'սպանիս:

Որ չ'սպանից, էլաւ Կուզբաղնու ատամբիր քեչից, վնչից⁴⁾ ճակատ⁵⁾:

Կուզբաղին էլաւ, կինաց Մարայ բեաղքի բեամակ:

Էնդեխէն Մարայ խարանիր, կնքտիր էկան ջիւրու, իրիչիցին, տեսան՝ Կուզբաղին կ'կեայ էն եանէն. կնքտիր կանչիցին, ասին

«Կուզբաղին . . . արերան^{**)}»,

Ինչ իս իկի լերան լերան.

Տիւ կ'ասիր՝ կ'երթամ Սասնայ քեաղաք,

Քեառսուն աղջիկ բիրիմ արմաղան,

Քեառսուն կոլոտ կնիկ բիրիմ՝ էրկանք աղան,

¹⁾ Անթարոց—թոնիր խառնելու փայտը: ²⁾ Փայտ շարտել:

³⁾ Սպանեց: ⁴⁾ Մեխեց, խրեց:

⁵⁾ Դաւիթ նորից նորոգում է վանքը:

^{**)} Ա. վարիանտում Կուզբաղին Սասուն է հասնում, Սասնան կանայք հարցնում են.

«Կուզբաղին, լերան լերան,

Մուրուս բռնիմ, ցէթիմ բերան,

Էդ ուր կ'երթաս էղենց շորերան»:

Կուզբաղին էսաց.

« . . . էք ձեր միծ ու պտկի բերան,

Տ'երթամ Սասուն, քեառսուն աղջիկ բռնիմ արմաղան», և պլն:

Անանիք ինչ ասրցին.

— Է՛հ, Կուզբաղին, տիւ գնա, ընկի շէկ տղի ձեռ, աղէկ կ'բիրիս թալան:

Քեառսուն յերկէն կնիկ բիրիմ՝ ուղտ բառնան:

Պուզբագին էսաց.

«Իս չէր գիտը, էնունց նիտիրն ին գերան,

էնունց խուտիրն ին կծան.

Ինչ կ'զարկին մարդու ջան.

Լէշ կ'էնին պատուխանն:

Պըթիր կ'ասին.— Եբա միր էրկնիր¹⁾ սօրտեղն ին:

էսաց.

«Զիր իրկնիր ինկած ին Լօռայ դաշտ, կ'խեծան²⁾».

Պեարուն որ ջրխեղեղ կ'ըլնը,

էնունց ճուճ ու պուլուր կ'ըրրը,

էրէբ ձե խամար եղ, չուրթանն:

Մտրամէլիբ դիւրբինք խտի աշիչ, զՊուզբագին տեսաւ զատ-
նու.— ԸՏՕ, Պուզբագին կ'ծըծղայ, զՍասմայ թալան³⁾ ի բիրի խիտ:
Պանչից.— Պուզբագին, ադ⁴⁾ Ինչ իլի քի, տիւ Ինչի չ'ըրրէր Սաս-
մայ թալան:

Պուզբագին էսաց.

«Իս չէր գիտը՝ քեար էր կապան,

Իս գիտէր՝ դեաշտ էր դիւրան⁵⁾,

էնունց խուտիրն ին կծան,

էնունց նիտիրն ին գերան.

Էզար, իրիք խարիր մարդ էրաւ պատուխանն:

Մտրամէլիբ էսաց.— Հայդէ, կանչէք դալմը կանչիլ, որ իմ
ասքար բիրագի ժողվէք, տասուերկու տարըց բռնէք չուր վաթ-
սուն տարին. էնկիաս խասէք, ինչ որ կայ՝ բիրագի ժողվէք, բերէք:

Էն սհամին կանչիցին, ժողվիցին, Մտրայ քեաղքի մէյդան
կայնացըցին Մէկ թուղթ կիրիցին, կասըղը⁶⁾ ձեռ տուիցին, Գաւ-
թի խամար ճամբիցին Պասըդ Պասոն էլաւ, զթուղթ առից, կի-
նաց. կինաց Սասմայ քեաղաք:

¹⁾ Էրիկնիր: ²⁾ Հեծեծալ: ³⁾ Աւար: ⁴⁾ Այդ: ⁵⁾ Գուրան— Տարթ,
դաշտավայր: ⁶⁾ Աուրճանդակ:

Դաւիթ առից զԹուղթ, կարտաց. — Քիւ Տողուքեար էրա, իս իմ ասքար ժողվիր, Լօռայ դեաշտի մէջ իմ շաղբեր¹⁾ զարկիր իմ. տասներկու օր քե մօՏլաթ²⁾, էկար՝ էկար. որ շէկար՝ կ'զարկիմ՝ Սասմայ քեաղաք, Սասմայ տուն կ'աւիրիմ, Սասմայ ճրագ կ'ընցըցիմ: Զուր յասօր տիւ իմ ախպէրն իր, էս օր ձի տիւ դիւշման դարձար:

Դաւիթ որ կարտաց, էլաւ, կինաց մատ պառաւ, էսաց. — Պառաւ, անթարիւցից, շիշից³⁾, Բնչ ունիս. Բնչ որ ունիս, Տաղիր էրա, իս տ'երթամ Մսրամելիքի կոիւ:

Էսաց. — Այ որտի, Դաւիթ, տիւ շիշօվ, անթարիւցով չըս կէրի կըռիւ էնի:

— Արա՛, պառաւ, իս Բնչկով էրթամ կոիւ:

Էսաց. — Որ տիւ կ'երթաս կոիւ՝

Քիւ խօր կայ Քիւռկիկ-Ջալալին⁴⁾,

Քիւ խօր կայ գիւտին⁵⁾ ը գլխին:

Քիւ խօր կայ քեամարն⁶⁾ ը ոսկին,

Քիւ խօր կայ թուրն ը կէծակին,

Քիւ խօր կայ կապէն կաղըֆին,

Քիւ խօր կայ ջղմէն⁷⁾ ի զան կաշին,

Պողվտէ նայն⁸⁾ ի տըկին,

Քիւ խօր կայ զինը⁹⁾ սաղաֆին,

Ռըքերնիր¹⁰⁾ մօտէն կախուկ ոսկին,

¹⁾ Արան: ²⁾ Ժամանակ, միջոց: ³⁾ Երկաթէ բարակ ձող, մի ծայրը կարթածէ շանգալ, միւսը սուր, որով թոնրում թխած հացը հանում են: ⁴⁾ Թագ: ⁵⁾ Կամար, գօտի: ⁶⁾ Կօշիկ: ⁷⁾ Պայտ: ⁸⁾ Թամբ: ⁹⁾ Ասպանդակ:

^{*)} Ա. վարիանտով Դաւիթն ասում է.

Քեո խօր կայ Քիւռիկ-Ջալալին,

Քեո խօր կայ թամբն ի սաղաֆին,

Քեո խօր կայ ջղմէն ի ոտին,

Քեո խօր կայ կապէն կաղըֆին,

Քեո խօր կայ խաւն ի պատրազին,

Վեար Դաւիթի աջ թիւրին:

Քնն խոր կայ պողզլտէ գեամ,

Դնիս Քիւռիկ-Ջալալի բերնին:

Իթուղ, կինաց մատ խրօխպէր, էսաց.

«Խէրախուժ խրօխպէր, բենէ կ'ուզիմ Քիւռիկ-Ջալալին¹⁾,
ալա տգեոյ, Քիւռիկ-Ջալալին.

Քենէ կ'ուզիմ գիւտին ը գլխին,

Քենէ կ'ուզիմ քեամարն ը սսկին,

Քենէ կ'ուզիմ թուրն ը կէծակին,

Քենէ կ'ուզիմ կապէն կաղըֆին,

Քենէ կ'ուզիմ ջղմէն իզան կաշին՝

Պողզլտէ նալն ի տըկին,

Քենէ կ'ուզիմ զինը սադաֆին՝

Ոսկի ուրբերնիր մօտէն կախուկ,

Քենէ կ'ուզիմ գեամն ի պողզլտին՝

Քիւռիկ-Ջալու բերնին՝ զնիմ²⁾»:

Խրօխպէր էսաց.— Բերան կուտրէր քիւ ասողին:

Էսաց.— Խրօխպէր, կ'տամս ընձը, էլնիմ, էրթամ կախ:

Էսաց.— Ա՛յ որտի, նուր եօթ տարին (թըմըմեր³⁾) իս, տիւ
կախ էրող չիս:

Էսաց.— Տ'երթամ, իմ Աստուած կանչիմ, էրթամ յէռջիւ դիւշ-
մանին⁴⁾:

— Ա՛յ որտի, իլի, կինս մի թաւլէն⁵⁾, իրիք խարիր ձի մէկ
սրայով⁶⁾ կապուկ ի, որ կ'խաւնիս՝ քե խամար առ, քի:

Դաւիթ էլաւ, կինաց թաւլէն սրով⁶⁾ ձիանցտարու քեամկին
վրու վերայ ձեռ էտու, փուրիր առից գեառն. դժարացաւ, էսաց.

— Էսունք չին Քիւռիկ-Ջալալին:

1) Երգ է: 2) Լրացրել ետ: 3) Թշնամի: 4) Գոմ: 5) Կարգով,
շարքով: 6) Կարգով:

*) Ա. վարիանտով. «Խէրախուժ խրօխպէր, խէր չունիմ, էրա
խէրուժին. տիւս քի Քիւռիկ-Ջալալին»:

Մէկ պզտիկ տիւռ էլ չոկ էրաց, տեսաւ՝ մէկ ձի էնդեղ կապուկ ի մընակ, խաւիրն էլ էլած, էնքան ծրատած վերայ, ձին էլ հատրկած¹⁾: Դաւիթ ինչ ձեռ էտու վեար քեամկին, աբիւց²⁾ էզար պատին, կրակ մօտէն կինաց:

Ուրախացաւ, էլաւ զձիու գլեոխ պագնից. զձին էխան տիւս, տարաւ, [Թասլիմ³⁾] պառուուն էրաւ:

— Ա՛յ որտի, քիւ խօր Բիւռիկ-Ջալալին որ կայ, էդ ի իսաց. — Պառաւ, մէկ գլեոխ սապուն, երկու պղինձ ջիւր կ'տարցուցիս, լաւ կ'վլաս:

Դարձաւ Դաւիթ, էկաւ մատ խրօխպէր. — Խրօխպէր, քենէ կ'ուզիմ իմ խօր աւաղալըն յ, [Թամամ⁴⁾] կ'խանիս, տաս իմ ձեռ:

Իսաց. — Մ'տի, իս կարողու[թիւն չ'ունիմ խանիլիւ, քիւ խէր ինչ մեռիր ի, սնդկի տիւռ փակիր ի. իս չիմ կերի⁵⁾] խանի տիւս, տիւ կինս, խան

Կինաց, էնդեղ կանգնից Դաւիթ, կանչից ուր Աստուած, էլաց, սնդկի տիւռ զինք զինք բացուաւ Բանիր էխան տիւս: Յառաջ խագաւ ջգմէք, քեառսուն զխոր բամբակ իտի՝ անջախ կանգնաւ վոտքիր. էլաւ կապէն կաղըֆին խագաւ, էրկու տակ էրաւ, անջախ սը[թըրուաւ. քեամարն ի ոսկին, ինչ մէկ փաթ⁶⁾] խօր մէշացն էր, եօթ փաթ էկաւ էնուր մէշաց. քեառսուն զխոր բամբակ իտի գիւտին, անջախ դաղրաւ գլեոխ. [Թուր էլաւ կապից վերան, եօթ փաթ էկաւ պիւլիւր մէշաց, տալ կէսն գետըն կ'առնէր]

Պառաւ զձին վլաց, իպի, Դաւիթ տեռու կայնացըցուց: Դաւիթ էլաւ, զին իտի վերայ, գեամ իտի բերան, էլաւ զձին խեծաւ, տաան կանգնաւ:

Չէնով-Յեռվան էսաց.

«Ափսո՛ւս, խագա՛ր հէֆ ափսուս Բիւռիկ-Ջալալին⁷⁾»,

ա՛խ հալա Բիւռիկ-Ջալալին.

¹⁾ Կեղտոտած: ²⁾ Երացի: ³⁾ Եանձնել: ⁴⁾ Տուն, ստացուածք: ⁵⁾ Լրիւ, ամբողջ: ⁶⁾ Չեմ կարող: ⁷⁾ Մէկ տակ, մէկ անգամ:

⁸⁾ Բ. վարիանտով ասում է.

Ափսճւ, խազա՛ր Տէֆ արսուս գլխու գիւտին,
ա՛խ հալա գլխու գիւտին.

Ափսճւ, խազա՛ր Տէֆ արսուս թուրնը կէծակին,
ա՛խ հալա թուրնը կէծակին.

Ափսճւ, խազա՛ր Տէֆ արսուս քեամարն ի ոսկին,
ա՛խ հալա քեամարն ի ոսկին.

Ափսճւ, խազա՛ր Տէֆ արսուս կապէն կադրֆին,
ա՛խ հալա կապէն կադրֆին.

Ափսճւ, խազա՛ր Տէֆ արսուս ջգմէն իզան կաշին,
ա՛խ հալա ջգմէն իզան կաշին.

Ափսճւ, խազա՛ր Տէֆ արսուս նալն ը պողպտին,
զարկած ի ջգմի տրկին.

Ափսճւ, խազա՛ր Տէֆ արսուս, զին էր սադաֆին,
կախուկ մօտէն ուրբերն էր ոսկին,

Ափսճւ, խազա՛ր Տէֆ արսուս, գեամն էր պողպտին,
ա՛խ հալա գեամն էր պողպտին»:

Դաւիթ ըւրկաւ, ձեռ իտի վեար թրին, տը քեաշէր, զար-
կէր խրօխպօր:

Չէնով-Յեոպան կանչից.

«Ափսճւ, խազա՛ր արսուս,
Կինաց Սասնայ տնէն Քիւռիկ-Ջալալին.

Ափսճւ, խազա՛ր արսուս,
Կինաց Սասնայ տնէն գիւրզն ի փէրիզին.

Ափսճւ, խազա՛ր արսուս,
Կինաց Սասնայ տնէն գիւտին ի գլխին.

Ափսճւ, խազա՛ր արսուս,
Կինաց Սասնայ տնէն կապէն կադրֆին.

Ափսճւ, խազա՛ր արսուս,
Կինաց Սասնայ տնէն գօտիկն ի մէջքին.

Ափսճւ, խազա՛ր արսուս,
Կինաց Սասնայ տնէն թուրն ի կէծակին.

Ափսճւ, խազա՛ր արսուս,
Կինաց Սասնայ տնէն Թուլան Դաւիթ»:

«Ափսո՛ւս, խաղա՛ր հէֆ ափսուս մի Թռչան Դաւիթ^{*)},

ա՛խ հալա Թռչան Դաւիթ»:

— Խրոխպէր, քիւ բերան կուտրէր՝ էն մէկ խօսք չ'տէր. որ չ'տէր՝ իս քիւ վիզ տը կտրէր:

Դաւիթ էլաց, էկաւ, խրոխպօր գլեոխ պագնից. խրոխպէրն էլ էտու գլեոխ պագնից:

Զուհար կինաց Յոանն-Վերդեան.—Վերդեոյ, ըսըցին, Դաւիթ կինաց Մարամելիքի վերայ կոխւ:

Ծըծղաց, էսաց.—Վեացէք, Սասմայ շողկիմակիր Դաւիթին սսէր, Մըսրամելիքի ձախ ձիւն ձը խամար բիրիս:

Դաւիթ կանչից ուր Աստուած, էսաց.

«Ո՛վ քիւրիր¹⁾, կացէք բարով,

Անձի քիւրիթին էք էրի.

Ո՛վ մէրիր, կացէք բարով,

Ձի մերութին էք էրի.

Բարի՛ տիրկիցնիր²⁾, կացէք բարով,

Կացէ՛ք բարով մի՞ծ ու պսակով»:

Խրոխպէր էսաց.—Ա՛յ որտի, որ տ'երթաս, քի մէկ շիրաթ³⁾ կ'էնիմ, ահանջ կ'գնիս իմ շիրաթին. որտեղ քիւ ձին չորիր⁴⁾ կ'զարկի գեաըն, էնդեղ կ'քինիս. քիւ ձին կ'կապիս, քիւ ձիու էմ⁵⁾ կ'ըտասս, քիւ տեղն էլ կ'շինիս ձիու չուրս ոտաց մէջ: Որ կ'ըլնիս, կ'երթաս, դեաշտի մէջ պողվըտէ սուն ըմ կայ, քիւ խէր որ կոխ էրթէր, կ'զարկէր պողվըտէ սուն, որ կտրէր՝ էնու բան յաջող էր, կ'երթէր. որ չ'կտրէր, կ'գառնէր, կ'գէր տուն: Տիւ էլ որ էրթասս, պողվըտէ սուն կըխիս⁶⁾, թուր զարկիս պողվըտէ սուն, որ կտրից էթալ. քիւ բան յաջող ի, կանչը Աստուած, կինա դեախ քիւ կոխ. որ չ'կտրից՝ դառնաս, կեաս քիւ տուն:

1) Քոյրեր: 2) Դրացիներ: 3) Խրատ: 4) Ծնկներ: 5) Կերակուր, ուտելիք: 6) Կընայես, կ'տեսնես:

*) Ա. վարիանտով՝

«Ափսո՛ւս, խաղա՛ր ափսուս իմ թանգ Թռչան Դաւիթ»:

Ելաւ, քշից ձին, կինաց. կինաց, կաթնով յախարի վերայ ձին
չոք եղար գետըն. որ չոք եզար գետըն, որքեր ըմ եղար ինչ որ
քեր ըմ եղար, ձիու մէկ կուղաշարք կուտրից:

Էսաց.—Մէկ սհաթուան ճամբախ իս քէլի, ինչ շիւտ մու-
նացար¹⁾, որ չոքի գետըն կ'զարկիս:

Ձինք փուշմընաւ²⁾, էսաց.—Իմ խրօխպէր ընձը շիրաթ էրաւ,
էնու խօսք պար չ'տամ գետըն:

Ելաւ, ուր ձիուն էմ էտու, զձին քեշից, ջիւր խուռ. ձին
ջիւր խմաւ, զինք լէ մտաւ ջիւրու մէջ, լողկացաւ. ուր շուրի խա-
գաւ, պառկաւ մաշ³⁾ ձիու շուրս ստաց, քինաւ:

Աէս գիշիրին ահախաւ, տեսաւ՝ կըփկըփուց ինկի ուր ջան,
ուր շուրի. ինչ էլաւ, կանգընաւ՝ քեամարի կուտուրնի Երմէն
մէկ տեղ ըմ կինաց. զինքն էլ շատ ճիւշացի, Աստու շնոխքով
լցուիր ի. քեանսուն զիտր բամբակ էնու ջգմէքն էր, էխան, էթալ,
անջախ վուտրի մտաւ մէջ. քեանսուն զիտր բամբակ էնու գիւ-
տին էր, էն քեանսուն զիտր բամբակ էխան, էթալ, անջախ մտաւ
գլեոխ. կապէն երկու տակ վերայ էր, էրաւ մէկ տակ, անջախ է-
կաւ չոքի բունից. թրի կայիւ⁴⁾ եօթ փաթ պիւլիւր մէշացն էր,
արձկից, մէկ փաթ անջախ խասաւ. թուրն երկու փայ⁵⁾ գետըն
կ'քաշէր, ինչ կապից, չոքի ու վերայ անջախ խասաւ:

Բարի լիւս ինչ բացուաւ, էլաւ զիւր աղօթ էրաւ, զիւր
ձին խեծաւ, քշից, կինաց պողպտէ սուն վերայ կանգնաւ, էսաց.

«Յիշեա իմ խացն ու գինին,

Տէր կենդանին,

Մարութայ բանձր Աստուարածին,

Խաչ պատրազին

Վերար Դաւթի աջ թիւին»:

Թուր քեշից, եզար պողպտէ սան. սուն կտրից, կալամ վերար

¹⁾ Ծուլացար, թուլացար ²⁾ Չղջաց. ³⁾ Մէջ: ⁴⁾ Դօտի կա-
շուց: ⁵⁾ Բաժին:

կալամբն կանգնաւ չիմացաւ, որ կտրիր էր, էսաց.

«Չեռնի՛կ, տիւ կուտուր կինէր¹⁾,

ա՛խ հալա տիւ կուտուր կինէր,

Տիւ զպողվըտէ սուն անկտրիլ չ'թողնէր,

ա՛խ հալա սուն անկտրիլ չ'թողնէր»²⁾;

Չեռ կուտրաւ դժարացաւ Դաւիթ, էլաց: Միտք էրաւ, տը տառնէր դեախ տուն, որ տը տառնէր դեախ տուն, դարձաւ, փչից դեախ սուն, կտուր թռաւ, կինաց: Դաւիթ ուրախացաւ, դարձաւ, էսաց.

«Չեռնի՛կ, տիւ կանաչ կինէր²⁾,

Չեռնի՛կ, տիւ կանաչ կինէր,

Տիւ զպողվըտէ սուն կտրիցիր, թալիցիր.

Տիւ զպողվըտէ սուն կտրիցիր, թալիցիր,

Մեզի սիւտակ իրիս դարձըցիր,

Միզի սիւ իրիս չ'էրիր»:

Աստու հրամանբիւ ձեռ ժրաւ³⁾, սաղացաւ մէկն էրկու դարձաւ կվաթ:

Չին բչից, կինաց Լոռայ դեաչտ. որ խստաւ Լոռայ դեաչտ, իրիչից, տեսաւ ի՛նչ, քեանի մ' ասող էրկինք կայ, անցկուն չադր զարկի Լոռայ դեաչտ:

Դժարացաւ Դաւիթ, էլաց.—Օ՛Ք, Տէր Աստուած, իս էլնիմ կրակ, էս էլնը բաժրակ, իս չիմ կիրի զէնունը վառը⁴⁾;

¹⁾ Կտրուէիր: Այս կտորը երգ է: ²⁾ Երգ է: ³⁾ Առողջացաւ, բժշկուեցաւ:

⁴⁾ Ա. վարիանտում.

«Չեռնիկ, տիւ կուտուր կինէր,

Թրիկ, տիւ թաղիս դառնէր,

Ինչքե զարկըցի՛ տիւ պողվըտէ սուն կտրէր,

Կալամ վեար կալամի դադրացուցէր»:

⁵⁾ Բ. վարիանտով.

«Էնունը ընին արտն կորնկան,

Ատածու հրամանքիւ Բիւռիկ-Ջալալին լեզու եկաւ, էսաց.— Դաւիթ, տնսիր, Ինչ կ'վախանաս. Ինչքանդար¹⁾ քիւ թուր կտրը, էնքանդար իմ պուշը մաղիր կ'կտրը. Ինչքանդար քիւ թուր կտրը, իրիք էնքան իմ նափաս²⁾ կ'կտրը. Ինչքանդար քիւ թուր կտրը, վեց ընցկուն իմ ոտնիր կ'կտրը. մը վախանա, քիւ Աստուած կանչի:

Ինչ խասաւ Լըռայ դեաշտ՝ տաս օր լըմացաւ. վըղդէն լըմացաւ:

Մարմէլիք թուղթ կիրից, ճամբխից³⁾, էսաց.— Տաս օր լըմացաւ, իմ վըղդէն թըմըմաւ. կ'կեամ, կ'զարկիմ քիւ քեաղաք, կ'աւիրիմ, զքեար ու խող կ'առնիմ, կ'տանիմ:

Թուղթ տարող կինաց, պատահաւ Դաւթին: Դաւիթ առից զթուղթ, կարտաց: Մարմէլիք կիրիր ի.

«Խաղար խամար մարդ ունիմ անրեղ անմուրուս^{*)},

ախ հայա անրեղ անմուրուս.

Իս ընիմ մարդն ի մանգաղ,

Իս էնունց ճար չիմ իտայ:

Էնունք ընին բամբակ,

Իս ընիմ կրակ,

Չիմ կերի իրիցըցի.

Էնունք ընին գեառնը մաքին,

Իս ընիմ գէշը գեալին,

Իս չիմ կերի զանիւնք յաղթը»:

¹⁾ Որքան: ²⁾ Շունչ: ³⁾ Ուղարկեց, ճանապարհ դրեց:

*) Ա. վարիանտով Մարմէլիք այս երգն ասում է այն ժամանակ, երբ զօրք է հաւաքում Դաւթի վերայ կռիւ գալու համար. թախտի վերայ նստած իւր ղիւանում, վեաքիլ վեազրի առաջ երգում է.

«Տը ժողվիմ խարիր խաղար խամար թուխ մուրուս,

Տը ժողվիմ խարիր խաղար խամար խառ մուրուս,

Տը ժողվիմ խարիր խաղար խամար սըւտակ մուրուս,

Տը ժողվիմ խարիր խաղար խամար անրեղ անմուրուս,

Խաղար խամար էլ ունիմ բեղով մուրուսով,
ա՛խ հալա բեղով մուրուսով.

Խաղար խամար էլ ունիմ՝ հալա թուխ մուրուս ին,
հալա թուխ մուրուս ին.

Խաղար խամար էլ ունիմ՝ սիւտակ մուրուս ին,
ա՛խ հալա սիւտակ մուրուս ին»:

Դաւիթ զթուղթ կարտաց, կիրից Մսրամելիքին. «Իս էկայ»
Էլաւ զձին, թուր քեշից, կանչից.

«Որ քին¹⁾ էք՝ յարթուն կացէք,

ա՛խ հալա յարթուն կացէք.

Որ յարթուն էք՝ ձե ձիանք թամբեցէք,

ա՛խ հալա ձիանք թամբեցէք.

Որ ինչ թամբուկ ին՝ իլեցէք, խեծըցէք,

ա՛խ հալա իլեցէք, խեծըցէք.

Չասէք՝ Դաւիթ գեող էկաւ, գեող կինաց,

ա՛խ հալա գեող կինաց.

Ամախ՝ ձի մախ իմ բիրի,

Անկիրող՝ զձի խոգին տ'առնիմ»:

Դաւիթն էր, կանչից Աստուած, էրկու գլխոխ քշից, կինաց
չաղբբերու գլխոխ խլիսցըցուց, դարձաւ: Ինչ դարձաւ, արընէ
խեղեղ զէշիր կ'տանէր:

Էն եանէն ծերունուկ խալուիւր ըմ էկաւ, էրաւ «փո՛շտ,
փո՛շտ, փո՛շտ»:

Տը ժողվիմ խարիր խաղար խամար զուռնըշի,

Տը ժողվիմ խարիր խաղար խամար դհեոլշի,

Տը ժողվիմ խարիր խաղար խամար էն ինչ փեսայ ի վեար
թախտին,

Տը ժողվիմ խարիր խաղար խամար էն ինչ խօրէ մօրէ մէկ ի,

Տը ժողվիմ խարիր խաղար խամար սաղբանդ,—

Տ'երթամ վեար Դաւիթին կուրա:

¹⁾ Գուն, բնած:

Գաւիթ ըոքկաւ, ձեռ էտու զթուր քեշից, խալաւիւրու վիզ
աը կտրէր:

— Ի՞նչ փուշտ փուշտ կ'էնիս, իս հայա յերէկը¹⁾ աղէն իմ,
իս փըշտու թի՛ն իմ էրի, տիւ ընձը կ'կանչիս շփուշտա:

Խալաւիւր էսաց.— Խոգիւղ արիւուղ մեռնիմ, իս փոշտ կ'կան-
չիմ՝ ճամբախ էնին ձիկ²⁾, կեամ, զքի տեսնիմ:

Գաւիթն էր, ուհամ³⁾ էկաւ սերտ, կանչից:

Էկաւ, մօտ խասցաւ չ) մօտ որ խասաւ, էսաց.— Ա՛յ ջանմ,
Գաւիթ, հիւի կ'էնիմ քենէ, մէկ խօսք ըմ տամ քի, տիւ իմ խօսք էնիս:

— Ի՞նչ խօսք աը տաս ընձի, բարի:

Էսաց.— Էդ շիւարնիրու մեղաց տակ մի մըտնը, որ կայ՝ թա-
ղայ փեսայի, որ կայ՝ մօրէն մէկ ի, որ կայ՝ զինը մընակ ի, նեա
աղայ ունի, նեա աղջիկ, մէ կնիկ կայ, թըղի տուն քաղցած, իկի.
բիրաղի զօռով, տփելով ի բիրի Մարամէլիք. էնունց մեղաց տակ
մի ընկնի: Մարամէլիք գեոյ էնա դնջով չաղրի տակ քինիր ի, կի-
նա՛ խատ էնոր կոխ, էն ի քիւ զիւշման:

Ան էլ զձին քշից, կինաց, չաղրը տեռու կանգնաւ: Էրկու
Արար խղմաթբար ին, կանչից, էսաց.— Արարբիր, Մարամէլիք խա-
նէք՝ ըբնը, կոխ էնինը:

Արարբիր ըսըցին.— Մինք չինք կէրը. եօթ օր էնու քիւն կայ.
իրիք օր կայ՝ քինիր ի, չուրս էլ կայ, վիր⁵⁾ ըբնը:

Էսաց.— Իս չիմ դաղրը, չուր անիկ ուր քէֆով վեր իլը, է-
սաց, բիրէք մէկ գիւթնը խուփ ընձը խամա:

Էն սհամթին բիրըն:

Զխուփ էթալ դարբնի քիրէն⁶⁾, փւից, կարմըրցըցուց, զխուփ
վիրուց, էթալ վեար Մարամէլիքի քեամկին. որ էթալ վեար քեամ-
կին, Մարամէլիք յիւրիւր առից⁷⁾, էսաց.— Արարբիր, իմ տեղ լաւ
չէք խուրթի⁸⁾, լուիր զը կ'ուտին:

1) Երէկուայ: 2) Ինձ: 3) Գութ: 4) Մօտենալ, մօտ հասնիլ
5) Աւեր կենայ, զարթնի: 6) Գարբնի հնոց: 7) Շարժուեց: 8) Տեղ
խուրթիլ—անկողին պատրաստել:

Գաւիթ էն եանէն էսաց.— Իլի վեր, լիւ չ'կայ, ին իմ, ան-
մախ քի մախ իմ բիրի, անկիրող քիւ խոզին տ'առնիմ:

Մարմէլիք ծրծղաց վերան, ըսաց.— Սասմայ շաղկմակիրն
իկի, խատ Մարմէլիքին կոխ տ'էնի. էսաց՝ կ'ըլնիմ, կ'ուտիմ ակ-
ռաստ¹⁾, ճաշուն չ'մնայ, որ ուտիմ ճաշ խրամենցըն²⁾ չ'մնայ, որ ու-
տիմ խրամենցըն, ընթրիսըն չ'մնայ:

Գաւիթ էսաց.— Իլի, ինչ կ'վախանաս, քեզի ակոստ էլ ճաշ
էլ, խրամենց էլ, ընթրիս էլ կամ, հալա կ'մնամ կանուխուան³⁾ էլ
էլաւ, նստաւ. ինչ նստաւ, իրիշկից դեախ Գաւիթ, տաս գիւմ-
շու ոժ էնու մտէն պակսուաւ:

Գաւիթ էսաց.— Իկիր իմ, տ'ըլնիս, իս տիւ կոուինք:

Մարմէլիք էսաց.— Ինչիս կոուինք:

Գաւիթ էսաց.— Բարիշինք, կոուինք:

Մարմէլիք էսաց.— Ինչիս բարիշինք:

էսաց.— Տիւ իմ ձիւշ⁴⁾ ախպէրն իս, իս կանգնիմ իրիք դարբ⁵⁾
տիւ զար ընծի, դոր տիւ կանգնի, իս իրիք դարբ զարկիմ քի-
եան⁶⁾ Աստուած ընծը կ'տայ, եան քի:

Մարմէլիք էլաւ, կանգնաւ, էսաց.— Կանգնը՝ Գաւիթ:

Մարմէլիք էլաւ, զիւր ձին խեծաւ. գեորզ բոնից ձեռ:

Գաւիթն էլ դեաշտի մէջ կանգնաւ, էսաց.— Իս էստեղ կանգ-
նայ, իրիք դարբ ընծը զարկ, ինչքիս կ'դարկիս, էնենց զարկ:

Մարմէլիք զգեորզ բոնից ձեռ, Լօռայ դեաշտից քշից, կինաց
Դիւբաքիրու բեաղար, զձին էնդուցայ քշից, թափկոււն⁷⁾ քշից, իրի
դեաշտի մէջ, մէկ գեորզ էզար Գաւիթին. որ մէկ գեորզ էզար Գաւ-
թին, Քիւռիկ-Ջալալին էր, ոտ վիրուց, իտի մէկէլ եան. գեորզ
դիպաւ էնուր ոտաց կըշտը խիտ: Թոզ ու գիւման էլաւ արիկեա-
կան⁸⁾ իրիս բոնից:

Մարմէլիք էսաց.— Խազար ափսուս մե Թոլան Գաւիթ,
խուղ⁹⁾ էր, խուղ դարձաւ:

¹⁾ Նախաճաշիկ: ²⁾ Իրիկնահաց ընթրիքից առաջ: ³⁾ Միւս
օրուան, առաւօտեան: ⁴⁾ Մեծ, աւագ: ⁵⁾ Հարուած: ⁶⁾ Կամ: ⁷⁾ Վա-
ղեցնել, արագ քշել: ⁸⁾ Երեգակի: ⁹⁾ Հող:

Յհաթ ըմ մնաց, թող էջաւ, պրծաւ:

Գաւիթ ըսաց.—Մը վախանայ, իս հալայ էստեղ սաղ կենդանի իմ:

— Հայ, թալան կենայ ձին, էսաց, իս իմ ձիու մանդիլ¹⁾ քիչ էր: Էլաւ ժում²⁾ էլ զգեորդ առից, ձին խծաւ, կինաց, խասաւ Հալարայ քեաղաք. Գաւիթ վեար ձիուն խծուկ ի, էնդուցայ խառ³⁾ էրաւ, զձին իլից⁴⁾ բիշից, Հալարայ քեաղաքէն էկաւ, մէ գիւրղ էլ էզար: Քիւռիկ-Ջալալին էլ ըմ ոտ վերուց մէկէլ տեղ, գեորղ զպաւ խատ,⁵⁾ ոտը կշտին: Թող ու դիւման արիկեական իրիս բունից:

Էսաց.— Խաղա՛ր ափսուս մե Թռլան Գաւիթ, շտիցինք, պախիցինք, մե խաց կուրուսըցինք,—խուղ էր, խուղ դարձաւ:

Գաւիթ էսաց.—Մը վախանայ, իս սաղ կենդանի էստեղ կանգնիր իմ:

Էսաց.— Հայ, թալան կենայ ձին, իմ ձիու մանդիլ քիչ էր:

Ձին խծաւ, գիւրղ առից, կինաց. կինաց, Մսրայ քեաղաք խասաւ. բշից զձին, էկաւ, մէկ գեորղ էլ էզար. ինչ գեորղ էզար՝ Քիւռիկ-Ջալալին ոտ վերուց, իտի մէկէլ տեղ, գեորղ զպաւ խատ ոտաց կշտին, թող ու դիւման արիկեական իրիս բունից:

Էսաց.— Ափսո՛ւս, խաղա՛ր հէֆ ափսուս մե Թռլան Գաւիթ: Խուղ էր, խուղ դարձաւ:

Գաւիթ էսաց.—Մը վախանայ, իս էստեղ սաղ կենդանի իմ. քիւ ճար էրա, գեոր⁶⁾ իմն ի:

Պրծաւ. գեոր խասաւ Գաւիթին:

Կանչին մաջլիս⁶⁾. բիրին, կիր կիրիցին՝ բեալի, Մսրամելիք ուր դարբից պրծաւ, գեոր խասաւ Գաւիթին:

Գաւիթն էսաց.—Գեոր որ խասաւ ընծը, մէկ դարբս տուիր իմ Ասարծուն խաթը, չըմ զարկի:

Մսրամելիքի մէր էկաւ, էսաց.—Գաւիթ, խոգիւդ արիւուդ

1) Ասպարէզ: 2) Մէկէլ, դարձեալ 3) Վաղեցնել, արագ բշել

4) Իլից բշեց—շատ արագ բշել: 5) Հետ, մտո: 6) Հերթ, կարգ:

7) Խորհուրդ:

կ'մեռնիմ, իս քի պախիր իմ, իմ խաթր խամա դարբը ըմ կ'տա՞ս ձի խաթր:

Դարբը մ'էլ էտու մօր խաթր, մնաց մէկ դարբ:

Մտրամելիք էսաց.— Դաւիթ, իս քիւ դարբից կ'վախանամ:

Էսաց.— Որ կ'վախանաս, մտի քիւ ձիու տակ:

Քեանսուն գիւմշու¹⁾ կաշի էլ էթալ վեար ձիու քեամկին, զինք մտաւ տակ: Մէրն էլ աղջկնիր առից, տաս'ւերկու ազար աղջիկ առից, կանգնաւ էնու դէմաց, «ջանիման» կ'խաղին, էսաց.— Դաւիթի աչք ընկնը դեախ աղջկնիր, դարբ չ'կպնը Մտրամելիքին:

Դաւիթ ահանջ չ'էրաւ էն խօսքին. ձեռ էտու, բեշից զթուր կէծակին, յիւշեկ²⁾ ինչ խտի վեար ձիու քեամկին, կտրից զքեանսուն գիւմշու կաշին, կտրից զձիու մէշք, առից զՄտրամելիքի գլխու կեարտին³⁾, կինաց մեանջ էրկու ձիւն վէ առից գետըն, գետըն կտրից.— կէծակ էր, արա թո՞ւր,— գետըն կտրից, կինաց, առից սիւ ջիւր:

Մտրամելիք էլաւ տիւս, էսաց.— Դաւիթ, իս պրծայ, սաղ գեղջ էստեղն իմ:

Դաւիթ էսաց.— Մտրամելիք, մէկ զքի թափ տու, տեսնամ:

Որ թափ իտու, էլաւ էրկու կտուր. կտուր ըմ էն եան կինաց, մէկ էն եան. Մտրամելիք խատաւ⁴⁾:

Կանչից, Մտրամելիքի ասքար բիրագի ժողվից, առից, էկաւ. բիրագի ժողվան, իկին Դաւիթի ձեռ, ոտ պագնեցին, գլխոխ իջուցին: Ջրմէնանց դեաստիւր իտու, կեացին իրանց տնիր:

Դաւիթ զՄըսր առից:

Դարձաւ, տը կեայ ուր տուն. ի՞նչ տը բերի խիտ էն բեաղքէն. իսկի զատ չ'իպի. էնու բերած էլաւ մէ ջուխտ իզ, մէկ էթալ յիտիւքիր, Մտրամելիքի ձախ ձիւն խտի վեար արարին⁵⁾, իջնիր քեշիցին, բիրին, քեշիցին, բիրին, Սասմայ բեաղաք խասրցին:

¹⁾ Գոմշիւ ²⁾ Կամաց, ³⁾ Տանդարտ ⁴⁾ Գագաթին ⁵⁾ Սասկեց:

⁶⁾ Սայլ:

Ին սհամին կանչից ուր խրոխպէր Վերգեոն, էսաց.— Խրոխպէր Վերգեոյ, տիւ Մարամելիքի ձախ ձիւն ձենէ ուղիցըր, քի խամա բիրը:

Տարաւ, թասլիմ խրոխպօր էրաւ: Խրոխպէր իպի, զան ձախ ձիւն տրին կշիռք, կշռիցին. էկաւ բեառսուն խոնդքարը:

Ձէն ընկաւ ախշար— Գաւիթ զՄարամելիք սպանից, Մըսր առից:

Խարար կինաց, խասաւ Խանդիւթ խամիւնին: Խանդիւթ խամիւն էլաւ, էրկու աշիղ¹⁾ փող խոու, յրեողկից, էսաց.— Աեացէք Սասմայ բեաղաք, ինձը խամա կեովացէք, թըխ կեայ, զձը առնը:

Մէկէլ օր էրկու աշող՝ սաղիւր վեար թիւին՝ էկան, Սասմայ բեաղաք տիւս էլան: Էկան, Ձէնով-Յեովան տեսան, ասին Ասին.— Գաւիթ բեաղաք է՛ն ը:

Ձէնով-Յեովան էսաց.— Էսն ը:

Ըսաց.— Գաւիթ միդի շանք տու:

Էսաց.— Գաւիթ, որ կ'խարցնէք, իս իմ:

Էսաց.— Տի՛ւ իս.

Ըսաց.— Խա՛:

Էսաց.— Որ տիւ իս, զէ նստի էգա տեղ, մինք Խանդիւթ խամիւն քե խամար կեովանք:

Ձէնով-Յեովան նստաւ:

Էտունք սաղիւր առին, տրին վեար ծնկան, զԽանդիւթ խամիւն կեովացին.

«Միրիշկիմ Խանդիւթ խամիւն, ձեռ-ոտ կալամով²⁾ քեաշած ի,
ա՛խ հալա տգեոյ կալամով քեաշած ի.

Միրիշկիմ՝ էտու եղնգքիւր ոնդաշով³⁾ տաշած ի,
ա՛խ հալա ոնդաշով տաշած ի.

Միրիշկիմ՝ բաթն⁴⁾ ու բեալէն նման կ'տէր Բրջայ քեաղաք,
ա՛խ հալա Բրջայ քեաղաք.

1) Աշղը, երգիչ: 2) Գրչով: 3) Խարաբուզ, հիւսնի քերիչ: 4) Հասակ:

Վերիշնիմ՝ աչքեր չինու կ(թխայ¹) էր,

Խանդիւթ խաթնի աչքեր չինու կ(թխայ էր:

Վերիշնիմ՝ ճակտու լէնքն էլ էրկու թիղ ու կէս էր,

ա՛խ հալա էրկու թիղ ու կէս էր.

Վերիշնիմ՝ էնու ընքեր²) կամար էր,

ա՛խ հալա կամար էր.

Վերիշնիմ՝ իրիսը կարմրութին նոան գինի էր,

ա՛խ հալա նոան գինի էր.

Վերիշնիմ՝ էնու վիզի յերկնիւթ³) էրկու թիղ էր,

ա՛խ հալա էրկու թիղ էր.

Վերիշնիմ՝ էնու սիպտիւթին կիզած⁴) բամբակ էր,

ա՛խ հալա կիզած բամբակ էր.

Վերիշնիմ՝ ծըծիրն էր մաչ ծուցին, քեանց Հալարայ շաբար
քեաղցր էր,

ա՛խ հալա քեաղցր էր:»

Ձէնով-Յեովան էլաւ, զաշըղքեր տփից, սազիբ առից, էղար
գետըն, կուտրից:

Եշըղքեր լացին, կեացին մաչ քեաղքին: Գաւիթ իրի դէմ.
համայ աշըղքեր Գաւթին խէր, մէր կ'քեաշին⁵), կան կ'կեան մեանչ
քեաղքին:

Գաւիթ էսաց.— Ե՛յ ջանմ, տիւ ի՛նչի Գաւթին խէր, մէր
կ'քեաշէք:

Էսաց.— Խանդիւթ խաթնն Գաւթի խամա կեովացինք, զմի
ծիծից, սազիբ կուտրից, ճամբխու խտի:

Էսաց.— Գաւիթ, որ կ'խարցնէք, իմն իմ, մարդ չէ:

Գաւիթ կինաց, էրկու սաղ առից, տուից աշըղքերուն. մէկ
թաս ոսկի էլ տուից աշըղքերուն բաշխիչ⁶), էսաց.— Վեացէք, Գաւ-
թի խօր օղորմը տուէք, յիշունց մի՛ տէք.

Էսաց.— Վեացէք, Խանդիւթ խաթնինն ասէք՝ իրիք օր էս-

¹) Բաժակ: ²) Յօնք, ունք: ³) Երկայնութիւն: ⁴) Գզած, մաք-
րած: ⁵) Հայհոյել: ⁶) Ընծայ:

տեղն իմ, վերար չուրս աւուր կ'ըլնիմ, կ'կեամ, ճաշն կ'ուտիմ ճա-
ժուան, խրամենց կ'կեամ, խասնիմ Բանդուճահին, ընթրիսին կ'խաս-
նիմ սէր խանըմին:

Աշըղնիր էլան, ուրախ-ուրախ կեացին:

Իրիք օր ընցաւ. խլիսուն Գաւիթ ընկաւ ճամբախ, կինաց,
խասաւ ճաժուան. ճաշն կերաւ ճաժուան, խրամենցն կինաց Բան-
դիւճահին. Բանդիւճահին ընցաւ, էկաւ Գեործուժայ դեաշտ. տե-
սաւ, որ Գեործուժայ աէսը գիւթան իկիր ի էնդեղ, զդեաշտ կ'վա-
րը. տաս'ւերկու գիւթան ը, էն տաս'ւերկու գիւթնին վից աւուր
խաց, էմագ¹⁾ խատ ուրինց վիրուցած, բերած. օրն էրկուշարթի ի,
չուր շարաթ յիրիկուն տը մեան էնդեղ:

Գաւիթ էկաւ, էսաց.— Բարի աջողում:

Ասին.— Աստըծու բարին քի, կարիր ատպեր, տիւ բարով է-
կար:

Էսաց.— Գիւթնչիք, մէ կտուր խաց մի չ'կայ, իս ուտիմ, ճամբ-
խուրդ²⁾ իմ:

Գիւթնչին վիրուց, էսաց.— Մի խաց, մի էմագ գեղյ բիրադի
Բանդիւճահու գիտու կուշտ, կինաւ կուշտ խաց կի, իլի, կինա բիւ-
ճամբխը խիտ:

Գաւիթն էլ էլաւ, կինաց, փրթաւ³⁾ վերար խացին. տաս'ւեր-
կու գիւթնչու վից աւուր խաց, էմագ բիրադի կերաւ, մանանայ
չ'իթուղ:

Գիւթնչին դարձաւ, տեսաւ՝ զագ չ'կայ, ըմն կիրի, պրծի:

Էսաց.— Ա՛յ ճամբխուրդ, տիւ մի խաց, էմագ բիրադի կտրի-
ցիր, մինք մեացինք էստեղ անօթը, վից օր մինք էստը⁴⁾ պտը գիւ-
թան էնինք, տուն շինք էրթայ. միր յիտին էլ խաց բիրող չ'կայ,
ի՛նչըխ տ'էնինք:

Գաւիթ էսաց.— Որ անցկուն ի, իս ձի մեղաց տակ ինկայ,
տիւ էստեղ նստէք մէ կուտուր⁵⁾, իս կ'ըլնիմ, էն վից աւուր գիւ-

1) Ուտեղիք: 2) Ճանապարհորդ: 3) Վրոյ պրծաւ, յարձակուե-
ցաւ: 4) Այստեղ: 5) Քիչ:

Թան մընակ մէկ սհամթուան մէջ կ'էնիմ, յիրիկուն կեացէք, ձեր
խացին խասէք, չմնաք անօթը:

Գաւիթ էլաւ, զգիւթան կապից Գիւռիկ-Ջալալու պուչ. էն-
դուցայ քչից, վից աուր տաս'ւերկու գիւթնը վեար մէկ սհա-
թուան վեարից, պրծաւ, էթուղ մէկ գիւթնավեար:

Գիւթնավեարքիր էկան, ասին.—Չ'ընիմ՝ Գաւիթ տիւ իս:

Էսաց.—Աղուրդ¹⁾, իս իմ:

Էսաց.—Որ տիւ իս, էսաց, էդիկ քիւ հիւնար չի, էդիկ ձիւ
հիւնարն ի:

Գաւիթ ըորկաւ, էլաւ, գիւթնքիր էթալ իւր թիւին, էն մէկ
գիւթնավեարն էլ վեարից, պրծաւ:

Ասին.—Տիւ բարով էկար, բարով էլ էրթաս, նուր մինք գի-
տինք, տիւ Գաւիթն իս:

Գիւթնավեարքիր էլան ուրախ-ուրախ էրկուշարթի յիրի-
կուան կեացին ուսը տուն:

Ռէս ըորկաւ.—Ի՞նչից տիւ զիմ արտիր թողիք անվեարիկ
էկար:

Ճիւչ գիւթնին էսաց.—Ասլայ քիւ արտիր վեարիր ինք,
պրծիր ինք:

Ռէս չ'աւատաց, էսաց.—Մէկ օր մէկ շարթը բան չ'երուր:

Խլիսուն էլաւ, ձին խեծաւ, էսաց.—Էտիկ²⁾ ձեր բան չի, ա-
սէք մհանք³⁾ վո՞վ ի արի:

Ռէսն կուչաղ⁴⁾ մարդ էր, մէ աղջիկ կէր, էնքան կ'ուզին՝ մար-
դու չէր տուի, շատ զօրբայ⁵⁾ աղջիկ էր:

Աղջիկ ահդ⁶⁾ էրաւ, էսաց.—Որ էն մարդ չ'առնը, էլ մարդ
չըմ առնը:

Էսաց.—Ընձը տը տաս էն մարդուն:

Խարցնից.—Ա՛յ գիւթնչիք, էն մարդ, որ խաց կերաւ, ո՞ր եան
կինաց:

¹⁾ Ճլմարիտ: ²⁾ Այս: ³⁾ Տեսնենք: ⁴⁾ Քաջ, կտրիճ: ⁵⁾ Մեծ,
կտրիճ: ⁶⁾ Արդուեց:

Աղջիկ կարողուլ իտի.— Ինչ ժամանակ էդա մարդ կ'գառնայ, կ'կեայ, ընծը խարար տէք:

Գաւիթ էլաւ, կինաց. յիրիկուն խասաւ Իրան²⁾:

Մտաւ Իրանայ քեաղաք, չուրս պիւլիւր բիւրջ ի, բաղան ի էնդեղէն կինաց, տը մանէր Խանդիւթ խաթընը տուն. էտու դարգաւանքտիր¹⁾ էկան յէռջիւ³⁾, ասին.— Գեաստիւր չ'կայ՝ տիւ մտնիս:

Էդ էլ ձեռ իտու, բռնից էրկու փալիւան, մէկ էղար էն պատ, մէկ էն պատ,— ծամունը⁴⁾ պէս լողըզուան⁵⁾ պատնիս:

Ձուհար խասաւ մատ Խանդիւթ խաթիւն.— Մէկ մարդ իրի, փալաւանքտիր սպանից:

Էն ժամանակ քեառսուն մարդ Խանդիւթ խաթընը տուն նըստուկ ին. կանգնան, թրիւր առին, տի եան⁶⁾, սպանին:

Խանդիւթ խաթիւն էսաց.— Յիւրիւր մ'առնէք, էն մարդ, ինչ զան էրկու փալիւան սպանից, ձի քեառսունին էլ կ'սպանը, մ'երթէք, տիւ նստէք, իս էրթամ (Խանդիւթ խաթիւն աղախաւ⁷⁾, որ Գաւիթն էր):

Էլաւ բակը մէչ. ինչ էլաւ բակը մէչ, Գաւիթ էկաւ յէռջիւ. ինչ Գաւիթ էկաւ յէռջիւ, խասաւ Խանդիւթ խաթընը ճակատ պագնից, մէկէլ իրիս պագնից. ձեռ էտու սերտ տը պագնէր, Խանդիւթ խաթիւն պոնցկի¹⁾ մ' էղար Գաւիթը բինթը վերայ, իրիք պուտ²⁾ արուն կաթաւ գիտին:— Տիւ մէկ էկար բարով, իմ ճակատ պագնըցըր բիւ ճամբիւր խաթընը խամար. վո՞վ քի դեաստիւր տուի, իմ սերտն էլ պագնիս:

Էսաց.— Թուղ էրթամ զձին կապիմ, էմ տամ:

Էսաց.— Տիւ իմ ձիու էմ տուող չիս:

Ձգեամ բերնէն էխան, էն քեառսուն փալիւանի ձիանքն էլ

¹⁾ Գոնապաններ: ²⁾ Առաջ: ³⁾ Մաստակ: ⁴⁾ Կպլէլ: ⁵⁾ Պիտի գան: ⁶⁾ Հասկացաւ, գլխի ընկաւ. ⁷⁾ Բոռուցք: ⁸⁾ Կաթիլ:

⁹⁾ Ե. վարիանտի պատմողը Խանդուլթ խաթունի քաղաքի առունը չէր յիշում: Բ. վարիանտով Խանդուլթ խաթունի հայրենիքը «Խոյայ» քաղաքն է:

էմ կ'ուտին, զձիու գեամ բերնէն էխան, էթուղ մեանչ ձիանցա-
րուն Բիւռիկ-Ջալալին զէն քեառսուն ձին էլ էտու յէոջիւ ա-
քիւցը, քեառսուն էլ էրաւ տիւս, զինք էն քեառսունը էմ կե-
րաւ:

Խանդիւթ խաթին ըէ՛ առից զԳաւիթ, կեացին տուն:

Տեսաւ՝ քեառսուն փէրիղ էնդեղ նստուկ ին. ինչ աչք կպաւ
Գաւթին, քեառսունի ձեռ սան էլ թիւլցաւ յախու:

Էնդեղ նստան խաց ուտիլ, զինի խմիլ:

Էնու մէկ աման կայ՝ էրկու կարաս կէս զինի կ'տանը, քեառ-
սուն զիտը էլ խաց էր արի զինու խիտ: Գաւիթն էր, նստաւ էն-
դեղ, էսաց.— Անուն Յիսուսին Քրիստոսին, անուն Աստուած, օխ-
նեցէք¹⁾ էսա խաց, նստինք, ուտինք:

Էսաց.— Մի միժ տիւ իս, բարի մէջգան²⁾, տիւ օխնը, յա-
ռաջն էլ տիւ կի:

Էսաց.— Իս օխնիմ, իս ուտիմ, տիւ սոված կ'մեէք:

Էսաց.— Տիւ օխնը, տիւ կի. որ մնաց, մինք կ'ուտինք. որ
չմնաց, չինք ուտը:

Գաւիթ կցից³⁾ օխնիլ.— Հայ մեր, որ երկին, սուրբ եղեցի, ա-
նուն քո եկեցի, արքաութին քո զեցի, կամ բու որպէս երկից ի
ւերկրից. զհազ միզ անապազ, զոր տուրտ միզ ասուր, թող զմի
պարաս մի, որպէս մի տանի միզի փորձըթընէ, ալ փրկեա զմիզ
ի չարէ, զի բու ի արքաութին, զօրութին, փառք յաւիտեանս ա-
մէն: Անուն Յիսուսին Քրիստոսին, անուն Աստըծուն Աստուած:— Էն
քեառսուն կոպաշտ ին, Աստըծու անուն չըն գիտը տայ:

Նստաւ, խաց կերաւ, իրանք բերան չ'տուն: Գաւիթ էնա
քեառսուն զիտը խաց կերաւ, էրկու կարաս կէս զինին էլ մէկ
տեղ խմաւ: Քեառսուն մարդ ուրինց թրիք չըփլըցըցին⁴⁾, արին
սուփրի տակ խօսքիր մէկ էրին, ասին.— Գաւիթ խմաւ, սարխոչ-
ցաւ⁵⁾, քինի, զարկինք, սպանինք:

¹⁾ Օրհնեցէք: ²⁾ Հիւր: ³⁾ Սկսեց: ⁴⁾ Մերկացրին: ⁵⁾ Գինոզցաւ:

Գաւիթ զսուփրէն ծալից, բեարհաւից, իտի դէն, տեսաւ քեանսուն չիլախ¹⁾ թուր գեոյ սուփրի տակ. սուփրի տըկէն զքեանսուն թուրն էլ առից, ծալից՝ ինչ զթուղթ ծալիս. ծալից, էթալ ձիու թորբէն²⁾, էսաց. — Տանիմ, տ'էնիմ իմ ձիու նալը բղմար, տարին բասը:

Էն քեանսուն փալիւան շատ վախացան, շատ տրտման:

Գաւիթ էսաց. — Կուղէք, կանչիմ, խաց բիրիմ, տիւ էլ կիրէք: Ասին. — Ջանմ, ինչ տիւ կերար, մինք կշտացանք:

Էսաց. — Իմ էսած բան որ տիւ ասէք, Աստու անուն տէք³⁾, ամէն վըխտին⁴⁾ կ'կշտանէք:

Ասին. — Մինք չինք թըղնը միր չ'աստուած, բիւ Աստըծու անուն տայ:

Էսաց. — Որ տիւ Աստըծու անուն էք խայ, իս չըմ թըղնը Աստըծու պաշտող տիւ անէք, իս տ'անիմ (Խանդիւթ խաթինն աստուածապաշտ էր, կոսապաշտ էէր):

Խանդիւթ խաթինն լսաւ ձէն, էկաւ. էկաւ, էսաց. — Գաւիթ⁵⁾ տիւ էլ Աստուած կ'պաշտիս:

Էսաց. — Խա՛.

Որ էսաց «խա», խասաւ Գաւիթի գլեոխ պագնից. որ Գաւիթը գլեոխ պագնից, էն քեանսուն մարդ շատ ըռըկան, որ կէր՝ տաս տարով էր իկի, որ կէր՝ խինգ տարով էր իկի, որ կէր՝ իրիք տարով էր իկի. Խանդիւթ Խաթինին խղմաթարութին կ'էնին ուրինց խացով, ջրով, Խանդիւթ խաթուն որու խանէր⁶⁾ էնի կ'անէր:

Խանդիւթ խաթուն էսաց. — Իմ խէր, իմ ախպերն էլ կոսապաշտ ին, էսաց, համա իս էտու ջըհըթինին⁶⁾, էտու կորըձութինին, էտու մալին թմահ չ'էրը, իս էնու Աստըծուն թմահ էրը. էնու ճակատ պագըցը, տ'անիմ:

— Ա՛յ Գաւիթ, էսաց, բիւ նշան ինչ կը, որ աստուածապաշտ իս:

¹⁾ Մերկ: ²⁾ Տոպրակ: ³⁾ Տար: ⁴⁾ Փամանակ: ⁵⁾ Հաւանէր: ⁶⁾ Երիտասարդութեան:

էսաց. — Իս էն իմ, էսաց, յիշած իմ խոսքն ի գինին, Տէր կենդանին, Մարութայ բանձր Աստուարածին, խաչ պատրազին, վերար իմ աջ թիւին:

Էսաց. — Ընձը շանք տու:

Գաւիթ ուր թիւ¹⁾ էրաց, շանք իտու. որ շանք իտու, մտէ խաչ էնու թիւու վերայ էր: Խանդիւթ խաթիւն խասու, պագ-նից:

Էլաւ էրկու նշան, որ զԳաւիթ առնր:

Էն գիշիր Գաւիթ միտք վէ էսաց. — Աստուած, քի իմ կանչի, Օղան-Տողան²⁾ թագաւորու ասքար կեայ պիւլիւր Խանդիւթ խաթնը քեաղքին տնր, մարդ չ'կէրայ էնու ջՏար³⁾ տայ:

Խլխուն, ինչ աղօթքան բացուաւ, Խանդիւթ խաթիւն էլաւ իրիշից, տեսաւ՝ չադրքի պիւլիւր խօր քեաղքին դրած ին:

Խէր ճամբսից մատ Խանդիւթ խաթիւն, էսաց. — Խանդիւթ խաթիւն, քիւ մարդիրուց, ինչ էկած յ'նջիւ քի, գլխուուր էնիս, ըլնը, ասքրի խիտ կոխ էնր:

Խանդիւթ խաթիւն շատ էլաց, տրտմաւ, էսաց. — Ափսո՛ւս, իս Գաւիթն նշանիցի յիրեկուն, էլ մեկէնիր իմ խաթար³⁾ չ'ին էնի. ափսո՛ւս, Գաւիթ տ'երթայ սպանուր:

Էլաւ, քեառտուն էլ գեաղտիկ մեկ-մեկ տարաւ, էսաց. — Իս ձի տ'առնիմ, Գաւիթ չըմ առնը, կեացէք ասքարը յէնջիւ, կոխ էրէք:

Յըմէն էլ քեառտուն ասին. — Տիւ Գաւիթն իս նշանի, մինք չինք էրթայ. թըխ քիւ Գաւիթ էրթայ, կոխ էնր:

Պանչից լայնէն զԳաւիթ, առից, տարաւ. տարաւ էնդեղ, էսաց. — Գաւիթ, էսաց, իմ խէր ճամբսի, ասի՛ մեկ մարդ տ'եր-

¹⁾ Թիւ: ²⁾ Պատասխան: ³⁾ Խօսք, պատուէր:

²⁾ Ա. վարիանտով Չինմաչինի թագաւոր: Բ. վարիանտով՝ Օղան, Տողան տարրեր անձնաւորութիւններ են. «Մէկ Օղանայ թագաւորն ի, մեկ Տողանայ. Աջմու էն եանէն ին»:

Թայ, ասքրի խիտ կոխ Էնի. էս քեանսուն էլ մէկ քիւ յարով
չ'կեացին:

Գաւիթ վերուց, էսաց.— Էն կոխ իմ բան ք:

Գաւիթ էլաւ, խեծաւ Քիւռիկ-Ջալալին:

Խանդիւթ խաթիւն ճամբսից, էսաց.— Գարգախնիր կուծը-
ցէք¹⁾, թըն Գաւիթ չ'երթայ:

Գաւիթ Քիւռիկ-Ջալալին խեծուկ ի, որ էսաց «չէրթայ»,
Հրսից²⁾ «Հի» էրաւ, թուուց զՔիւռիկ-Ջալալին, զբազան ընցաւ
մաւ կըռուուն, քչից մեանչ չադրքիրուն, էզար. Էնքան զարկից, կու-
տուրից, Տեադ ու Հէսարից տիւս մարդ կուտուրից. շատ քչից,
տարաւ զատնացըցուց:

Էնդեղէն Օղան-Տողան թագաւոր դարձան վեր Գաւիթին,
բիրին զատնը խիտ զնջիլ թալիցին, Գաւիթ Էնդեղ բռնիցին: Են-
չըն բռնիցին. զինջիլ³⁾ թուուր օրինակ շինած էր, Գաւիթ քչից,
կինաց մէչ, ինչ ընկաւ մէչ, զնջիլի գլխոս գեոյ մէկ Օղան թա-
գաւուրը ձեռ, մէկ Տողան թագաւուրը ձեռ, Էնդեղէն կ'կանչին.
— Հայ, Գաւիթ բռնիցինք, Հայ, Գաւիթ բռնիցինք,— մէկ սհա-
թուան ճամբախ Գաւիթից զատն ին ջնջիլ գլխնիր բռնած, շըն գըխ-
չը կեան մօտխատ:

Յիրիկուան ժամանակն ի, աստղեր կ'երևան:

Չէնով-Յեովան էլաւ տիւս, Գաւիթ աստղին իրիշից. իրի
տիւս, իրիշից՝ Գաւիթ աստղ մտվաղիւր էր. կինաց, էսաց.— Կնիկ,
տ'երթամ յիտիւ Գաւիթին, Գաւիթ շատ նեղ տեղ ինկի, Էնու աստղ
մտվաղիւր ի:

Կնիկ էսաց,— Այ քիւ տուն աւիրի, կնչքանդար Գաւիթ իսամ⁴⁾
կ'էնիս. Գաւիթ նստի Խանդիւթ խաթնը կուշտ, կ'ուտը, կ'իսմը,
քէֆ կ'էնի, չ'ասը խրօտպէր կայ, եան չ'կայ. տիւ Գաւիթ իսամ
կ'էնիս. էսաց՝ իրի, քինի, քիւն քի իսամար կ'քինիս, էրազ Գաւիթ
իսամար կ'տեսնիս:

¹⁾ Փակեցէք: ²⁾ Բարկուձիւնից: ³⁾ Շղթայ: ⁴⁾ Հոգո:

Էն սհաթին էկաւ, քինաւ. էկաւ քինաւ, տեսաւ, որ Գաւիթ վեար ձիուն խեծուկ ք. խեծուկ ք, համայ Գաւթի էրկու ոս ընկած կարասը կարը մէշ, ինչըն կէնի, տիւս չի կեայ:

Գիշերուան կիսուն վի թռաւ, ահախաւ, էսաց.—Անիկ, իլի՛ ճըրագ կպու, իս տ'երթամ, Գաւթ նեղ տեղն ի:

Էն սհաթին էլաւ, ճրագ կպուց:

Չէնով-Յեովան էլաւ, առից ճրագ, կինաց ձիանցտարու թաւլէն. յառաջ էսաց.—Սիւ ձին, էսաց, զը¹⁾ չուր Բը²⁾ կ'խասըցիս Գաւթը լէշը վերայ:

Էսաց.—Աեախ ընց կեախ³⁾:

Էսաց.—Քիւ բերան կուտրէր, ընցկուն չ'ասէր:

Աինաց մատ կարմիր ձին, էսաց.—Աարմիր ձին, չուր յի՛ր զը կ'խասըցիս Գաւթը լէշին:

Էսաց.—Չուր վաղ կէսօրին:

Էսաց.—Քիւ բերան կուտրէր, ընցկուն չ'ասէր:

Աինաց մատ բող ձին, էսաց.—Բող ձին, չուր յի՛ր զձը⁴⁾ կ'խասըցիս Գաւթը լէշին:

Էսաց.—Չուր աղօթրան բացուր:

Էլաւ, զբող ձին բեշից տիւս, խեծաւ:

Էսաց.—Քիւ աչքիր խփը:

Աչքիր խփից:

Մէկն էլ էսաց.—Գէ բաց:

Ինչ աչքիր էբաց, տեսաւ վեար Գաւթին կանգնիր ի. կանչից.—Գաւթի, Գաւթի:

Էսաց. Հրամմէ:

Էսաց.—Տիւ ի՞նչի ինկիր իս կպու:

Էսաց.—Չբ՛ գիտը:

Էսաց.—Քիւ բերան կուտրէր, էսաց, յիշա իմ խացն ու գինին, Տէր կենդանին, Մարութայ բանձր Աստուարածին, խաչ պատարազին վեար Գաւթը աջ թիւին:

¹⁾ Ինձ: ²⁾ Երբ: ³⁾ Մինչև վաղն այս ժամանակ: ⁴⁾ Ինձ:

Ինչ էսաց՝ Գաւիթ էսաց.—Վ.ը՛յ, յիշեա իմ խացն ու գի-
նին, Տէր կենդանին, Մարութայ բանձր Աստուարածին, խաչ պատ-
րադին վեար Գաւթը աջ թիւին:

Էսաց.—Գէ՛ զքի թափ տու:

Ինչ էսաց, Գաւիթ զինք թափ իտու, զնձի ի կտուրքիք մէ՛) կի-
նաց յարաւել, մէ կինաց յարեմուտ:

Զինք խրօնսպէր էլան խրօնսպէր յիտիւ Օղան թագաւուրին
կինաց, Գաւիթ յիտիւ Տողան թագաւուրին: Բանիցին Օղան, Տո-
ղան թագաւուր, բիրին, բիրին, կապիցին, տուին յէռջիւ իրանց,
կ'կեան:

Ճամբխը կէտին էսաց.—Խրօնսպէր, արիւ տաքցաւ՝ իմ ջան տաք-
ցաւ, իս եամ՝), լեողկանամ, կեամ. տիւ մողիեամթ՝) կաց, չ'փա-
խին:

Էսաց:—Աղէկ:

Գաւիթ էլաւ, կինաց. չուր կինաց լեողկանալու, էկաւ,—խրօն-
սպէր էրկու թագաւորը վիղ կտրեր էր:

Գաւիթ էկաւ: Էսաց.—Զանմ, աչքիք բեալ բեալ էրին, է-
կին գեախ զը, իս վախացայ, վիղքիք կտրիցի:

Մէկ էլ տեսան՝ մէկ մարդ իկիր ի, հաս կ'վերուցի, կ'աչկի,
կ'թալը: Գաւիթ կ'կանչը, կ'ասը.—Յիտիւ վի՛ կան կ'կեաս, էն ինչ
տիւ յիտիւ կան կ'կեաս, իս սպանիր իմ (զԳաւիթ չի ճանչնայ,
Գաւիթ էնքան կուռի, իլի արընութմ), համա Գաւիթ էնու կ'ը-
ճանչնայ). էսաց՝ էն ինչ յիտիւ կան կ'կեաս, իս սպանիր իմ, արի՛
բնձը ան:

Էսաց.—Իս էնու սպանուկ լէշն էլ տեսնամ, քանց քե աղէկ
ը բնձը խամա:

—Որ անցկուռն ի, իս տիւ տը կուռիք:

Ելան, կուռան. կուռան, թող ու գիւման զգեաշտ բանից.

1) Մէկ: 2) Գնում եմ, կ'երթամ: 3) Զգուշացիր, պահիր: 4) Ա-
րիւնոտ:

ինչըն կօթ գիւթան թալիս, գիտին խրկիս¹⁾, ընցկուն ձիու վուտ-
քիրու յեռջիւ գեարն կ'ճղուը:

Շատ կուռան, իրար չաղթիցըն (Գաւթ սրտով չը զարկը,
ամա Խանդիւթ խաթիւն սպանիլիւ կ'զարկի):

Չիանցտարուց էջան տակ, խասան բեռչորի²⁾, գէն տարան,
գէն բրին, զԽանդիւթ խաթիւն իտի գետըն, զծիծ բունից, քեա-
մից. ինչ քեամից, իրիք պուտ արուն էնու ծծէն թափաւ գետըն.
խասաւ, գլեռիս պագնից, էսաց. — Հայ գեւ, ն'արիկ յերիկը փուխ,
ինչ տիւ իմ պնչէն խանիր:

Գոր ուրախացան:

Էլան, էկան ուրանց տուն: Խանդիւթ խաթընը տուն որ խա-
սան, ինք, խրօսպէր, Խանդիւթ խաթիւն իրիքեով էկան, նստան,
կերան, խման խաց գինին, ուրինց բէֆ էրին:

Խանդիւթ խաթիւն կանչից ուր խէր, ուր մէր, ուր ախպէր,
իպի էնդեղ, էսաց. — Էսա մարդն ի ասքար կուտրի, Օղան-Տողան
թագաւուրին էլ սպանի, էսաց, ինչ կ'տաս էսա մարդուն փա-
ռուն³⁾:

Խանդիւթ խաթիւնը խէր, մէր, ախպէր ասին. — Տիւ մի աղ-
ջիկն իս, քի տուիր ինք էսա մարդուն փառուն. Էրանայ չուր Բեան-
գիւժաճին էլ տուիր ինք քի ջճէզ⁴⁾:

Խարանիս էրին, կօթ օր կօթ գիշեր ուրինց բէֆ ուրախու-
թին էրին:

Էլան, ուղտիր բարձին, ձիանք սարկիցին. էն բեառսուն փե-
րիզն էլ էկան, Գաւթի ձեռ ոտ պագնիցին, ասին. — Խալալ ըլնը
քիղի խանդիւթ խաթիւն: — Մէկ աւուր ճամբախ էլ խատ Գաւ-
թին, Խանդիւթ խանըմին կեացին:

Էկան, Բեանդիւժաճին խասան (Բեանդիւժաճին էն աղջիկ
կարաղուլ էր գրի). աղջիկ էկաւ Գաւթի գէմ կտրից, էսաց. — Գա-
ւթ, տիւ իմ խօր գիւթնը խաց կերար, տիւ իմ իրիս չ'էկար:

¹⁾ Հերկես: ²⁾ Գօտեմարտ, ըմբշամարտ: ³⁾ Պարգև: ⁴⁾ Օժիտ:

տեսնէր. կեացիր, Խանդիւթ խաթիւն բե խամար բիրիր. եան տը կեաս, խատ ձի կոիւ ա'էնիս, եան շըմ' թըղնը՝ էրթաս:

Իսաց.— Իս մկայ կոիւ շըմ' էնը, (թաժայ¹⁾) խարս ու փեսայ ինք:

— Երա յի՞ր կ'կեաս կոիւ խիտս:

Իսաց.— Կիեամ տուն, եօթ օր կ'քնիմ Խանդիւթ խաթընը ծուց, վեար ութին կիեամ Բեանդիւմահին քիւ կոիւ:

(Աղջիկ էնու բեանդ էրաւ, անուն Քնաց Բեանդիւմահին. ա-
ռաջ Երճէշու էրկիր կ'ասին):

Իսաց.— Երի՛ յերտըւցի, որ աւատամ:

Գաւիթ յերտըւցաւ.— Յիշեա իմ խացն ը գինին, Տէր կեն-
դանին, Մարութայ բանձր Աստուարածին, խաչ պատրազին վեար
իմ աջ թիւին.— էնիկ շհադ կենայ, ութ օր լըմանայ²⁾, իս կեամ,
քիւ խիտ կոիւ էնիմ:

Գաւիթ առից զիւր կնիկ, զիւր մալ, էկաւ, Սասմայ քեաղաք
խասաւ. էն քեառսուն մարդն էլ խա Գաւիթին ին, էլան Գաւիթին
խղմաթքեար, էլան աստուածապաշտ:

Եօթ օր, եօթ գիշիր էլ էկան Սասմայ քեաղաք խարսնիս է-
րին՝ ուտիլ, խմիլ, միծ ու պղտիկ ուրախացան:

Ութ օր լըմացաւ, կոիւ մտէն կինաց:

Իսաց.— Խանդիւթ խաթիւն, իս ահդ իմ էրի³⁾ էս քեառսուն
տանիմ Գիւրջիստան, քեառսուն աղաբ աղջիկ փսակիմ վեար է-
տունց, որ աղջիկ ուրինց քէֆ կուզը:

Խանդիւթ խաթիւն էսաց.— Ա՛յ մարդ, տիւ իմ մեղաց տակ
մտար, ըզը խէրից, մէրից խանիցիր, ըզը բիրիր, էսա քեաղաք տի-
րիր, կ'թողնըս ըզը, էրթա՛ս. տիւ կ'երթաս, քի տղայ մ՝ էլաւ, իս
ի՛նչկոյ պատիմ:

Գաւիթ էխան մէկ ոսկը բազըանդ իտու, անգին քեարիրն
լէ մէչ:

Իսաց.— Թի՛ որ լաճ էլաւ, կ'կապիս վեար էնու աջ թիւին,

¹⁾ Նոր ²⁾ Լրանայ ³⁾ Երգուել եմ:

Թի որ աղջիկ էլաւ, էսաց, կ'ծախիս, կ'տաս, էնու տղի տղէն էլ
ուտը, չ'խըլըսնայ:

Ըստից քեառսուն մարդ, խեծան ձիանը, կեացին դեախ Գիւր-
ջիստան. կեացին, խասան չուրս ճամբախը արալըն, տեսան մէկ ծը-
րընուկ խալաւիւր նստիր է՛ղեղ. բարիւ տուին հազրաց:

Քեառսունի բարին էլ առից. էսաց.—Ա՛յ որտի, ո՞րտեղ
տ'երթէք:

Էսաց.—Տ'երթանք Գիւջիստան

Էսաց.—Ի՞նչ կը տ'երթէք:

Էսաց.—Տ'երթանք աղէկ աղջկան

Էսաց.—Աղէկ աղջիկ որ կ'ուզէք, կեացէք Հաղրբեջան

Ճամբախ շանք խու՛ւ էդա մէկ ճամբախ կ'իեայ Ռուսըւտան,
էդ մէկ ճամբախն էլ կ'երթայ Հաղրբեջան:

Էլան, կեացին դեախ Հաղրբեջան. կեացին Հաղրբեջանայ քեա-
ղաք, տեսան, որ քեառսուն աղջիկ էնդեխէն կ'կեան դեախ բախ-
չէն, հաճայ մէկն էլ մարդիւ շիւր ի խազը:

Բարիւ տուին հազրաց. բարիւ առից:

Էսաց.—Տիւ ի՞նչ մարդ էք, ի՞նչ կը, յիտիւ կան կ'կէք. էդ
մարդիր քիկ ինչկ'ին, —Գաւթին կ'ասը:

Էսաց.—Էն քեառսուն էլ իմ ախպէրքիրն ին

Գաւթիմ դարձաւ, էսաց.—Էդա աղջեկնիր քիկ ի՞նչ ին:

Էսաց.—Բիրազի իմ քիւրիքն ին:

Էսաց.—Բիրիս էդա քեառսուն քիւր տաս իմ քեառսուն ախ-
պօր:

Էսաց.—Տըւի քիւ քեառսուն ախպօր. իս կ'տամ, ձի կաւաթ
կ'յախթը՛ տանէք:

Էսաց.—Ատըծով կ'տանինք:

Աղջիկ դարձաւ, էսաց.—Ատուած ի՞նչ կը (չասուած գի-
տըն, Ատուած չըն գիտը, կոապաշտ ին):

Էսաց.—Ատուած էն ի, ինչ զմի ստեղծը, կ'պախը:

Էսաց.—Տիւ մի չ'ասուածքիր չի՛ք պաշտը:

Էսաց.—Չինք պաշտը, մինք Աստուած կ'պաշտինք:

Էսաց.—Որ տիւ տանէք իմ բիւրիր, մե չ'աստուածքիր կ'կեան, կ'ուր կ'էնին, ձի յօտէն կ'խլին:

Էլլաւ, իտու:

Էլլաւ, զքեանսուն աղջիկ առին, էկան Հաղորեջանայ:

Էդա միծ աղջիկ, ինչ մարդիւ շիւր կեր վերայ, էլլաւ ճամբիու իտի, դարձաւ մատ կոքիր, էսաց.—Պոքիր, մարդիր աղջկնիր փախցըցին, կերէք՝ դարձըցէք, բերէք:

Պոքիրուց ձէն էլլաւ, բնոռացին, ասին.—Աստուածապաշտ մարդիր չ'աստուածապաշտ մարդիրու աղջկնիր տարան:

Քեաղաք բիրադի ձիաւորուն, թիր բեաշիցին, ինկեան յիտիւնիր:

Գաւիթ ուր բեառսուն մարդով, քեառսուն աղջկնով էկան. մատ խալաւիւր նստած ին, կ'ուտին, կ'խմին, քէֆ կ'էնին:

Գաւիթ ինչ կ'էնը,—էրկրքիր կ'կէսը:

Էրաւ բեառսուն փայ. էտու էնունց, ամէն մէկու մէկ էրկիր մէկ աղջիկ: Ճամբից՝ յամէն մէկ կինաց էրկիր, ինչ Գաւիթ նշանակիր էր:

Գաւիթ մնաց էնդեղ մընակ: Մէկ էլ տեսաւ՝ բեաղքի միծ ու պղտիկ, որ ինչ կերէր թուր վիրուցէր, բիրադի էկան, Գաւիթը չուրս պիւլիւր բռնիցին:

Գաւիթ էլլաւ, զձին խեծաւ, ինկաւ յիտիւքիր. ինկաւ յիտիւքիր, քիշից, որ սպանից, որ փախըցուց, տարաւ, իցկից ծովիր,—մէկ չ'պրծաւ:

Գարձաւ, կինաց Հաղորեջան, կան էկաւ, իրիշկից, տեսաւ, ոմ մէկ աղջիկ կայ էդա տեղ, էն աղջկան պէս էլ աղջիկ խորոտ¹⁾ չ'կայ. տիւ չ'ըսիս, էն թագաւուրը աղջիկն ի, ինչ մարդու շիւր էր խագի, էն մէկէլքիր էնու կարաւաշքիրն²⁾ ին:

¹⁾ Գեղեցիկ: ²⁾ Աղախին:

Էդա մէկ աղջիկն էլ վիրուց, իտի ձիու քեամակ, առից, էկաւ չուր էկաւ ուր վըտան¹⁾ խասաւ, եօթ տարին լըմացաւ:

Տիւ չ'ասիս, Գաւթին տղայ իլի, աճուն դրած Մհեր:

Մհերն էլ վից տարեկան ի, ոտ թալի ի եօթին:

Էկաւ, ինչ էլաւ ուր վըտան, մէկ ձիաւուր էկաւ, Գաւթի դէմ կտրից, կանչից վեար Գաւթին, էսաց.—Տիւ էդ, խալիւր մարդ, աղջիկ դիւր կ'տանիս:

Գաւթի ընդէլ վախացաւ, չուր էն վխտին ախ չէր տըսի Էսաց—
«Շատ ծովերն էր մտի²⁾»,

Իմ ձիու ճանիր չէր թացուի.

Շատ սարիւր, քեարիւրն էր կան էկի,

Իմ յէնջիւ դէմ կանգընող չէր իլի.

Մէկ բարակ բադան իմ տըսի,

Շատ մօտէն իմ վախացի.

Սարիւր, ձիւրիւր, տիւ հընդաս³⁾ կէք,

Չը էսա բադանից ազատ էրէք»:

Չէ, ձին քչից դեախ տղէն. տղէն էլ ձին քչից զարկուան, կռուան էդա տեղ. թող ու դիւման էդա դեաշտ բունից:

Ի՞նչըն կ'կռուին.—ընցկուն կ'կռուին, ինչըն գիւթան թալիս ամառուան չուր գիտըն. չուր գիտըն, սարիւր, քեարիւր յընջիւ վուտրիւրուն կ'խալին. թող կ'ըլնը, էրկնուց իրիս կ'ընը:

¹⁾ Հայրենիք: ²⁾ Օգնութիւն:

³⁾ Բ. վարիանտով Գաւթի յայսպէս է երգում.

«Եփսոս, խազար ափսուս,

Ենցկում տըլի ծովիւր,

Ձիւր չ'էթըլ իմ ձիու ճանիր.

Եփսոս, խազար ափսուս,

Ենցկում դեաշտիւր քելըցի,

Թող չ'էտու իմ ձիու նալիւր.

Էկի, խասայ իմ խէրանց խէրանան,

Նիեաթ իմ էսա բարակ առուն ըզը խեղցի»:

Քեամին էզար, զԴաւթի մեանդիլ¹⁾ առից, տարաւ. տարաւ, էթալ Խանդիւթ խաթնը տոան յէռչիւ:

Խանդիւթ խաթիւն էլաւ տիւս, իրիշկից՝ թող ախշար բռնիր ը, իրիշկից գետըն՝ զէնու մեանդիլ տեսաւ. տեսաւ, առից, խուս էրաւ²⁾, էսաց.— ԸՆՂԻ՛, էս Դաւթի մեանդիլն ի:

Տեսաւ, որ գրգռուց ինկիր ի դեաշտ, տղէն էլ տուն չիւ Էլաւ, զինք ձին խեծաւ, քշից, կինաց. տեսաւ՝ թող ու դիւման կ'ըլանք, ձիանցտարու ոտաց ձէն կ'կեայ, ամա զադ չ'տըսնը:

Էն էլ կանգնաւ էնդեղ աղօթ.

«Սարիր, ձիւրիր ստեղծող Աստուած,

Տիւ զխէր ու տղէն իրարուց չոկէք.

Ին դաս խրիշտակ, ձի իմ կանչը,

Տիւ զխէր ու տղէն իրարուց չոկէք»:

Էլ չ'նկուան, հալա կ'կուռին:

Տիր ըմ էլ կանչից.

«Ո՛վ սուրբ մայր Աստուածածին, բիզի կ'կանչիմ,

Տիւ խէր տղէն մէմէկուց չոկիս, մէմէկ չսպանին»:

Ինչ կանչից, էրկուս էլ ձիուց էջան տակ, խասան իրարու քեռշորը:

Մհեր խասաւ, վերուց զԴաւթի, էզար գետըն. Դաւթի մէշաց էրակ կտրաւ, չուր մէշք ինի կինաց մեանչ խողուն: Ձեռ էտու ջերէն զտանակ էխան, զԴաւթի վիղ տը կտրէր:

Դաւթ էլաց, էսաց.— Ը՛յ տղայ, տիւ ըղը կ'սպանիս, իմ կտրը՝ ճը ձեռնէն Բնչըխ տը պրծնիս:

Էսաց.— Քիւ կտրի՞մ վո՞ղն ի:

Էսաց.— Իմ կտրի՞մ էն ը, ինչ ոսկը բազըանգ գեռոյ վեար թիւխն:

Տղէն իրիշկից վեար ուր թիւին, տեսաւ ոսկը բազըանգ վեար ուր թիւին կապուկ ի. էլաց, խասաւ, զԴաւթի գլեռիս պագնից էսաց.— Իմ խէր տիւն իս, իս բի մեղայ:

1) Թաշկինակ: 2) Հոտ քաշեց:

Խէր անիծից, էսաց.— Ընմախ ըլնիս, անժառանգ:

Ըստուած լաւ, կատարից,— անմախ մնաց, անժառանգ:

Էլան, դարձան ուրանց տուն. կերան, խման, ուրանց բէՓ էրին: Հազրբեջանայ թագաւորու աղջիկ փսակից վեար Մհերին. եօթ օր, եօթ գիշիր խարսնիս էրին, կերան, խման:

Մհեր էլաւ, առից զուր կնիկ, կինաց Հազրբեջանայ քեաղար, էլաւ թագաւոր:

Մնաց Գաւթի զինք ուր կնիկ^{*)}:

Էսաց.— Անիկ, աղէս փսակիցը, ճամբելիցը Հազրբեջան թագաւորութին. դիւշման չ'մնաց, ինչ իմ թուր չ'կտրից. տեղ չ'մնաց, ինչ իմ ձեռ, վուտ չ'դէպաւ. իլի մէ պղինձ ջիւր տաքցըցու, ինձը լեողկացըցու, իմ մէջ կ'ցաւը (մէչաց էրակ աղէն կտրիր էր):

Գաւթի էլաւ, կինաց, ուր շուրիր էխան, տը լեողկանայ. կնիկ իրիչից՝ էնուր խաչ ինչ թիւին, սիւցիր էր:

Անիկ էլաց, դժարացաւ:

Գաւթի էսաց.— Անիկ, ինչու դժարացար, լացիր:

Էսաց.— Մտէ խաչ վեար թիւ թիւին սիւցիր ի:

Էսաց.— Անիկ, իս յերտիւմակուտուր իմ իլի, յերտիւմ կերիր իմ խատ Բանայ խանրմին, տ'երթամ կոխ, չիմ կեացի. եօթ աւուր վերայ տ'երթէր, էս էլաւ եօթ տարի, նուր միտ ինկաւ:

Էն սհաթին էլաւ, զՔիւռիկ-Ջալալին խեծաւ, զթուր կէծակին կապից, կինաց. կինաց Բեանդիւմաշին, խասաւ Բանայ խանրմին:

^{*)} Ը. վարիանտի մէջ պատմուած է Գաւթի կոխը Մուսուլայ թագաւորի հետ. Գաւթի Գիւրջիստանից վերադառնալուց յետոյ՝ ճարգ է ուղարկու՞մ և կոխ է պահանջու՞մ. Գաւթի երդու՞մ է եօթ օրից յետոյ կոխ գնալը Բայց եօթ օրը եօթ տարի է դառնում: Ըստեղ էլ հանդամանքները միևնոյն են, միայն Գաւթին սպանում է Չմշկիկ-Սուլթանը: Գաւթի որդին՝ Մհերը վրէժ է առնում Մուսուլայ թագաւորից և Չմշկիկ-Սուլթանի վերայ «կազեազ» լցնելով սյրում է:

Բանայ խանութ էսաց.— Գաւիթ, տիւ յերտիւմ էր էրի եօթ օր, տարար եօթ տարի, իս մնացի առանց մարդ, քիւ ճամբախ կ'ի-րիշկիմ:

Էսաց:— Գէ՛հ, քիւ թաղարիք տիս, կ'ըլնինք մէյդան, կոուինք:

Էնիկն էլ էսաց.— Մէկ սհամ ժոհլամ տու, էսաց, իմ շիւ-րիր խաղնիմ, ասբար կապիմ, իկեամ:

Գաւիթ կապից զՔիւոիկ-Ջալալին վեար Բանայ խանըմը տուն, էսաց.— Ձին էստեղ կ'մնայ, իս կ'երթամ գիտ, լեողկանամ, կեամ, չուր քիւ շիւրիր խաղնիս, կեամ:

Էնիկ շիւրիր էխան, մտաւ գիտ՝ մաչ ջիւրուն լեողկանալու Բանայ խանութ էլ սերտ կրար շ'իտու¹⁾, ուր խօր գիւթնը խուփ, ինչ Գաւիթ էնով գիւթան էրաւ, քեառուն զիտր պողվատ ըս առից, էթալ քիրէն փշիլ իտու, կարմրցըցից,— աղէկ ըմ խուփ կարմրցաւ զխուփ առից, վեար կարմնչին ընցկուն կրակաթթմախ էզար Գաւիթը ջանին, էզար մէշաց,— ծակից, փուրն ինի²⁾ էկաւ տիւս:

Գաւիթ էնդեղ մեռաւ. էն մեռաւ— Էստուած ողորմի խո-գուն— էն մեռաւ, ձին էնդեղ ծոաւ, ծոակապ կարից, ինկաւ տիւս, ինչ քանդար խովիւ ոստտ իրի, նախրու³⁾ ոստտ իրի, տաւար, ձի,— բիրադի կուտուրից, կինաց, կանգնաւ յեռջիւ Խանդիւթ խամընը տանն Խանդիւթ խամուն էլ էլաւ, իրիշկից, տեսաւ՝ ձին իկիր ի, տէր խիտ շ'կայ: Էն սհամ խարար էրաւ, որ Գաւիթ կուրունն ի, չկայ:

Ձէնով Յեոզան էլաւ, էնդեղէն կանչից. էնուր ձէն կինաց Հադրբեջան, ինկաւ Մհերի ահանջ:

Մհեր էլաւ, ինչ քանդար ասբար որ կէր՝ ժողվից, խատ ուր առաւ, էկաւ. առաւ, էկաւ էնդեղ, կեացին Գաւիթ լէջը վերայ, տեսան՝ Գաւիթ սպանած ինս Ինկան Բեանդիւմահու կարմնջից չուր Իրան, ինչ որ կէր, բիրադի կուտուրիցին, ասի՞.— Էս մի Գաւիթ փուխ:

¹⁾ Չհամբերեց: ²⁾ Փորի միջով: ³⁾ Նախրորդ, նախադի:

Բանայ խանուճ իպի, էնու ծամիդ կապից Քիւռիկ-Ջալալու պուչ Քիւռիկ-Ջալալին ամէն փրթուջ մէկ էրկիր էթալ ծամիմ մնաց պուչ, իպի մօտ Խանդիւթ խաթիւն, տեսաւ:

Դարձան, բարձին Դաւթի լէշ, բիրին, Սասմայ տան յէոջիւ տրին: Խանդիւթ խաթիւն էսաց.— Յիտիւ Դաւթին, իս ախշար չ'մնար:

Էն սհաթին էլաւ ուր փանջարէն,— փանջարէն քեառսուն գեաղ բանձրը էր գեանուց, մէկ քեար էլ յէոջիւ էնու փանջարին էր, տաս'ւերկու գիւմէշ կ'կայնացըցին վեար քեարին, կ'լըւէն¹⁾, ընցկուն միժ քեար էր.— որ էլաւ փանջարէն, զինք վեար ուր գլխուն տփից²⁾ վեար քեարուն. գլեռիս չուր թիւքիբ մտաւ մեանչ քեարին:

Բիրին, քեարէն խանիցին,— քեար մնաց փուս. էնու գլխու տեղ էրկու արասը փիլայ կ'լցին, կ'ծիծին:

Ելան էրկըւը նաչն³⁾ էլ կապիցին յիրարու, քեառսուն տէր-տէրով քեառսուն վարդապտով, քեառսուն էլ սարկաւազով, քեաղ-քի ժողովուրդն էլ բիրադի խիտ, լալով, գեռուալով, ժամով, պատարագեով տարան, թաղիցին:

Դաւթի ումրն⁴⁾ էլ, ինչ կան էրի ախշար, եօթ խարիբ յիսուն տարի:

Ըստուած օղորմի Դաւթին, Խանդիւթ խաթիւնին.

Ըստուած օղորմի էնու խէր Մհերին,

Ըստուած օղորմի Բաղդասարին,

Ըստուած օղորմի Մըլքըսէթ քհանին,

Ըստուած օղորմի մի փիր վարպիտին, ինչ միզի շանք ի տուի:

¹⁾ Կըլուանային: ²⁾ Խփեց: ³⁾ Դագազ: ⁴⁾ Կեանք, հասակ:

Դ.

Մ Է Ե Ր

Դառնամ զողորմին կ'տամ իմ խէրիկ Դաւթին²⁾,
Որ ընձի կարգից¹⁾, մարդ դարձայ վեար ակշրին,
Շատ խիւբիւն էլ ընձը սովորացըցուց,
Իս ականջ չգրը իմ խօր խօսքին.
Դառնամ զողորմին կ'տամ էն մերիկ Խանդիւթ խաթիւնին,
Եօթ ամիս ընձը շախից վեար ուր սրտին

Դաւիթ զՄհեր կարգից, զՄհեր¹⁾, ուր նշանած Հաղորեջանայ
Ճամբախ ճամբխից:

Հաղորեջան կինաց, թագաւուրութիւն առից, թագաւուր նըս-
տաւ:

Էլլաւ, ըստ իտու²⁾ Գիւրջիտան, առից, կինաց Թիւրքիտան³⁾:
Յիտ դարձաւ, էկաւ, ուր տեղ նստաւ: Էդ էրկրքիր էլլաւ զըմէն
խարջդար³⁾. էնու սիրըցին: Եօթ տարին էնդեղ թագաւուրութիւն
նստաւ:

Զէնով-Յնովան էլլաւ թուղթ ճամբխից դեախ Մհեր, էսաց.
— Մհեր, Կուզըագնը ազգական տղէք էլլած ին, կտրճացած, էկած

¹⁾ Պասկեց: ²⁾ Երեսը դարձրեց դէպի ³⁾ Հարկատու:

^{*}) Երգ է Մհերի բերանից:

^{**}) Այդ անունով պատմողը հասկանում է «Աէզգիներն»,
Կովկասեան լեռների բնակիչները:

Սասմայ քեաղքի գեաւին¹⁾ կ'էնին. իս չիմ կէրի, իմ կվաթ չի յաղ-
թը, կ'ըլնիս, կ'կեաս, խասնիս:

Մհեր էսաց.—Ա՛յ կնիկ, կ'առնիս զիմ գիւրդ, տիւռ կ'ղնիս,
էստեղ կ'մնայ. ինչ փալաւանքտիր կ'կեան, գեորդ կ'տըմնին վեար
տաան, քեզի նեղութիւն չին իտայ, կ'ասին՝ Մհեր տան քի-
նուկ ի:

Էլաւ, բար իտու, Սասմայ քեաղաք էկաւ. որ էկաւ, Սասմայ
քեաղքին մօտ խասցաւ, էրաց, գժարացաւ: Յիրիկուան վխտին
էր, խրոխպէր տիւռ շինիր էր, քինուկ էր,—կանչից.

«Խէրախութ խրոխպէր, վիւր իլի^{*}),

Քիւ քինուց վիւր իլի,

աիւ հալա վիւր իլի»:

Ձէն ընկաւ խրոխպօր ականջ, մեանչ քինուց էսաց.—Մէկ բա-
րակ ձէն էկաւ, դիպաւ ականջիս, իմ խուր²⁾ քինու մէջէն զար-
կաւ:

Անիկ էսաց.—Ա՛յ ջանմ, ինչ ձէն. էսաց՝ Սասմայ տուն ի.
տեռն շինիր իս, հալա կ'վախանամ:

Խրոխպէր էսաց.—Հալբաթ կ'վախանամ, ծիրացիր իմ, իմ ազ-
գական մօտէս զասնացած:

Տիր ըմ էլ կինաց յերտտի վերայ: Անչից.

«Խէրախութ խրոխպէր, վիւր իլի^{**}),

Իմ թագաւուրութիւն գետին իմ դրի,

Քեաղաք իմ գեորդին թասլիմ իմ էրի,

Իմ գեորդ Պիւրջու աղջկան թասլիմ իմ էրի»:

Խրոխպէր վաղից, կինաց, Մհերի գլեռիս պագնից:

Էսաց.—Տիւ ինչըիս իս թասլիմ էրի, քիւ թագաւուրութիւն
թողի, էկի:

Էսաց.—Իս անցկուն իմ էկի, մէկ Աստուած խարար իլի, մէկ
հրէշտակ:

¹⁾ Ասիւ, վէճ: ²⁾ Խոր:

*) Երգ է: **) Երգ է:

Էսաց.—Քիւ գեորդ տեսո տրիր իս, նշան Բ՛նչ կը:

Էսաց.—ՋաւաՏիր քեար գեոյ իրիսին. Ինչ արիւ դպնը, լիւս կ'տայ, մարդ չըն քըշի վեար իմ տունն. Ինչ յիրկուէն կ'կեայ, էսաց, մեղոէ մոմիր կ'վառին. էլի լիւս կ'տայ, չըն կ'ըխշի քշի:

Էսաց.—Տիւ խաղա՛ր բարով էկար, էսաց, իս գիտիմ՝ քիւ խէր Գաւթի տեղ կ'բռնիս:

Էսաց.—Վո՞վն ի քենէ բան կ'քաստայ:

Էսաց.—Սուզբադնի թոռներն ին, էսաց, չուրս թոռ ին, չուրսն էլ նման կ'տան գազան:

Էսաց.—Իս էրթամ, էսաց, չուրսին էլ կ'բռնիմ, կ'բիրիմ. սպանիմ, թի՛) քի խամար բիրիմ:

Էսաց.—Յերկըւից՝) մէկ էրա, եա սպանը, եա բիրը:

ՄՏերն էլ խլիսուն էլաւ, ղիւր ձին խեծաւ, քշից, կինաց Լոռայ գեաշտ. Լոռայ գեաշտ տեսաւ Սուլբադնը էրկու միծ տղէն էկաւ. էնունց ճակ՝) տիրկաւան ը, որ նիտ թալիցին, էկաւ կպաւ Քիւռիկ-Ջալալը ոտաց սըմին՝) էլաւ զթիւր կէծակին զարկից, կէս կտրաւ, կէս մնաց ձիւ վըտին:

Էլաւ, զերկու տղէն էլ բռնից, կապից, առից, իպի խոօխպօր կուշտ, Քիւռիկ-Ջալալին ըզոտ վիրուց. ոտ վիրուց,—էսաց.—Էդ Բ՛նչ իլի բիւ ձիու ոտաց:

Աչից, տեսաւ գեոյ նետը կտուր գեոյ մէշն ը. էլաւ, իպի աղ-կութ, զմրութ՝) խալից, էլից էնու սըմի բրին՝),—ժրաւ, էլաւ քեանց յառաջ աղէկ:

Էխան, իպի ղՍուզբադնը էրկու տղէն, մին վնշից դոան էն եան, մէկ էն եան:

Էսաց.—Խրօխպէր, է՞լ կան, թի չ'կան:

Էսաց.—Էրկու տղայ էլ կայ, քեանց էս էրկուս շատ գազան ին էրկուս. էսունք չոկ կնկնից ին, էրկուս չոկ. Մարայ քեաղաք

1) Թէ: 2) Երկուսից: 3) Զէնք: 4) Սմբակ: 5) Թանգագին բարբ: 6) Վէրք: 7) Տեսակ:

դէն ին էն էրկուս. էսունք դէսն զաւթած, էսունք դէն ին զաւթած:

Էլաւ, զիւր ձին խեծաւ, բշից, կինաց, կինաց, Մարայ քեաղաք դէն ընցաւ. ընցաւ դէն, կինաց, տեսաւ, որ էդ էրկու տըդէն էլած քեառսուն դևի խիտ ինգիր, իրանց խեծնելու ձին էլ դաւայ ի: Կինաց էնդեղ, էդ քեառսուն'ւերկու յէռջիւ Մհերին էկան. բարիւ խուս, բարիւ առին:

Բարիւ առնիլու. յիտիւ ասին. — Մինք քեառսուն'ւերկու ինք, ախպէր ինք. տիւն էլ ըլնիս մի ախպէր, ըլնինք քեառսուն'ւիրիք ախպէր:

Էսաց. — Իս կ'ըլնիմ ձի խիտ ախպէր, համա, էսաց, ձե ազգ սորտեղաց ի:

— Էսաց. — Մի ազգ, որ կայ՝ Հալաբոյ ի, Հալաբոյ քեաղքը թագաւորը թոռնիրն ինք:

Էսաց. — Ի՞նչու արա քեաղաք չէք նստը:

Էսաց. — Մեզի մէկ քիւր կայ քեաղաք, էն քիւր զմի ճամբխիր ի, էսա տիղ նստիր ինք, մի քիւր թագաւորութիւն կ'էնը:

Էսաց. — Տիւ կ'կէք, ընձը շանք տէք, տեսնամ ինչ տարզ քիւրը, որ թագաւորութիւն կ'էնը:

Էլան, քեառսուն իրիքեով էլ կեացին դեախ իրանց քիւր. էլան, կեացին, ճամբախ կէս էլաւ. Կուզբադնը ազգական էրկու փալիւան կէն խատ քեառսուն դիւիրուն, էլան, չոկուան, ասին.

— Մինք չինք իկեայ:

Էլան, կեացին, Հալաբոյ քեաղաք խասան Մհեր, քեառսուն դև. տեսան, որ մարդ չկայ քեաղաք, ինսան չկայ, աւիր:

— Նարաբ¹⁾ էս ինչ թագաւորութիւնը, որ մարդ չկայ, էսաց. կինաց մտաւ մէկ օթախը մէջ, տեսաւ, որ քեառսուն կանթիւն պղինձ ըմ կայ էդա տեղ:

¹⁾ Ըրդեօք:

Էսաց.—Մինք քեանսուն ախպիր ինք, էրթանք սար մէկ-մէկ վէրու օշխար բիրինք, էնինք խորոված, ուտինք, չուր թագաւուր կեայ, տեսնանք:

Էլան, կեացին սար, մէշէն¹⁾, ամենմէկ մէկ վէրու օշխար բիրին, գինիցին, մուրթիցին, լցին մեանչ պղնձին:

Էնդեղ ահագին ալըը ամբար²⁾ կայ, էլաւ, էսաց.—Մէկ մե մօտէն խմուր էնը, մէկն էլ էրթայ փէտ բիրը, որ փուռ վառինք, խաց թխինք, մէկն էլ էստեղ միս իփի, մէկէլնիր, էսաց, էրթանք գեաշտի մէջ կան կեանք՝ գիւշման մարդ չ'կեսայ, միգի զարար ըմ տայ:

Մհեր էսաց.—Իս խմուր կ'էնիմ, խաց կ'թխիմ:

Մէկ ախպէր էսաց.—Իս կ'երթամ մէրին³⁾ փէտ կ'բիրիմ, փուռ կ'վառիմ:

Մէկէլն էսաց.—Իս կ'երթամ գիտուց առու կ'խանիմ, ջիւր կ'բիրիմ:

Էլաւ, կինաց գիտուց առու կ'խանը, ջիւր բիրի. իսկի ջիւր Հալարայ վերայ շէր գընդընը, ինչ որ կէր՝ խորու⁴⁾ ջիւր էր:

Մհեր էնդեղ խմուր էրաւ. տաս ջիւալ ալըր էրաւ խմուր. Մէկն էլ կինաց մերին, տաս արարայ ցախ շլկից, առից, իրի: Մէկն էլ կինաց, տաս բախ⁵⁾ ջիւր կապից առուն վէ, էկաւ: Մհեր փուռ վառից, խաց թխից. խաց թխիցին, պրծան, զտիւռ շինիցին, տաան նստան:

Ասին.—Մհեր, տիւ տոան կ'նստիս. մենք բիրադի ախպէր ինք, մի ճիւշ ախպէր տիւ իս, էս օր տիւ պախը. կանուխ⁶⁾ մինք կ'պախինք, մինք կ'երթանք չայիր, ձիանք խաղցըցինք:

Մհեր էնդեղ նստուկ ի:

Տեսաւ՝ մէկ բանձր պառաւ ըմ էկաւ:

1) Անտառ: 2) Հտեմարան: 3) Անտառ: 4) Զբոսար: 5) Բահ, փուր
բելու գործիք: 6) Վաղը:

Էսաց.— Բարիւ քի, բեռու տղայ:

Մհեր զարմացաւ, էսաց.— Ի՞նչ կ'ասիս բեռու-կնիկ¹⁾:

Էսաց.— Խոզուդ կուրբան իմ, էս էրկու օր կայ, թոնիր չեմ վառի, կեացիր էր սար բանջրի, մկայ քեացղացիր իմ, էսաց, մէ կտուր խաց տու, տանիմ, ուտիմ:

Էսաց.— Վայ տու բարով էկար, բեռու-կնիկ, տիւ բարով է-կար, առ քի բաշիս²⁾, կինամ տիւռ բաց, խաց թխուկ ի, միս իփուկ ի, բեանի մ' կէրիս՝ կի, դարձի, էրի:

Բաշիս առից, կինաց, տիւռ էրաց, նստաւ էնտեղ. առից խաց ուտիլ. մէկ դոր ըմ յիւշացաւ³⁾:

Մհեր էսաց.— Ջանքմ, էսաց, ըլնիմ, էրթամ խտիւ, մէ աւիլ բան չ'էնը:

Էլաւ, կինաց, տեսաւ էդա տաս ջիւալ այրը խաց բիրադի կիրիր, էդա տաս կանթէն պղնձը միս բիրադի կիրիր ը, նստիր ը:

Էկաւ, էսաց.— Քեռու-կնիկ, խացիր ո՞ր տեղն ի:

Էսաց.— Մեռնիմ քի, մէկ փուռ խաց կէր էստեղ, էրկու օր կէր՝ սար քեացղած էր, էկի էստեղ, բիրադը կերայ, հալա չ'կըշտացայ էլ, էսաց:

Էսաց.— Վայ, էսաց, մարդակիր պառաւ ինչ կ'ասին, էս ի:

Ըռըկաւ Մհեր. մէկ ճըլետորիկ⁴⁾ էղար. ճըլետորիկ ինչ էղար, գլետիս տեղէն թռաւ:

Էլաւ, նստաւ, շատ կասափամ⁵⁾ էրաւ, էսաց.— Ետպիրքիրս անօթի մնացին:

Մնաց յիրիկուան. ախպէրքիր էկան. էկան էնդեղ, իրանց բիւրոջ գլետիս տեսան, իրանց բիւրոջ բան գիտըն, ամա Մհեր չէր գիտը, միամիտ էր:

Ետին.— Մհեր, տիւռ բաց, էրթանք, խաց ուտինք:

1) Քեռուկնի: 2) Բաշանիք: 3) Ուշացաւ: 4) Եպտակ: 5) Միտք, հոգս:

Էսաց.—Ի՞նչ խաց ուտինք, իս էկի էստեղ թագաւորութիւն չ'տեսայր, մէկ մարդակիր պառաւ տեսայր:

Էսաց.—Ի՞նչ էրիր պառաւ խիտ:

Էսաց.—Ապանըցը, գլեռն կարիր իմ, էստեղ թալիր իմ:

Էսաց.—Որ տիւ խարցնիս, էսաց, մի քիւր ինչ մօրից էլաւ, մարդակիր էր, մի խէրն էլ մի մէրն էլ են ի կիրի, էսա բեաղքի միլամ¹⁾ բիրադի են ի կիրի. չուր Մըսր կիրի. էսաց, մէկ ատամ Հալարայ չուր Մըսր անիրիր ի:

Էդա բեառսուն մարդն էլ էկան, Մհերի ոտ ու ձեռ պագնիցին:

Ասին.—Մինք չինք կէրի էդ պառաւն յազմը, խէրանական²⁾ քեաղաք առնը, էդ յարով զքի բիրինք էնու սպանիլիւ. են էրկու մարդն էնու յախուն չոկուան, փախան. էսաց՝ կ'ուզիս քեաղքի թագաւորութիւն ան, մինք քիւ ծառէն մինչիւ օր մեռնիլիւն:

—Իս ձեռէ բան չըմ ուզի, ոչ թագաւոր կ'ըլնիմ, ոչ քեաղքի տէր կ'ըլնիմ. ամա ձեռէ կ'ուզիմ մէկն թագաւոր նստը էստեղ, մնացած խատ ձի կեան՝ էրթանք, Բաղդատայ քեաղաք տեսնանք. իմ խրօխպօր գերեզման, էսաց, գեոյ Բաղդատայ քեաղաքն (ինչ Բաղդասար Պղնձէ քեաղքէն էկիր էր, կեացիր էր էնդեղ մեռիր էր. քեաղաք շինիր էր, անուն գրիր էր Բաղդատ, զինք Բաղդասար էր³⁾):

Քեառսունով էլան, կեացին, Բաղդատայ քեաղաք խասան. տեսան, որ քեաղաք շինուկ ը, թաքմիլ⁴⁾ գրուկ ը. որ խասան, տեսան մէկ ծըրունուկ մարդ էնդեղ նստուկ ը:

Խարցնիցին⁵⁾, ասին.—Ի՞նչ կայ Բաղդատայ քեաղաք, Բաղդատայ թագաւոր որ մէկն ը:

1) Ժողովուրդ: 2) Հայրենի, հայրենական 3) Ատարեսալ, առանց պակասութեան 4) Հարցրին 5) Այս և հետեւեալ երկու հատուածները ցոյց են տալիս, որ Բաղդասարի ճիւղը շատ աւելի ընդարձակ պիտի լինի և պատմական ակնարկներով աւելի առատ:

Ասաց.— Իս թագաւուր չըմ ճանչնայ, ամա կ'ափն թագաւուր խալիֆի թոռնիքն ին:

Էսաց.— Տիւ Բաղդասարը գերեզման ընծը շանք տա՛ս:

Էսաց.— Իս չիմ կէրի շանք տայ, թագաւուրու օթախը դէմն ի:

Էդիկ էլաւ, կաստ էրաւ¹⁾ թագաւուրը օթախին, կինաց. տեսաւ՝ էն եանէն թագաւուր զինք օթախէն էջաւ տակ. էջաւ տակ, կանգնաւ, իրիշկից եդա մարդուն, շատ վախացաւ, կանչից, էսաց.— Տիւ Բնչ մարդ իս՝ իմ օթախը յէնջիւ կան կ'կեաս:

— Տիւ չը՞ս գիտը իս ինչ մարդ իմ, Մհերն իմ, Սասմայ տընէն իմ:

Էսաց.— Հօ— միտք էրաւ զինք, էսաց— մի թըւականը մէչ կայ, Սասմայ տնէն մէկ մարդ տը կեայ էտտեղ, էսա քեաղաք մի ձեռնէն առնը: Զինք որ լսաւ եդա խօսքիք, աչդ էրաւ, էսաց.— Քեաղաք քիւ ձեռնէն չըմ խըլը. Բաղդասար, էսաց, մի ազգէն ի, Սասման տնէն ի, էնու գերեզման ընծը շանք կ'տա՛ս:

Շանք իտու տարաւ էնդեղ,— տեսաւ:

Մհեր ձիուց էջաւ բախչի մէչ, գերըզմինն էրկրպագութինն էտու, աղօթ էրաւ (ինչ աղօթ էրիք ը, ձեռն էլ զարկիր վեար քեարին, տեղ կ'երևայ):

Թագաւուր էսաց.— Էս քեաղաք նստիր իմ, ամա դադարանք²⁾ չունիմ, շատ կ'կեայ վերէս:

Էսաց.— Վճփն ի, կոիւ կ'կեայ քիւ վերէն:

Էսաց.— Մէկ գիւ³⁾ ը, զինքն էլ չողախ⁴⁾ ի, մէկ ձեռնէն, — քեառսուն մարդ էլ խիտ:

Մհեր էլաւ, ուրբաթ օր ուր քեառսունն դե առից, կինաց յիտիւ կուպ⁵⁾ դիւուն. էլան, մէկ աուր ճամբախ կեացին:

Սուպդիւ էնենց կաւաթ ունէր, մէ ձեռնով զջաղչի բեար կ'թալէր, մէկ աուր ճամբախ կ'երթէր. բեանի մ' որ կ'թալէր, Մհեր ահանջ չէր էնի. կինաց, խասաւ:

¹⁾ Երեսը գարծրեց դէպի, ուղղուեցաւ: ²⁾ Հանգստութիւն, դադար: ³⁾ Դև: ⁴⁾ Վաղ: ⁵⁾ Խեղանդամ:

Պուպ դե կինաց, մտաւ մղազէն (շատ միծ էր կ'ըլնը, ո՛ր տաս խաղար ռիչար լցիս, հալա լիք չ'էնը):

Ինչ խոսաւ վեար տոան, էնուր խուան առից. էօօց.—Այ՛, էօի Բաղդասարի խուան ի, էկաւ կ'սպանը. Ասամայ տան խուանը: Գլեոխ տրից յախու, պառկաւ խիւանդ:

Էդ էլ էսաց.—Դե, ի՛նչ կ'խեծաս:

Էսաց.—Արիւու յէռջիւ շատ իմ քնի, գլեոխս կ'ցաւը, կ'խեծամ:

Էսաց.—Մը՛ խեծա, տիւ սուտ խիւանդ իս:

Էսաց.—Իլի՛ թըղարիք տիս, կոուինք:

Էսաց.—Իս կոիւ չըմ էնի (զատնու քեարոզ մընակ կոիւ կ'անէր, թուր չուներ):

Գաւթի՛ ընկաւ միտ, էսաց.— Իմ խէր ընձը վոսիաթ էրի,— յիշա՛ իմ խացն ը գինին, Տէր կենդանին, Մարութայ բանձր Ասուարածին, խաչ պատրազին վեար իմ աջ թիւին:

Դե էլաց, էսաց.—Տիւ յիշացիր խացն ու գինին, տիւն Բաղդասարի տղէն իս:

Էսաց.—Իս չիմ Բաղդասարի տղէն, իս Մհերն իմ, Գաւթի տղէն:

Ինչ էսաց՝ Գաւթի տղայ Մհերն իմ, դե վի՛ կանգնաւ. իրիք սհաթ կուրտան իրարու խիտ. էզար, զկուպ դիւու գլեոխ կտրից:

Խոսաւ էնդեղ, էզա քեառսուն տ'սպանէր Շիւրիբ խանին, տեսաւ, որ աղջիկ ին. ամէն իրանց խերանական անուն տուին,— ամէն մէկ թագաւուրի աղջիկ ին:

Առից զքեառսուն աղջիկ, առից զկուպ դեու գլեոխ, առից, իպի, իտու Բաղդասար թագաւորին, էսաց.—Քիւ դիւշման սպանըցը, արխային թագաւուրութիւն էրա:

Էսաց.—Որ տիւ սպանիցըր, թագաւուրութիւն քիւնը, քի վա՛յել ի:

Էսաց.—Չէ, իս Գաւթի տղէն Մհերն իմ, իս չիմ կէրի էստեղ նստը. նեա ժառանգ կայ ընձը, նեա մախ ունիմ:

—Աբա, ի՛նչ կ'ուզիս, ասա՛ տամ:

Էսաց. — Ընծը ունիմ քեառսուն ախպէր, էդա քեառսուն աղ-
ջիկ, — քեառսուն տէրտէր պտի բիրիս էստեղ, մէկ էկեղեցի շինիս,
կարգիս վիրենքտիր:

Բազդասարը գերբղձի վերայ քեառսուն խուրան ժամ շի-
նիցին, անուն գրին սըփ Սարգիս (մկայ էլ անուն սըփ Սարգիս
ը). քեառսուն տէրտէր քեառսուն աղջիկ փսակիցին Մհերը ախ-
պիրնիրու վերայ:

Թագաւուր էնդեղ էսաց. — Մհեր, քիւ ախպրնիր փսակիցըր,
մէ աղջիկ մ' ունիմ, տամ քիւ:

Էսաց. — Իս չիմ ուզը, մէ կնիկ ունիմ գեղյ Գիւրջիստան (ին-
կաւ միտ կնիկ. էսաց՝ վայ, ես էլ կնկան տէր իմ):

Էլաւ, առից ուր քեառսուն ախպէր, դարձան, էկան Հալարս
Մէկ ախպէր նստաւ Հալարայ քեաղաք թագաւուր, մէկէլ էլան
կեացին Մաքամագին. էնդեղ բոնիցին էրկու ախպէր՝ Կուզըաղնի
թոռնիր, էնունց ազգ կարիցին, գեոռիցին էնդեղ, անուն տրին Մա-
քամագին:

Մհեր էլաւ, էկաւ Զգիրու քեաղաք. Զգիրու քեաղաք մէկ
գիտ կայ, անուն Զգիրու Շատ. կ'ըլնը, որ խարիր քեառսուն գիտ
իրարու կ'խառնուը, կ'ըլնը մէկ գիտ:

Էդ գիտ իրիք անգամ զէն քեաղաք աւիրից: Մհեր էկաւ էն-
դեղ, մէկ միծ ահագին քեար իպի, կցից քեաղաքի քեամակ, գիտու
մէջ գիտ էլաւ էրկու ճեող, մկ ճեող էն եանէն կիւոյ, մկ էն,
էլ քեաղաք չի աւիրի: Բրջայ բալաքն էլ վնար էն քեարին շինից-
իսկի աւիրիլ չ'կայ էն բիրդին:

Համա մէկ ժամանակ տ'ըլնը Ըկն-Ընանին, տ'աւիրի քեաղաքն
Զգիրին:

Մհեր էլաւ, էկաւ Սասման տուն. էկաւ, տեսաւ՝ խոթապէր մե-
ռած ի: Կինաց Չէնով-Յեովանի գերբղձնը վերայ, էսաց.

«Խէրախուժ խոթապէր, վի՛ր իլի,

տին էլ վի՛ր իլի»:

Երկու անգամ էսենց կանչից: Երկու անգամ որ էսենց կանչից, ձէն էլաւ գերբղմեն, էսաց.— Կինն մատ քիւ խէր բան չ'ունիմ:

Էլաւ, կինաց վեար Գաւթի գերբղմեն. կինաց Գաւթը գերբղմենի վերայ տը կանչէր, չ'կանչից, դարձաւ յիտ (կնիկ միտ ինկաւ). դարձաւ, էկաւ զձին խեծաւ, քշից, կինաց Հաղբընջան: Կինաց, տեսաւ գերբղ ինչիս տրիր էր, էն տարղ մնացիր էր. մարդ չէր կեացի էնգեղ, բեաղաքն էլ աւիր ին, մարդ չկայ:

Կինաց, ուր տուն մտաւ, տեսաւ՝ կնիկ ուր թախտին՝) մեռիր ի:

Ձեռ էտու կնկան ձեռ, տեսաւ գիրուկ թուղթ ըմ կայ մէջ, էսաց. «Քնէ կ'ննդրիմ, ինչ ժամանակ տիւ կեաս ըղը տեսնաս, ընձը տանիս Սասուժ, Խանդիւթ խաթընը կուշտ թաղիս, էս կոպաշտ խողը մէջ չ'թորկիս»:

Էլաւ, էրարձ զմարմին, առից, տարաւ Սասմայ տուն. գրեղման շինից, Խանդիւթ խաթընը կուշտ թաղից: Էլաւ, քեառտուն պատարագ էտու ինիլ, Սասմայ տուն քեանի մ' որ մեռած կէն, բիրաղին պատարագ էրաւ:

Սասմայ անէն էլաւ, խեծաւ ուր ձին, էկաւ, Վանայ քեաղաք խասաւ:— Վանայ քեար մկայ էրկու թարանջայ՝) կայ, կ'ասին Քիւռիկ-Ջալալու ոտաց տեղն ի.— էնգեղ Վանայ քեարի տէր էկաւ յէոջիւ, էսաց.— Լստեղ քիւ տեղ չի, ըստիցայ գարձի, կինն:

Գարձաւ, կինաց վեար խոր գերբղմեն, կանչից.

«Խէրիկ, վեր իլի, խէր, վեր իլի,

աիս հալա տգեոյ վեր իլի^{*)}».

Սասման անէն բէրար²⁾ իմ իլի^{**)},

աիս հալա բէրար իմ իլի.

1) Գահ, մահճակալը 2) Սանդուղ: 3) Ընրաժին:

*) Երգ է:

**) Ըյս տողից երևում է, որ Մհեր զգուշացած էր իւր հայրենի ժառանգութիւնից, թէեւ սոյն վարիանտում տեղեկութիւն չկայ այդ մասին. բայց Ը. վարիանտում այսպէս է բացատրուած այդ

Խէրիկ, վեր իլի, Խէրիկ, վեր իլի,

Ախշրքի իրիսին բէրար իմ մնացի»:

Խօր գերըզմէնն ձէն էկաւ, էսաց.

«Թափի մաղն ի մուրուսէս,

Կեացի մջալն ի ձեռնէս»:

Էսաց.

«Խէրիկ, վեր իլի, Խէրիկ, վեր իլի,

Քիւ անիւշ խուտուն փափաք մնացը,

Քիւ անիւշ խօսքերուդ կարօտ մնացը,

Էնքան մընակ ախշար կացը»:

Էսաց.

«Կինս Հալարայ քեաղաք,

Քիւ խաց թխուկ ը,

Քիւ էմագ¹⁾ իփուկ ը»:

Էսաց.

«Հալարայ քեաղաք փայ չ'ունիմ,

Իմ բար ու փայ ծախիր իմ,

Իմ խուսք ու խարար տուիր իմ,

Հալարայ քեաղաք չ'իմ էրթայ»:

Կինաց վեար մօր գերըզմէին, էսաց.

«Մէրիկ, վեր իլի, մէրիկ, վեր իլի,

Իս իմ քիւ ծծի որաին,

Խօթ ափս ընձը շախիր իս վեար քիւ սրտին,

Շատ տանջանք իս քեշի վեար աստանւորին.

Շատ ման իմ էկի ախշար, շիւար իմ ման էկի,

Չ'տեսայ քիւ պէս քեաղցրիկ մէրիկ վեար ախշրին»:

Հանգամանքը. Չենով-Յեովանի կինը կամենում է խօսք մէկ անել Մհերի հետ, Մհեր չի համաձայնուում, ուստի և զօրգարուում է հօրեղբօր առաջ: Չենով-Յեովանը հաւատալով իւր կնոջ զօրգարուութիւններին՝ Մհերին տանից դուրս է անում:

¹⁾ Կերակուր:

Էսաց.

«Բօլ¹⁾ ի կան կեաս վեար դիւնիին²⁾,

Բօլ ի կան կեաս վեար դիւնիին,

Միր վիրջ մեռնիլն իս:

Էսաց.

«Մեռնիլ շիւնիմ վեար դիւնիին,

Անժառանգ, անմախ իմ,—

Մեռնիլ շիւնիմ վեար դիւնիինս:

Էսաց.

«Աինա՛ վանայ քեաղար.

Քիւ խաց թխուկ ը,

Քիւ էմագ իփուկ ը

Մինչիւ օրն դատաստանս:

Էլաւ, կինաց, խասաւ Ոստանայ կապան. որ խասաւ Ոստանայ
կապան, էնդեղէն,—մէկ իշխան կէր, կապ էթալ, զՄհեր կապից:
Մհեր ձիով ինկաւ կապ. ձին ինկաւ կապ, զինք դարձաւ, էկաւ
դեախ մօր գերըզման, խօր: Աինաց, էսաց.

«Մէրիկ, վեր իլի, մէրիկ, վեր իլի*»),

Ոստանայ Քիւռիկ-Ջալալին կապ ինկիս:

Էսաց.

«Յիշա՛ իմ զխացն ը գինին,

Տէր կենդանին,

Մարութայ բանձր Աստուարածին,

Վեար Մհերը աջ թիւին.

Քեշը զթուրն ը կէծակին,

Սղարկիս խրարայ³⁾ կապանին,

Համ կը կարիր ըզէրկամ, ըզոսկին,

Տիւ կ'երթաս խատ քիւ խացինս:

1) Բաւական է: 2) Աշխարհ: 3) Աւերակ:

*) Երգ է:

Դարձաւ, կինաց, խասաւ Ոստանայ կապան, էսաց.—Յիշա՛ իմ
խացն ը գինին, Տէր կենդանին, Մարութայ բանձր Աստուարածին,
խաչ պատրազին վեար իմ աջ թիւին,—դարկից, կտրից ըզարծաթ,
ըզոսկին, բլաւից¹⁾ մեանչ խող ու բեարին, ազատից Քիւրիկ-Ջա-
լալին:

Էլաւ, խեծաւ, խասաւ Վանայ դեաշտ. Վանայ դեաշտէն իրիշ-
կից, տեսաւ՝ մէկ ագուաւ կէր, կը խուսէր. նետ-անեղ առից, է-
զար, դիպաւ ագուաւին. ագուաւ բիրինդար²⁾ էլաւ Ագուա փա-
խաւ, էնիկ ձին բշից, յետիւ կինաց. խասաւ մէկ բեար, տեսաւ,
որ պեաց ի, մաղազայ ի. տեսաւ՝ ագուաւ մտաւ մաղազէն Չինք
զձին դարձիւց յիտիւանց վեար խողուն, ինչ դարձիւց, էլ ձիու
ոտ չդադրաւ վեար խողուն, կը թաղուէր:

Օր կէսօր էր. քեանի բշից, ձին թաղուաւ, մինչիւ յիրիկուան
Չձին առից, քեաշից մըղազէն, էսաց.— Խլխուռն լիւսնայ, ըլնիմ,
էրթամ խիտ որ մտաւ էնդեղ, ձիուց էջաւ տակ, զիւր ձին կա-
պից, տիւռ էկաւ իրար, մնաց մէջ, էլ տիւս չ'էլաւ, էլ Աստուած
ամբ³⁾ չ'էրաւ, որ գէր տիւս. մնաց էնդեղ, մինչիւ ակշքբի վիրջին
խող կը կըքուր⁴⁾, ձիու ոտաց տակ դայամիշ⁵⁾ կ'ըլնը:

Տարին մէկ անգամ յէրը տիւռ կ'ըացուր. էն ժամանակ ինչ
Էրուսաղէմ լիւս կ'կաթը, էն յէրի տիւռ կ'ըացուր. էն էլ Բնչ-
կը խամար կ'ըացուր.— Աստու խաթըր խամար—Մանանայ էրկնուց
կ'թափը էնդեղ, ինքն էլ կ'ուտը, ուր ձին էլ կ'ուտը. տարին մէկ
անգամ կ'ուտին, էլ չին քեաղցանայ:

Էն տեղաց անուն էլ Ագուաու բեար կ'ատին. ինչ ագուա
մտաւ էնդեղ, էն դիմաց կ'ատին Ագուաու բեար:

Տարին մէկ ամիս, Գիլան ամիս, էն քեարից էնու ձիու շեռ
կ'տայ տիւս:

¹⁾ Շուռ տուեց: ²⁾ Ա. Խրաւոր: ³⁾ Հրաման: ⁴⁾ Կ'ամբանայ: ⁵⁾ Գի-
մանալ:

Կարմիր կիրակին յիրիկուան պատարագ որ կ'ըլնը, էն յիրիկուան մէկ մարդ ուր ակնկան կ'ասը.— Իլի, կինա՞ ժամ, մում կ'զը¹⁾, օխնուկ²⁾ կրակ ան, բի:

Ախշիկ կ'ըլնը տիւս, կ'իրիշիը, կ'տեսնայ էդա բարէն ճրագի բուս կ'ըլնը. էդ ախշիկ էլաւ, կինաց էն ումուտով³⁾, թի ժեամն ի:

Մտաւ էնդեղ, զճրագ կ'զուց, դարձաւ, տը կէր, տիւս էկաւ իրար: Ախշիկ մնաց էնդեղ. տեսաւ, որ էրկնուց մանանայ իկի. Մհերն էլ առից, կերաւ, ձին էլ, ախշիկն էլ: Էլ չ'բեաղցացան, մինչիւ տարին թըմըմաւ: Էն աւուր օր ինչ տարին թըմըմաւ, ախշիկ զճրագ կ'զուց, ինչ տիւս բացուաւ, էլաւ տիւս, ճրագ առից, էկաւ տուն:

Խէր էսաց.— Ախշիկ, էսիկ տարին թըմըմաւ, տիւ յիւր⁴⁾ էր կեացի:

Ախշիկ էսաց.— Խէրիկ, չէ՞ ես նիւր կեացի. ճրագ կ'զուցիր, դարձիր իմ, իսկի չիմ նստիր էնդեղ:

Էսաց.— Էն տուն, ինչ տիւ կեացիր, վո՞վ կէր:

Էսաց.— Մէկ մարդ էր, ուր ձին:

Էսաց.— Էն տուն վերայ ինչ կէր:

Էսաց.— Մէկ կեռքով⁵⁾ ծառ կէր, էլ բան չ'կէր:

Նուր թարիփ⁶⁾ էրաւ, էսաց.— Էրկնուց մէկ կոլորակ բան կ'կէր, իս կերայ, նեա իս կ'բեաղցանար, նեա էն:

Ախշիկ տարին մնաց բեաղցած, էլ զագ չ'կերաւ, կուշտ էր.— նուր գիցան, թէ Մհերն ը, ուր ձին:



¹⁾ Կպցրու, վատիր ²⁾ Օրհնած: ³⁾ Յուսով: ⁴⁾ Ուր: ⁵⁾ Ընկուզի: ⁶⁾ Պատմեց, գովեց:

